



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА

С. М. Григорян

**ИССЛЕДОВАНИЕ НОВЫХ СЛОВ
"КНИГА ВОПРОСОВ"
ГРИГОРА ТАТЕВАЦИ**

ЕРЕВАН

Издательство "Гитутюн" НАН РА

2014

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

Ս. Ս. Գրիգորյան

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ
«ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»-Ի
ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ

**ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն
2014**

ՀՏԴ 809.198.1

ԳՄԴ 81.22

Գ 888

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
բանասիրական գիտությունների բեկնածու Ն. Գ. Հովհաննիսյան

Գրիգորյան Ս. Մ.

Գ 888 Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի նորակազմ բառերի
քննություն/Ս. Գրիգորյան, Եր.: «Գիտություն» հրատ., 2014 թ.,
75 էջ:

Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը Սուրբ Գրքի երբևիցե
գրված լավագույն մեկնություններից մեկն է:

Այս հետաքրքիր աշխատությունը արժևորվել է ժամանակակից-
ների կողմից՝ բազմաթիվ անգամ ընդօրինակվելով:

Աստվածաբանական, փիլիսոփայական, քերականական, մանկա-
վարժական, երաժշտական և այլ բնույթի հարցադրումները հեղինակը
կատարել է՝ դիմելով բազմաթիվ գեղարվեստական հնարանքների ու
միջոցների:

Պատահական չէ, որ միայն այս աշխատության մեջ գտնում ենք
գրաբարյան բառարաններում չվկայված մոտ երեք հարյուր նոր բառ:

ՀՏԴ 809.198.1

ԳՄԴ 81.22

ISBN 978-5-8080-1084-0

© Ս. Մ. Գրիգորյան, 2014

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»-Ի ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հայագիտությունն առ այսօր ամբողջությամբ չի ստեղծել համապարփակ մի աշխատություն, որը կբովանդակեր մեսրոպյան հայերենի ողջ բառագանձը: Մխիթարյան հայրերն առաջինն են ձեռնամուխ եղել այդ աշխատանքին, սակայն հետագայում պարզ է դարձել, որ գրաբարի բառապաշարը ամբողջությամբ արտացոլված չէ նախօրինակը չունեցող «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» երկհատորյակում: Հրաշյա Աճառյանը, գնահատելով այդ աշխատանքը, գրել է. «Անհրաժեշտ է ունենալ մեսրոպյան հայերենի ամբողջական համաբարբառը, ուր լեզվի բոլոր օրինակները մանրամասն հավաքված ու դասավորված լինեն: Վիեննայի Մխիթարյանները կազմել են այդ աշխատությունը, բայց դա գտնվում է միայն իրենց մոտ ձեռագիր վիճակում, որովհետև այդպիսի ակադեմիական աշխատություններ անհրապարակելի են»¹:

Արդի տեխնիկական միջոցները առաջիկայում, հավանաբար, հնարավորություն կընձեռեն մխիթարյան հայրերին՝ շրջանառության մեջ դնելու շուրջ երկու հարյուր տարի իրենց հրապարակմանը սպասող անգնահատելի նյութերը, սակայն հայագիտության համար խիստ կարևոր են նաև այն աշխատանքները, որոնք արդեն իսկ ընթերցողի սեղանին են դնում գրաբարի բառապաշարը համալրող նոր ուսումնասիրություններ:

Բառի պատմությունը, ինքնին, կարող է բավականաչափ տեղեկություն տալ արտալեզվական այն փոփոխությունների մասին, որոնք պատճառ են դառնում բառիմաստի տեղաշարժի, փոփոխության կամ նոր իմաստի ձեռքբերման, այսինքն՝ ստեղծելով մեսրոպյան հայերենի լիարժեք բառարան՝ բոլոր վկայությունների ներառումով, բառի պատմության մեջ մեծապես կարելի է տեսնել նրա ժողովրդի պատմությունը. Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի (այսուհետ՝ **ԳՏԳՀ**)² համաբարբառը կազմելիս, մենք ավելի քան համոզվեցինք, որ նմանատիպ եզրակացություն կատարելու բազմաթիվ փաստեր կան:

Հայտնի է, որ Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը Աստվածաշնչի երբևիցե գրված լավագույն մեկնություններից մեկն է: Մեկնությունն ինքնին թելադրում է, որ շարադրանքը պետք է լինի բացատրական, մեկնողական, իսկ շարադրանքի սկզբունքներից մեկը՝ ընթերցողին հասկանալի լինելը:

¹ Գ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 92:

² Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ.Պոլիս, 1729, էջ 767:

Հետամուտ լինելով Սուրբ Գիրքը առավելագույնս ընթերցողին հասկանալի դարձնելու խնդրին, Տաթևացին բավականաչափ հաճախ է դիմել բառաբացատրությունների, բառամեկնությունների, հոմանիշների և մեծաբանակ նորակազմությունների:

Ներկա աշխատությանը ներկայացվում են Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում տեղ գտած նորակազմ բառերը: Ամբողջությամբ ներկայացնելու համար դրանք բերվել են երկու մասով՝ նախկինում վկայվածներ և բառարաններից դուրս մնացածներ: Առաջին մասում երբեմն էլ կարիք է եղել անդրադառնալու նախկին ուսումնասիրողների կարծիքին՝ նոր փաստեր ունենալու կամ նոր քննություն կատարելու առիթով:

Մինչ այս ուսումնասիրությունը Տաթևացու գրական ժառանգության նորակազմ բառերին անդրադարձ կատարել են Հրաչյա Աճառյանն իր «Հայերեն գաւառական բառարան»³, «Հայերեն նոր բառեր հին մատենագրութեան մէջ»⁴, «Հայերեն արմատական բառարան»⁵ աշխատություններում, Ռուբեն Ղազարյանը և Հենրիկ Ավետիսյանն իրենց համահեղինակած «Միջին հայերենի բառարան»-ում⁶, Լավրենտի Հովհաննիսյանն իր «Գրաբարի բառարան, Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր»⁷ աշխատության մեջ:

Միայն Տաթևացու բառագործածությամբ Հրաչյա Աճառյանն իր «Հայերեն արմատական բառարան»-ում (այսուհետ՝ **ՉԱԲ**) վկայակոչում է, օրինակ, **ԱՆՎԱՆԱԿ, ԱՐՏԱՔՆՈՑ (anus), ԳԻԹՎՈՐՆ, ԳԻԺ, ԹՕՇՈՒՄՆ, ԼԻՍԵՆԱՍՁԵՒ, ԼՈՒՍԱՅՈՒ, ԿԱՐԾՈՏ, ՄՂՏԱՏԵՍԱԿ, ՊԱՏԿԵԼ, ՈՒՍՏԵՍ, ՍՆՔՆՈՏ, ԱՐՏԱԿՐԱՆՔ, ՓՈՇԻՄԱՆԻՄ, ՔԱԼԱՍԻԿԷ, ՔԱԿԱՆՕԹ, ՔՆԱՓ** բառերը:

14-15-րդ դարերում ապրելու և ստեղծագործելու փաստը Ռ. Ս. Ղազարյանին և Հ. Ս. Ավետիսյանին իրավամբ իրավունք է վերապահել Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության բառանյութն ընդգրկել «Միջին հայերենի բառարան»-ում (այսուհետ՝ **ՂԱՄՀԲ**): Չժխտելով միջին հայերենյան բառանյութի առկայությունը Գրիգոր Տաթևացու գրական ժառանգության մեջ, այնուամենայնիվ, փաստ է, որ Տաթևացին գրաբարալեզու

3 Հ. Աճառյան, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913:

4 Հ. Աճառյան, Հայերեն նոր բառեր հին մատենագրութեան մէջ, հ. Ա, Բ, Վենետիկ, 1913, 1926:

5 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1-4, Երևան, 1971-79:

6 Ռ. Ս. Ղազարյան, Հ. Ս. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Երևան, 2009:

7 Լ. Շ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան, Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010:

ստեղծագործող է, քանի որ **ԱՂԱՄԱՍՏԵՂԾ, ԱԶԳԱԶԻՆՁ, ԱՂՈՒԵՍԱԲԱՐՈՅ, ԱՅԼԱՄԱԶ, ԱՆՄԿՐՏԵԱԼ, ԱՐՉԱԿԱՔԱՅԼ, ԱՐՈՒԲԱՆԵՂԴ, ԲԱԶՄԱԿՈՒԼ, ԲԱԶՄԱՍԱՅՐ, ԲԱՐՉՐԱՄԵԾԱՐ** և բազմաթիվ այլ նմանատիպ բառերով, որոնց պարագայում, ի դեպ, աշխատության հեղինակները վկայակոչում են Գրիգոր Տաթևացուն, պետք է համալրված համարել գրաբարյան բառարանները, առավել ևս, որ հատկապես գրաբարյան բառագանձը լավագույնս արտահայտող «Նոր բառգիրք Յայկազեան լեզուի» աշխատության մեջ, միջնադարյան հեղինակների կամ միջնադարյան աշխատությունների բառանյութի ներառած լինելու փաստն առկա է («Աղօթամատոյց գիրք Բենիկ անուն վարդապետի ի միջին դարս...», «Մխիթարայ Ապարանցւոյ կամ ֆրա Մխիթարչի յԱպարաներ գեղջէ և ի վանայ ջահկեցւոց ունիթոռաց ի սկիզբն **ԺԵ** դարու...»), միջնադարյան երազահաններ, աղթարքներ և այլն):

Համեմատությունը **Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր»** (այսուհետ՝ **ԼՀԳԲ**) աշխատության հետ ցույց տվեց, որ, օրինակ՝ «**ԱՆԹԱՐՄԱՅ, ԱՆՀԱՏՈՂՈՒԹԻՒՆ, ԱՈՆՉԱԿԱՆ, ԲԱՅԲԱՐՉՈՒԹԻՒՆ, ԿՈՊԻՏ, ՄԻՋԱԿՕՐԷՆ, ՊԱՏԱՐԱԳԵԼԻ, ՓՈՒՆԱՐԿԱՊԷՍ**» բառերի դեպքում հեղինակը հղում է Գրիգոր Տաթևացուն (այլ աշխատությունների), ինչը մեկ անգամ ևս հաստատում է այդ բառերի՝ Տաթևացու հեղինակած լինելու փաստը: Գրիգոր Տաթևացու նորակազմ բառերից շուրջ չորս տասնյակի դեպքում **Լ. Հովհաննիսյանը** վկայակոչում է մեր հեղինակած «Նորահայտ բառեր 14-15-րդ դարերի մատենագրության մեջ /Գրիգոր Տաթևացի/» աշխատությանը, որոնց դեպքում տեղում տրվում են հղումներ:

Վերոնշյալ աշխատություններից բացի դիմելով երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ին (այսուհետ՝ **ԵՄԲՀ**), Ստեփանոս Մալխասեանցի «Հայերեն բացատրական բառարան»-ին (այսուհետ՝ **ՍՄԲԲ**)՝ հետապնդել ենք մի այլ նպատակ. տեսնել խնդրո առարկա բառերի պահպանված լինելու չափը հետագա շրջաններում մի կողմից՝ գրաբարյան բառարանների, մյուս կողմից՝ արդի հայերենի համեմատությամբ: Գրաբարյան բառարաններում չվկայված նորակազմ բառերից Ստեփանոս Մալխասեանցի «Հայերեն բացատրական բառարան»-ում բերվում են օրինակ՝ **ԱՂԵԳՈՅՆ, ԲԱՑՈՐՈՇԱԿԻ, ԳՈՅԱՑՈՒՄՆ, ԴԻՐԱՍԱՅՐՈՒԹԻՒՆ, ԶԳԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ԶԵՂԾՈՒՄՆ, ԷԱՎԱՍԱՊԷՍ, ԹԼՓԱՏՈՒՄՆ, ԻՆՔՆԻՄԱՍՏ, ԾՆՈՒՄՆ, ԿԱՍՈՒԹԻՒՆ, ԿՈՂՈՊՏՈՒՄՆ** բառերը: Մյուս կողմից՝ Տաթևացու -ելի վերջածանցով կազմած նորակազմությունները Ստեփանոս Մալխասեանցի

«Հայերեն բացատրական բառարան»-ում հիմնականում վկայված են, և դրանց զգալի մասը այսօր էլ գործածական է:

Կան սակավաթիվ դեպքեր, երբ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի»-ում (այսուհետ՝ **ՆԴԲ**) չվկայված բառը վկայում է Առձեռն բառարանը (այսուհետ՝ **ԱԶԲ**). այս դեպքում բառը բերվել է, քանի որ սկզբնաղբյուրին հղում, ինչպես հայտնի է, Առձեռն բառարանը ևս չի կատարում:

Բարբառներում, եթե վկայակոչել ենք Տաթևացու նորահայտ բառերը, ապա այս դեպքում էլ փորձել ենք ընդգծել այդ բառերի կենսունակ և հայերենի լեզվամտածողությանը հարազատ լինելը: Խիստ սակավաթիվ են փոխառյալ ձևերը:

Աշխատության մեջ ունենք ութ անստույգ բառ. **ԱՂԱՐՈՒՔ, ԵՍԹԱՆԱ-ՆՈՒՆԴՐԻ, ԿԵՆԴՐՈՒՐԱԾԻՆ, ՅԻՋԱՋԵՄ, ՉԷՁՈՏՔ, ՍԻՄՔՈՒՅՏ, ՏՍՈՐԻՍ, ՓՕՍՏԱՁԻՍ**, որոնք բերվում են աստղանշանի (*) տակ:

Իմաստային դաշտերով դիտարկելու դեպքում նորակազմ բառերի մեջ մեծ թիվ են կազմում ծիսական բառերը, որոնց մեջ կան հետաքրքիր տեղեկություններ այս կամ այն ծիսակարգի վերաբերյալ (**ԳԵՐԵՋԱՆ-ՕՐԴՆԷՔ, ԽԱՉՕՐԴՆԵԼ, ԽՆԿԱՐԿՈՒՄՆ, ԾՈՍՏՕՆ, ԿԻՍԱՓՈՒՄՆ, ՀԱՂՈՂԱ-ԴՐԱՄ, ՀՈԳԵԳԱԼՈՒՄՆ, ՄԱՅՐՕՐԴՆԷՔ, ՄԿՐՏԵԼԻ, ՅՈԳԵՂԱՆԳԻՍՏ, ՈՐԹԱ-ՊԱՇՏ, ՈՒՐԲԱԹԱՋԵՆ, ՋՐՕՐԴՆԷՔ, ՏՆՕՐԴՆԷՔ**): Հայագիտության մեջ հայտնի է Մաղաքիա Օրմանյանի «Ծիսական բառարան»-ը⁸, սակայն այստեղ նույնպես Տաթևացու վկայությունները նկատի չեն առնվել՝ չնայած մեկ-երկու ակնարկ ունի:

Ինչպես որոշ նորակազմ բառերի դեպքում, այդպես էլ առհասարակ, բազմաթիվ են դեպքերը, երբ Տաթևացու բառագործածությունները օգնում են հաստատելու այս կամ այն տեսակետը. հասկանալու բառի նախնական իմաստները. օրինակ, Տաթևացին «գերազանցող, շատ» իմաստով գործածում է **ԱԻԵԼ** բառը, այն դեպքում, երբ մատենագրության մեջ այդ իմաստով այն հիմնականում հանդիպում է **ԱԻԵԼԻ** ձևով. «**ԱԻԵԼ**» բառաձևը Հրաչյա Աճառյանն իր «Հայերեն արմատական բառարան»-ում համարում է «արմատ առանձին անգործածական», բնիկ հայերեն բառ: Անգործածական դառնալու համար բառը բավականաչափ երկար ճանապարհ պետք է անցներ, հետևաբար ենթադրելի է, որ «**ԱԻԵԼ**»-ը ավելի վաղ կիրառություն է ունեցել: Կամ՝ **ՊԱՏԿԵԼ** (բազմապատկել) բառի դեպքում «Հայերեն

8 Տես Մ. Արք. Օրմանյան, Ծիսական բառարան, Երևան, 1992:

արմատական բառարան»-ը, ապա և՛ Ռ. Ս. Ղազարյանը, և Յ. Մ. Ավետիսյանը «Միջին հայերենի բառարան»-ում հղում են Տաթևացուն. առաջինը «Գիրք հարցմանց»-ին, երկրորդը՝ «Գիրք քարոզութեան» Ձմեռան հատորին: Ստեփանոս Մախասեանցը «Հայերէն բացատրական բառարան»-ում այն բերում է «հագուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ՝ «կուտել, բարդել» բացատրությամբ: Եվ չնայած այլ աղբյուրներ այս բառի առանձին գործածությամբ վկայակոչում չունեն, այնուամենայնիվ, բառի երբեմնի գործածական լինելը կասկածից վեր է, ենթադրելի է սակայն, որ առանձին արմատը ավելի վաղ կիրառություն է ունեցել:

Ունենք բառակազմական առումով հետաքրքիր **ԱՋՈՒԱԾ(Ք)** բառը՝ «աշակողմյան, աջ կողմից հարող, ածող» իմաստով: Բառը, հավանաբար, ստեղծվել է **աստ-ու-ած (աջ-ու-ած(ք))** բառի կաղապարի համաբանությամբ: Առձեռն բառարանը վկայում է «**ԱՋՈՒ**» ձևը՝ «աջ» բացատրությամբ: Նույնկերպ **ՀԱԼԱԾՈՒ** բառը «հաված, ձուլածո» իմաստով, որն էլ հավանաբար, ստեղծվել է գրաբարյան «**ՁՈՒՂԱԾՈՒ**» (ձուլվածք) բառի համաբանությամբ: Որևէ բառարան վկայություն չի տալիս:

«Հայերեն արմատական բառարան»-ում անդրադառնալով **ԱՐԵՒ** բառին՝ Աճառյանը գրում է. «արեգակն աստղն է, իսկ **արև՝ նրա լոյսը**»⁹: Տաթևացու «**ԱՐԵՒԱՊԷՍ**» նորակազմությունը հաստատում է անվանի հայագետի կարծիքը, չնայած այս բառով Տաթևացուն նա չի վկայում. «Իսկ տիւ և գիշեր, այսինքն արևապէս հասունն նոցա՝ տիւ է համարեալ. և անհասութիւն խորոցն աստուծոյ՝ գիշեր»¹⁰, ըստ այդմ՝ «արևապէս» պետք է հասկանալ՝ «լուսի նման, ճառագայթակերպ, լուսակերպ»:

ՁԿՆԱԿՈՒԼ բառը Տաթևացին օգտագործում է գիշատիչ խոշոր ձուկ իմաստով. «**Ձկնակուլքն** մեծամեծք են որք կլանեն զմանունս»¹¹, իսկ «**ՁԿՆԿՈՒԼ**» ձևով արդի հայերենում լայնակտուց ձկնակեր թռչնի են անվանում:

ՕԺԻՏ բառի պարագայում ժամանակին Նիկողայոս Ադոնցի ոչ այնքան համոզվածությամբ հնչեցրած կարծիքը, որ «Հնարավոր է, որ օժիտ բառը հայերենում ևս գործ է ածվել այն նվերի իմաստով, որ փեսացուն տալիս է

9 Յ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Ե., 1971, էջ 311:

10 Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 767:

11 Նույն տեղը, էջ 365:

հարսնացուին...»¹² մենք կարողացանք դրա հաստատունը գտնել Տաթևացու վկայակոչմամբ. փեսացուի կողմից բերված հարսանեկան նվերը դեռ նրա օրերում կոչվել է «օժիտ». «օժիտքն ի փեսայէն լինի տուեալ»¹³:

Անկասկած բերվող փաստերը արձանագրում են, որ Տաթևացու գրական ժառանգությունը անսպառ շտեմարան է՝ ուսումնասիրելու հայերենի բազմաշերտ հարստությունները:

Նկատի ունենալով, որ շատ բառարանագիրներ, օրինակ, Նորայր Բյուզանդացին «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» երկհատորյակը հեղինակային վերամշակմամբ¹⁴ համալրել է ոչ միայն բազմաթիվ նախածանցավոր, վերջածանցավոր բառերով, այլև՝ պատճառական, կրավորական բայաձևերով, անցյալ դերբայաձևով՝ դրանք դնելով իբրև գլխաբառեր, մենք նույնպես ներկա աշխատությամբ չենք խուսափել ներկայացնել դերբայաձևերը, հատկապես, որ դրանցից շատերը կենսունակ են առ այսօր:

12 Տե՛ս Ա. Գրիգորյան, Պատմական քերականության հարցեր, Գրիգոր Տաթևացի, Ե., 2002 թ., էջ 138:

13 Տե՛ս Ա. Գրիգորյան, Պատմական քերականության հարցեր, Գրիգոր Տաթևացի, Ե., 2002 թ., էջ 138:

14 Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի սրբագրուած եւ ճոխացուցած Ն. Բիւզանդացու ձեռքով. հրատարակության պատրաստեց Մարտիրոս Մինասեանը, Ժնև, 1990:

ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

ԱՂԱՄԱՍՏԵՂԾ, ա. Ադամին ստեղծող: Հինգերորդ գաղամաստեղծ ձեռք իւր տարածեաց տէրն ի վերայ խաչին. և արտաքս ընկեց զչար իշխանն. և կորզեաց զմարդիկ յիշխանութենէ նորա: - 503. Վկայում է **ՂԱՄՅԲ**-ն և հղում Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան», Չմեռան հատորին (Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Չմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740, այսուհետ՝ **ԳՏԳԶ**): Վկայում է նաև **ԼԳԳԲ**-ն և հղում՝ Եղիշէ, «Մեկնութիւն արարածոց» աշխատութեանը:

ԱԶԱՏԱՊԷՍ, մ. Ազատ կերպով, ազատորեն: Եօթներորդ՝ վասն զգայութեանցն, որ ամենեքին յառաջ հեղուն յուղեղեն, և ագատապէս տեսանեն և իմանան. զի թէ զլուխն և ուղիղն ի վայր էր քարշեալ և կորացեալ՝ ո՛չ կարէր ուղղակի զգալ և իմանալ. որպէս այլ կենդանիք: - 233. Վկայում է միայն **ՂԱՄՅԲ**-ն և հղում **ԳՏԳԶ**-ին:

ԱԶԱՏՈՒՄՆ, գ. Ազատելը, ազատագրելը: Այլ զտեսութիւն սրբոցն առաւելու լոյսն շնորհաց և մաքրութեան. և ագատումն ի թանձրութեանց մարմնոյն: - 685. «Հայերէն գաւառական բառարան»-ում Հ. Աճառյանը գործածական է համարում Ղարաբաղի բարբառի համար:

ԱԶԳԱՋԻՆՋ, ա. Ազգը ջնջող, վերացնող: Հինգերորդ՝ զի քրեական մեղքն ագգաջինջ առնէ. որպէս զդադան և զաբիրոն. զի ընդ մովսէսի և աստուծոյ հակառակ կացին, ազգօք և աղխիւք ընկղմեցան զի այլքն երկիցեն: - 416. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳԶ**-ին:

ԱԶՂՈՒ, ա. Ազդեցիկ, ազդող: Վասն այն ի նորանալն առաւել զօրաւոր և ագղո՛ւ է սերմանելոյ և այլոց: - 187. Ունի ևս երեք գործածություն: Բառը վկայում է երեմիա Մեղրեցին՝ «զգացուցիչ» բացատրությամբ: **ՀԱԲ**-ը մատնանշում է «**ԱԶՂՈՅ**» - «**ԱԶՂՈՒ**» անցումը, սակայն վկայակոչում չունի: **ՍՄՅԲԲ**-ն բերում է «հին բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ԱՍԹԱՐՄԱՅ(Ք), գ. Հռոմ եկեղեցու հետևորդ, կաթոլիկ հայ: Երեքտասներորդ, Վկայութիւնք հակառակ ախթարմայիցն. և պատասխանիք նոցա **ԺԵ** թուով: - 660. **ԵՄ**-ն բացատրում է՝ «խառնիճաղանճ կամ խաժամուժ»: Հր. Աճառյանը **ՀԱԲ**-ում առաջին գործածությունը վերապահում է Սամուէլ Անեցու «Շարայարութեան»-ը¹⁵, **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԺԵ** դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններին: **ԼԳԳԲ**-ն հղում է Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն Յոհաննու աւետարանի» աշխատութեանը:

15 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1-4, Երևան, 1971, էջ 128:

ԱԾԻԼԵՄ, չբ. Սափրել: Ինճերորդ՝ կին ո՛չ առնուլ քահանայից. և զմորուսն ածիլել. և զգլորեալն կանգնել ամխտիր: - 553. **ՅԱԲ**-ը մատնանշում է «**ԱԾԵԼ**» - «**ԱԾԵԼԵԼ**» (նոր գրականում **ԱԾԻԼԵԼ**) անցումը. **ԱԾԵԼԵԼ** ձևի համար հղում է «Յասնաուրք»-ին: **ԱԾԵԼԵՄ** ձևը վկայում է նաև **ՆԴԲ**-ն: **ՂԱՄԴԲ**-ն հղում է Ամիրդովլաթ Ամասիացուն:

ԱԿԱՂԻՄԵԱՆՔ, գ. Ակաղեմիականներ: Եւ իմաստակ կոչին՝ որք միոյ արիեստի են գլուխ. որպէս քերականութեան. ճարտասանութեան. աստղաբաշխութեան. և այլք. որպէս պիիռոնացիք ակաղիմեանքն. որք հակառակ կոչին: - 269. **ԵՄԲԳ**-ն բերում է Տաթևացու բացատրության մեջ տեղ գտած «հակառակօղ» իմաստով:

ԱՂԱՉԱԿԱՆ, ա. Աղաչող, հորդորող: Իսկ գեղեցկախօսութիւն լեզուաց, ...Աղաչական ասորին: - 299. **ՂԱՄԴԲ**-ն «աղերսալի, աղերսածայն» բացատրությամբ հղում է Մխիթար Այրիվանեցուն: **ԼԳԳԲ**-ն հղում է Եղիշէի «Մեկնութիւն արարածոց» աշխատությանը:

ԱՂԷԿ, ա. Լավ: Զի՞նչ է որ տղայն զմերծն աղէկ տեսնու. և ծերն զհեռուն: - 239. Ունի երեք գործածություն: **ՂԱՄԴԲ**-ն «լավ, պիտանի, օգտակար» բացատրությամբ հղումներ ունի **ԺԳ** դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններին, Ամիրդովլաթ Ամասիացուն և այոց: **ՅԱԲ**-ը **ԱՂ** բառը ստուգաբանելիս դրանից առաջացած է համարում **ԱՂՈՒ**, **ԱՂՈՒՈՐՈՒԹԻՒՆ**, ապա **ԱՂՈՒ + ԵԱԿ**, **ԱՂԷԿ** ձևերը՝ հղելով Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ին:

ԱՂԵՈՂՈՐՄ, ա. Աղիները կտրատող, ցավագին: ...և արտադրէ՛ հառաչումն ձայնից և ողբ աղեողորմ: - 670. **ՆԴԲ**-ն և **ԱԶԲ**-ն վկայում են **ԱՂԻ ԵՒ ՈՂՈՐՄ**, **ԱՂԻՈՂՈՐՄ** ձևերը: Աճառյանը **ԱՂԵՆԱՐՇ**, **ԱՂԵԿՈՏՈՐ**, **ԱՂԷԳԵՏ** («նուագել իմացող») ձևերը առաջացած է համարում **ԱՂԻ(Ք)** բառից, մինչդեռ «**ԱՂԻՈՂՈՐՄ**»-ը համարում է առաջացած **ԱՂ** ձևից: **ՂԱՄԴԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ԱՂՈՐԻՔ, գ. Աղացող, աղալու միջոցներ: Ինճերորդ՝ աղալն յերկանս. յաղորիս հոգւոյ և մարմնոյ ծասկել: - 339. **ԵՄԲԳ**-ն բերում է՝ **ԱՂՈՐԻ՝** «ջրաղաց կամ երկանք» բացատրությամբ: **ՍՄԴԲԲ՝** «հին բառ կամ նշանակություն» նշանի տակ:

ԱՂՈՒԵՍԱԲԱՐՈՅ, ա. Աղվեսի բարք ունեցող, խորամանկ: Որ արագ ընթանայ և զսպէ զինքն՝ և զերեսն կորակնէ՛ և զբոլոր մարմինն կծկէ՛, երկնչո՛տ է և ըռիշտ և աղուեսաբարոյ: - 247. **ՂԱՄԴԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ԱՂՈՒՈՐՈՒԹԻՒՆ, գ. Գեղեցկություն: Աղուորություն խօսիցն ի քինսն: - 250. **ՂԱՄՅԲ**-ն «լավ, օգտակար բան» բացատրությամբ հղում է Ֆրիկին: Տեքստում ունի «գեղեցիկ, գեղեցկություն» իմաստը: **ԱԶԲ**-ն ունի **ԱՂՈՒՈՐ** ձևը:

ԱՄԲՈՂՋՈՒԹԻՒՆ, գ. Լիարժեքություն, լիակատարություն: Նոյնպես և գամբողջություն կուսին՝ մուտ և ել աստուածն բան ո՛չ խախտեաց: - 469. Նախ՝ զի ո՛չ ապականիւր կուսականն ամբողջություն: - 470. **ԼՅԳԲ**-ն հղում է **ՆՅԲ**-ի **ՎԻՃԱԿՈՒԹԻՒՆ** բառի բացատրությանը (հղում է արվում Փիլոն Եբրայեցուն):

ԱՅԼԱՍԱԶ, գ. Ուրիշ մազ կրող: Եօթներորդ՝ քածաւարին. այլամազն խառնեալ. գանազան բարուց նշանակ: - 371. «Ուրիշի կամ այլ մազ» բացատրությամբ **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին: **ՏԵՍ**՝ նաև **ՔԱԾԱԽՈՒԻ**:

ԱՅԼԱՅԼՈՏ, ա. Փոփոխական, բեկուն: Առաջին պատճառ, զի ընդ ինքեան մարդկայինս բնութիւն այլայլոտ է և ցաւօք. և յորժամ աստուած ևս բազմացուցանէ, ո՛վ կարէ զաղէտն պատմել: - 292. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին: **ՍՄՅԲԲ**-ն՝ «այլայլելի» բացատրությամբ բերում է «հազուադէպ բառ կամ նշանակություն» նշանի տակ:

ԱՆԳԱՆԱԿ, գ. Երկունկանի անոթ: Կոնք արծաթի որ է՝ **բ** ունկի անգանակ: - 359. **ԵՄԲՅ**-ն բերում է՝ «սպառուած, այլաբովանդակ» բացատրությամբ, որն ակնհայտորեն կապ չունի երկունկանի անոթի հետ: Յր. Աճառյանը «կաւէ շինած կոնք» բացատրությամբ «Գաւառական բառարան»-ում բերում է *(աստղանիշ) նշանի տակ, ինչը նշանակում է, որ այն գրաբարյան մատենագրության մեջ չվկայված բառերից է. գործածական է համարում Ազուլիս, Երևանի բարբառների համար: **ՅԱԲ**-ը հղում է Տաթևացուն: **ՍՄՅԲԲ**-ն բերում է՝ «գաւառական բառ կամ նշանակություն» նշանի տակ:

ԱՆԳՈՍՆԵԼԻ, ա. Անարգ, արհամարհելի, պախարակելի: Եւ թէ ասեն, կրեաց քրիստոս գանգոսնելի կիրս: - 383. Ունի ևս վեց գործածություն: **ՂԱՄՅԲ**-ն «պախարակելի, պարսավելի» բացատրությամբ հղում է **ԳՏԳՅ**-ին: **ԼՅԳԲ**-ն հղում է Գրիգոր Նարեկացուն:

ԱՆԵՐԿՉՈՏ, ա. Անվախ, երկյուղ չունեցող: Յերն կակուղ և նօսր, ցուցանէ զբթամիտն. և զգռուզն. և գաներկչոտն: - 246. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին: **ԱԶԲ**-ն ունի **ԱՆԵՐԿՉՈՏՈՒԹԻՒՆ**: **ՍՄՅԲԲ**-ն բերում է «հին բառ կամ նշանակություն» նշանի տակ:

ԱՆՆԱՌՆԱՊԵՍ, մ. Անշփոթելի, առանց շփոթելու: Որ արարն յոչ էից, զիստ անխառնապէս որոշել զիրաքանչիւր փոշիս արդարոց և մեղաւորաց. զի հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործոց: - 719. Ո՞րպէս ի հասարակ տարրէ՛ մարմին մարդոյ անխառնապէս ժողովի: - 719. **ՂԱՄՅԲ**-ն հղում է Գրիգոր Տաթևացու «Գիրք քարոզութեան» Ամռան հատորին (այսուհետ՝ **ԳՏԳՔԱ**): **ԱԶԲ**-ն ունի **ԱՆՆԱՌՆԱԲԱՐ**:

ԱՆՆԵԼԱՍՈՒՏ, ա. Դժվար հասկացող, ծանրամիտ: Բոլոր ունկն՝ անխելամուտ: - 246. Կշտերն մալիր՝ անխելամուտ է: - 247. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ԱՆԿԱՐԳԱՆԱՄ, չբ. Անկարգ դառնալ: Չորրորդ՝ զի այլ մեղօք կամք մեր անկարգանայ. այլ հպարտութեամբ՝ իմացմամբն յիմարիմք և ապշիմք. և ապա կամօք անկարգանամք: - 562. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՔԱ**-ին: **ՆԴԲ**-ն և **ԱԶԲ**-ն բերում են **ԱՆԿԱՐԳԵՄ** ձևը՝ «Յանկարգութիւն դարձուցանել. խանգարել» բացատրությամբ: **ՍՄԴԲԲ**-ն բերում է երկու ձևն էլ՝ «**ԱՆԿԱՐԳԵՄ**»-ը համարելով հին բառ:

ԱՆՂՏՈՂՈՒԹԻՒՆ, գ. Անհատականութիւն, անհատին տարբերակող հատկանիշներ: Եօթն են անհատողութիւնք անձին որպէս ասէ պորփիւր, «անհատ է ի յատկութեանց բաղկացեալ. որոյ հաւաքումն ո՛չ այլ ումեք ասասցի». և են այսոքիկ: - 87. **ԼԴԳԲ**-ն հղում է Գրիգոր Տաթևացու «Լուծումն պարապմանց Կիւրղի» աշխատությանը:

ԱՆՁՐԵԽԱՅՈՍ, ա. Անձրևաբեր: Եւ Սէգն՝ այն է, որ մնաց լանձրևահոս ամպոց. վասն այնորիկ մէգն նշան է պարզոյ: - 204. **ԼԴԳԲ**-ն հղում է Դովիան Օձնեցուն:

ԱՆՍԱՇԵԼԻ, ա. Դիմացկուն, չմաշվող: Զգեստ անմաշելի զորօք իւրեանց: - 682. **ՂԱՄՅԲ**-ն հղում է Ա. Մնացականյանի «Հայ միջնադարյան հանելուկներ»-ին:

ԱՆՍԿՐՏԵԱԼ, ա. Չմկրտված, անկնունք: Իսկ վերջին դժոխք որ կոչի անջրդի գուր, նոցա՛ է որք ո՛չ ունին չար և ո՛չ բարի. որպէս մանկունք անմկրտեալք...: - 505. Եւ զի՞նչ իցէ պատիժ անմկրտեալ տղային: - 592. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՔԱ**-ին: **ԼԴԳԲ**-ն հղում է մեր աշխատասիրած «Նորահայտ բառեր 14-15-րդ դարերի մատենագրության մեջ /Գրիգոր Տաթևացի/ աշխատությանը» (այսուհետ՝ **ՍԳՆԲ**):

ԱՆՍՈՐՈՒՔ, ա. Մորուք չունեցող, առանց մորուքի: Իսկ զի կէսք քարց և

անմորոք լինին, զի ջլապինտ է մորթ երեսացն որպէս զթաթ ձեռաց. վասն որոյ մագ ո՛չ բուսանի: - 245. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին: **ՆՂԲ**-ն և **ԱԶԲ**-ն վկայում են **ԱՆՏՕՐՈՒՒ, ԱՆՏՕՐՈՒԲ, ԱՆՏՐՈՒԲ** ձևերը:

ԱՆՈՒԱՆԵԼԻ, ա. Կոչվելու, անվանելու ենթակա: Անանուն անուանելի է աստուած. զի անունն սահման է. և սահմանն յայտնիչ բնութեանն: - 49. **ՍՄՅԲԲ**-ն բերում է «հին բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ԱՆՏՊԱՌԱՊԵՍ, մ. Առանց սպառվելու: Եւ միշտ բղխէ՝ զջերմութիւնն յօրինակ բղխման հոգւոյն անսպառապէս: - 37-38. Ոռոգեալ ի բղխմանէ կենարար գետոյն. որ հեղու ի նոսա անսպառապէս: - 767. **ՂԱՄՅԲ**-ն «անսպառ, անպակաս կերպով» բացատրությամբ հղում է Յովհաննէս Իմաստասերի մատենագրութեանը:

ԱՆՓՈՒՍԱՆՈՐԴ, ա. Անփոխարինելի, եզակի: Իններորդ՝ զի անփոխանորդ էր քահանայութիւն նորա: - 50. Հինգերորդ՝ այս մին օրս է որ կրկնելով կատարէ՝ զշաբաթ և զամիս և զտարի և զդարս կենցաղոյս, և հասանէ՝ ի վերջին օրն. որ է՝ մի օր աներեկ և անփոխանորդ: - 193. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին: **ԼՂԳԲ**-ն հղում է Եղիշէ, «Մեկնութիւն արարածոց» աշխատութեանը:

ԱՆՓՈՒՍԱՆՑԵԼԻ, ա. Անփոփոխ, մշտատև: Շնորհք որ ի հինն զինչ և իցէ փոփոխական գոլով՝ օրինակ նորոյս էր. որպէս քահանայութեան և այլն: Իսկ շնորհք նորոյս հաստատ և անփոփոխ ի ճշմարիտ քահանայապետէն անփոխանցելի պարզևեալ: - 783. Որևէ բառարան չի վկայում: **ԼՂԳԲ**-ն հղում է Ռ. Ղազարեան, Յ. Աւետիսեան, «Նորայայտ բառեր զրաբարում» աշխատութեանը (այսուհետ՝ **ՆԲԳ**)՝ Անանիա Սանահնեցուն:

ԱՌՆՈՂԱԿԱՆ, ա. Ազդող: Նախ՝ զի ո՛չ ունի գառնողական զօրութիւնն. որպէս և յամենայն կենդանիս էզմ: - 276. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ԱՌՆԶԱԿԱՆ, ա. Փոխկապակցված: Առընչական. որպէս մեծ և փոքր: - 21. Այսօրիկ իբր առընչական են և ո՛չ առանձին բնութեանն: - 49. **ԼՂԳԲ**-ն հղում է Գրիգոր Տաթևացու «Լուծումն պարապմանց Կիւրղի» աշխատութեանը:

ԱՍԵԼԻ - Ասելու բան, պետք է ասել: Առ որս ասելի է թէ՛ ո՛չ կամաւ, և ո՛չ յոչ կամայ. զի պատկեր և նկարագիր էութեանն հօր է որդի, ըստ առաքելոյ: - 36. Իսկ համեստութիւնն կայանայ ի լասելիսն. այլ և ի տեսանելիսն. ի լսելիսն. ի հոտոտելիսն: - 581: **ՍՄՅԲԲ**-ն բերում է «հին բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ԱՐՅԱՍԱՐՅԵԼԻ, ա. Արհամարիված, անուշադրության մատնված: Ձի մի դիրաւ գտեալ՝ դիրաւ արհամարիելի լիցի: - 663. Որևէ բառարան չունի վկայություն: **ՅԱԲ**-ը հիշատակում է նոր բառերի մեջ՝ առանց հեղինակային վկայության: **ԳՅԲ**-ն բերում է՝ առանց հեղինակային վկայության:

ԱՐՅԵՍՏԱԿԱՆ, ա. Արիեստավոր: Իսկ առաքեալն փոխէ՝ զայս կարգ բնական ի կարգ արիեստական և զարժանաւորսն նախադասէ: - 535. Եւ որպէս ի թուումն պարզեացն է՝ կարգ արիեստական. զի նախ դնին արժանաւորագոյնքն: - 583. Թե **ԱՐՈՒԷՍՏԱԿԱՆ**, թե **ԱՐՈՒԷՍՏԱԻՈՐ** բառերը **ՅԱԲ**-ը հիշատակում է նոր բառերի մեջ՝ առանց հեղինակային վկայության: **ԳԲ**-ն երկուսի դեպքում էլ բերում է **արիեստաւոր** բացատրությունը:

ԱՐՁԱԿԱՔԱՅԼ, ա. Լայն քայլ գցող: Արձակաքայլ մեծասիրտ է: - 247. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին: **ՍՄՅԲԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ԱՐՈՒԽԵՆԴՂ, ա. Արու խեղդող: Առաջին, որպէս ի ծնունդն իւր ապրեցաւ մովսէս յարուխխեղդ մահուանէն փարաւոնի: - 328. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին: **ՍՄՅԲԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ԱՐՏԱԳՆԱՅՈՒՄՆ, գ. Դուրս սահելը, դուրս գալը: Եւ այլ՝ հաւատն է մտածութիւն յաղագս աստուծոյ անախտաբար. արտագնացումն յուսոյ առ յուսացեալն. համբերութեամբ տեսանել զաներևոյթն մտացն աչօք անպակաս ժուժկալելով: - 571. **ԱԶԲ**-ն բերում է **ԱՐՏԱԳՆԱՅԱԿԱՆ** ձևը՝ «երկնցած, լայնցած» բացատրությամբ: **ՂԱՄՅԲ**-ն վկայում է **ԱՐՏԱԳՆԱՅՈՒՄՆ** և հղում **ԳՏԳՅ**-ին:

ԱՐՏԱԾՈՐՈՒՄՆ, գ. Դուրս թափելը, արտանետելը: Ասեմք մեք, թե արտածորումն մարմնոյ ո՛չ ունէր մարդն ադամ նախ քան զմեղանչելն ի դրախտին. որպէս նոյ ի տապանին. և մանուկն իննամսեայ յարգանդին: - 502. Որևէ բառարան չունի վկայություն: **ՍՄՅԲԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ԱՐՏԱՔՆՈՑ, գ. Հանդիպող վկայությունները «զուգարան» իմաստով են: Տարբերվող է Գրիգոր Տաթևացու գործածությունը (մարդու օրգան), որ բերում է նաև **ՂԱՄՅԲ**-ն. «Դարձեալ **բժան** դրունք է ի մարդն որ են այսոքիկ. երկու աչք. **բ** ականջք. **բ** պինջք, բերանն. և պորտն. **բ** ստինք. ջրհեղն. և արտաքնոցն (**ԳՏԳՅ**, 241)». **ԱԶԲ**-ն վկայում է՝ «ոտից ճամբա» բացատրությամբ: **ՅԱԲ**-ը նույնիմաստ՝ «սրբուն», «anus» բացատրությամբ հղում է Տաթևացուն:

ԲԱԶՄԱԵՂԱՆԱԿ, ա. Բազմակերպ, բազում եղանակներով: Գիտելի՛ է, զի ոչ էն բազմաեղանակ ասի: - 111. Բազմաեղանակ է: - 308. Եւ գիտելի է, զի բազմաեղանակ տեսանի գործ ողորմութեան և արդարութեանն աստուծոյ: - 457. Եւ բազմաեղանակ է օծումն: - 474. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին, **ԳՏԳՔԱ**-ին:

ԲԱԶՄԱԿՈՒԼ, ա. Ազահ, շատակեր: Բերանն մեծ՝ բազմակրլ է և անգութ և անհնազանդ: - 247. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ԲԱԶՄԱՍԱՅՐ, գ. Բազմաց, շատերի մայր, բազմազավակ: Տասներորդ՝ բազմամայր եղև սառա ըստ նահապետացն. բազմամայր է և կոյսն ըստ հաւատացելոցն. բազմամայր է և եկեղեցի ըստ վերածնելոցն. «զի բազումք են որդիք սկնդկիդ առաւել քան զարամբւոյն» ասէ: - 307. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ԲԱԺԱՆԵԼԻ, ա. Բաժանվող: Զի թէպտ ըստ ներգործութեանն բաժանին երբեմն ի բաժանելի մարմնոյն՝ զի առանց մարմնոյն ո՛չ կարեն ներգործել սրբօք, այլ անբաժանելի մնան ըստ էութեանն ի հոգին. որպէս ցուցանելոց ենք յառաջիկայսդ: - 249. **ՅԱԲ**-ը հիշատակում է նոր բառերի մեջ: **ԼՅԳԲ**-ն հղում է **ՆԲԳ**՝ Դաւիթ Անյաղթի «Սահմանք իմաստասիրութեան»-ը:

ԲԱՆԱԿԱՆԱԲԱՐ, մ. Բանավոր, բերանացի կերպով: Բանական՝ արբահա-մու. բանականաբար ի շարժմանց արարածոց ծանուցեալ զաստուած: - 528. **ԼՅԳԲ**-ն հղում է **ՆԲԳ**՝ «Ընտրանի հայ եկեղեցական մատենագրութեան»:

ԲԱՆԱԻՈՐԻԼ, չբ. Մտածել, դատել: Դարձեալ զօրութիւնք հոգւոյն բաժանին երրակի ըստ երից ներգործութեանցն. որ է՝ կենդանանալն. զգալն. և բանաւորիլն: - 249. Իսկ զերրորդ գործն որ է իմանալն և բանաւորիլն, ունի հոգին և յետ անջատելոյն ի մարմնոյն: - 260. Դարձեալ՝ մարդոյս է խօսիլ և բանաւորիլ. զի այլ կենդանեացն նմանութեամբ է և ո՛չ իսկապէս: - 275. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին: **ԼՅԳԲ**-ն հղում է **ՆԲԳ**՝ «Գիրք քղթոց»-ին:

ԲԱՐԵՊԷՍ, մ. Բարի, անչար: Զի տնկական հոգին յօժարի՛ գոլ. և զգա-յականն բարեպէս գոլ. և բանականն ևս բարեպէս գոլ. զի ո՛չ երբէք հանգչի, մինչև միաւորեսցի ընդ ևս բարեգունին: - 249. Յարամնայութիւն է հաստատ և միշտ յարակայութիւն ի բարեպէս քննել բանականութեանն: - 580. **ՂԱՄՅԲ**-ն վկայում է **ԲԱՐԵՊԷՍ** ձևը և «բարի կերպով» բացատրությամբ հղում Յովհաննէս Քննեցու «Յաղագս քերականին» աշխատությանը: **ԼՅԳԲ**-ն հղում է «Յանդէս ամսօրեայ, 19842 թ., 12»:

ԲԱՐԵՍՈՒՆ, ա. Մեղմ, բարեխառն: Ջի ի վերին մասն օդոյն է մերծեցեալ՝ որ է առաւել բարեսուն. և ամպոց և հողմոց շարժմունք ի միջին մասն օդոյս ծնանին. և ի դրախտն ո՛չ հասանեն: - 222. **ՍՄՅԲԲ**-ն բերում է «հին բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ԲԱՐՉՐԱՍԵԾԱՐ, ա. Խիստ մեծարված, բարձր մեծարանքի արժանացած: Բարձրամեծարն գործոյ ներմարդութեան բանին աստուծոյ՝ բազում եղեն նախատիպք խորհրդոյ. որպէս մովսէս, յովսէփ, իսահակ: - 417. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ԲԱՅԲԱՐՉՈՒԹԻՒՆ, գ. Բացառելը, ժխտելը: Դարծեալ՝ որպէս բացբարձութեամբն ասի հայր աստուած՝ անսկիզբն և անվախճան. ունելով զայս և զայն ի պարզ միութեան իւրում. և ո՛չ է ք անձն կամ ք բնութիւն: - 77. **ՅԱԲ**-ը և **ԼԳԲԲ**-ն հղում են Գրիգոր Տաթևացու «Լուծումն պարապմանց Կիրևոյի» աշխատությանը:

ԲՆԱԲԱՆԱԲԱՐ, մ. Եշմարտախոսելով, բնախոսելով: Սակայն անլ եղանակաւ է քան զասացեալս բնաբանաբար ի մէնջ: - 270. **ԱԶԲ**-ն ունի **ԲՆԱԲԱՆԱԿԱՆ** ձևը՝ «ի բնէ բանական» բացատրությամբ: **ԼԳԲԲ**-ն հղում է Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» աշխատությանը: **ՍՄՅԲԲ**-ն բերում է «հին բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ԲՈՒՐԳԱԹՈՒՐ (լատ.), Քավարան: Ջի ահա՛ լատինացիք առանձնականս ունին աւանդութիւնս, Նախ՝ ի բաժակէն ո՛չ տալ ժողովրդեանն: ...Հինգերորդ՝ գըուրգաթուրն զոր ասեն: - 553. **ՆԴԲ**-ն՝ **ՔԱԲԱՐԱՆ** բառա-հոդվածի տակ ունի լատներեն **PURGATORIUM**, իսկ **ՄԻՋԱՍԵՂ** բառա-հոդվածում՝ **ԲՈՒՐԳԱՂՈՐ** (հղում է «Մեկնութիւն զանազան բանից... Վարդանայ ուրումն ծերագունի» աշխատությանը):

ԲՈՆԱՄԻՏ, ա. Անընդունակ, անմիտ: Վասն է՞ր մին տղայն ուշիմ և մտացի լինի. և մինն ապուշ և բընամիտ: - 251. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ԳԵՐԱԶԱՆՑԱՊԷՍ, մ. Առավելապէս, գերագոյն: Վասն այնորիկ զօրութեամբ սիրոյն շարժի առ աստուած ի միջին կէտ իւր. զի գերազանցապէս հեշտացի ի նա՛: - 249. **ԱԶԲ**-ն վկայում է **ԳԵՐԱԶԱՆՑԱԲԱՐ** ձևը: **ՍՄՅԲԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ԳԻԹՎՈՐՆ, գ. Սայթաքած, մեղավոր, հանցանք գործած: Եւ դեռևս ունին ազգն վրաց. զի գիթվորն մտեալ յեկեղեցի ազա՛տ են: - 392. **ՅԱԲ**-ը վկայակոչում է **ԳԱՅԹ** բառահոդվածի տակ՝ հղելով Գրիգոր Տաթևացու և՛ «Գիրք

քարոզութեան» Ամարան հատորին, և՛ «Գիրք հարցմանց»-ին: **ԼՅԳԲ**-ն հղում է **ՍԳԼԲ**:

ԳԻԺ, ա. գ. Խենթ, խելագար (անձ): Այլ և ի վերայ այսր, հիւանդն և **գիծն**. որ մտօքն է մոլի...: - 371. **ՆՅԲ**-ն բերում է բառարանի «**Աշխարհիկ բառք**» հավելվածուն: **ՅԱԲ**-ը համարում է «ուշ ժամանակից» ավանդված բառ՝ վկայակոչելով Գրիգոր Տաթևացուն, Ջաքարիա Սարկավագին և այլոց: **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ԳԻՃԱՍԵՐ, ա. Մեղսասեր, ցանկասեր: Չորրորդ՝ ըստ բարուցն տեսանէ որ. զի այլ է երագ արի մարդոյ, և այլ երկչտոհն. այլ **գիճասիրին**, և այլ պարկեշտին: - 268. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին: **ԼՅԳԲ**-ն հղում է **ՍԳԼԲ**: **ՍՄՅԲԲ**-ն բերում է **ԳԻՃԱՍԵՐ** ձևը:

ԳԻՃԱԿՆՈՒԹԻՒՆ, գ. Տամուկ, թաց, խավարած տեսողություն: Ձի որպէս **գիջակնութիւնն** չտայ թոյլ տեսանել յստակ, այսպէս երկիւղն յետս քարշէ զբազունս ո՛չ հաւատալ ի քրիստոս...: - 32. Որևէ բառարան չունի վկայություն: **ՍՄՅԲԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ԳԼԽԱԿՈՐ, ա. Գլուխը կախած, գլխահակ: Յինգերորդ՝ զի մարդն իշխան և տէր է ամենայն կենդանեաց. վասն որոյ ամենայն կենդանիք **գլխակոը** են իբրև զծառայ և հնազանդ. և մարդն ուղղաձև իբրև ազատ և թագաւոր: - 233. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳԲԱ**-ին: **ԱԶԲ**-ն բերում է **ԳԼԽԱԿՈՐԻՄ** ձևը՝ «գլուխը՝ երեսը վար կախել անոթով» բացատրությամբ:

ԳՈՐԾՈՒԹԻՒՆ, գ. Գործ, պաշտոն: Յէից՝ որպէս դու ի քո հօր մէջքն էիր զօրութեամբ, և յետոյ ծնար նոր **գործութեամբ**: - 37. **ՅԱԲ**-ը վկայակոչում է՝ հղելով «Ս. Եփրեմի մատենագրութիւնք» աշխատությամբ: **ՍՄՅԲԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ԴԵՇ, ա. Անխելամիտ: Գլուխն մեծ, ցուցանէ **գրէշն**: - 246. Մեծ ականջն **դէշ** է և շատախօս: - 246. Բառարաններից վկայում է միայն **ԵՄԲՅ**-ն՝ **ԴԵՇ**՝ «խելագար» բացատրությամբ:

ԴԻՐԱՍԱՅ, ա. Յեշտ սայթաքող, շեղվող: Ձի որպէս ի մեղանջել հոգւոյն ապականեցաւ մարմինն աղամայ և եղև **դիրասահ** առ վավաշոտ ցանկութիւնն. այսպէս և սերեալ մարմինն քարշելով ընդ ինքեան զապականութիւնն՝ աղտեղացուցանէ զհոգին: - 567. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ԴՈՆԱՊԱՆՈՒԹԻՒՆ, գ. Դռնապահություն՝ հոգևորական աստիճանակարգից կրտսերագույնը: Ջի՞նչ է կարգ քահանայութեան: Պատասխանի: Կարգն է կարողութիւն զոր ետ եպիսկոպոսն այնմ զոր ի կարգն ընկալաւ և ի սպասաւորութիւն խորհրդոյ եկեղեցւոյ: Եւ են է կարգ ըստ է պարզևաց հոգւոյն սրբոյ: Առաջինն է Դռնապանութիւնն: - 606. **ԱԶԲ-ն ԴՈՆԱՊԱՆ քառահոդվածի** տակ, երկրորդ բացատրությամբ տալիս է. «**դռնապանութեան** աստիճան ունեցող». բառի ուղղակի վկայություն չունի: **ՅԱԲ-ը** վկայակոչում է՝ հղելով «Գիրք Մեծ Մաշտոց կոչեցեալ» աշխատությանը:

ԴՕՇ, գ. Կրծքամաս: Աջոյ երին. յաջողակ բարի գործն. և Երբուծն ըօշն է. որ ունի զսիրտն: - 360. **ՂԱՄՅԲ-ն** հղում է **ԳՏԳՅ-ին**: **ՆԴԲ-ն ԿՈՒՐԾԹ** բառի տակ գրում է «լայնաբար՝ Սիրտ, ստինք, կուշտ, երբուծ»:

ԵՐԿԱՅՆԱՄԱԶ, ա. Երկարամազ, երկար մազ ունեցող: Երկայնամազ և թանձրն՝ զազանաբարոյ՝ է և մեծախորհուրդ: - 248. **ՂԱՄՅԲ-ն** հղում է Գիրք վաստակոցին և **ԳՏԳՅ-ին**:

ԵՐԿՐՊԱԳԵԼԻ, ա. Երկրպագության արժանի: Արդ եթէ երկրպագելի և աստուած՝ և այս վասն բնակութեան աստուծոյ, ապա ուրեմն եղեալ առ ժամայն աստուած և օտար ըստ բնութեան: - 67. Ունի ևս վեց գործածություն: **ՅԱԲ-ը** և **ԼԳԳԲ-ն** հղում են Կյուրեղ Աղեքսանդրացու «Գիրք պարապմանց»-ին: **ՂԱՄՅԲ-ն** հղում է **ԳՏԳԲԶ-ին**:

ԵՕԹՆԱՊԱՏԵԱՆ, ա. Յոթ պատ ունեցող: ...և յեօթներորդ օրն ի եօթն ուուազին բարձրածայն փողովք հնչեցին քահանայքն. և ժողովուրդն բարձրածայն աղաղակեաց. յորմէ կործանեցաւ եօթնապատեան պարիսպն երիքովի: - 627. **ՂԱՄՅԲ-ն** հղում է Ա. Սնացականյանի «Հայ միջնադարյան հանելուկներին»:

ԵՕԹՆԱՊԱՏԻԿ, մ. Յոթն անգամ բազմապատկված: Եւ հուրն այնպէս փայլատակէ որպէս զլուսինն. և լուսինն որպէս զարեգակն. և արեգակն եօթնապատիկ պայծառանայ որպէս ասէ Եսայի: - 728. **ՂԱՄՅԲ-ն** հղում է Ներսէս Լաբրոնացուն: **ԼԳԳԲ-ն** հղում է «Պատմութիւն Արստակիսի Լաստիվերտցւոյ» աշխատությանը:

ԸՄԲՈՆԵԼԻՔՆ, գ. Ըմբռնելու, ընկալելու, հասկանալու օրգաններ: Ըմբռնելիքն ի վերին ծայրքն է՝ յիշողականն ի մեզ: - 645. Ութերորդ, զի **Գ** զգայութիւնքն հաստատ վկայք են. աչքն և ականջքն և ըմբռնելիքն: - 742. **ԳՅԲ-ն** բերում է իբրև «Ըմբռնողութիւն» բառի հոմանիչ՝ առանց հեղինակային վկայության: **ՂԱՄՅԲ-ն** հղում է **ԳՏԳԲԱ-ին**՝ «Կոթ» բացատրությամբ:

ԸՍՊՈՒՄՍ, գ. Խմելը, ընդունելը: Դարձեալ ընպումն մահադեղին միում րոպէի՝ աժէ՝ զմահ յաւիտենական: - 744. **ԼԳԳԲ**-ն հղում է Նորայր Բյուզանդացու՝ **ՆՐԲ**-ի հավելումներին: **ՍՄՐԲԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ԸՆՏԵԼԱՑՆԵԼ, ար. Ընտանի դարձնել, վարժեցնել: Վասն առաջնոյն գիտելի է, զի դիրին է զգագանս ընտելացնել, քան զտգետ անձն ի գիտութիւն աժել: - 531. **ՂԱՄՐԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ԹԱԻԱԶԱՐԹ, ա. Խտասադարթ, շատ ոստերով: Միանգամայն և իղձք փրկական և հրաման հարկի ժամանեալ էհաս առ ներգևեալս ոգի և թաւազարթ բզենի: - 773. **ՂԱՄՐԲ**-ն հղում է **Ժ** դարի Յայերեն ձեռագրերի հիշատակարաններին: **ՍՄՐԲԲ**-ն ունի՝ **ԹԱԻԱԶԱՐԴ**:

ԹԱՓԱՆՑԱԲԱՐ, մ. Կտրել-անցնելով, ներթափանցելով: Երրորդ՝ զի բանս մեր ձայնիւ յամենայն լսելիս անցանէ և թղթով յամենայն տեղիս ընթանայ. և բանն աստուծոյ սուր է և հատու և ընդ ամենայնէ քրիստոս անցանէ թափանցաբար: - 121. **ՂԱՄՐԲ**-ն այս, ինչպես նաև «**ԹԱՓԱՆՑԱՊԵՍ**» բառի համար հղում է **ԳՏԳԲԶ**-ին:

ԹԽԱԿՆ, ա. Թուխ աչք ունեցող: Թխակն վատուժ է և ազահ: - 246. Իսկ թխակն և կարմրագոյն՝ քան զգագան չա՛ր է: - 246. **ՆՐԲ**-ն և **ԱԶԲ**-ն բերում են՝ **ԹԽԱԿՆՈՒԹԻՒՆ**՝ «թխակն գոլ», «սևաչուի ըլլալը» բացատրությամբ: Առանձին բառահողոված չի բերվում: **ՂԱՄՐԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ԹՈՂԵԼԻ, ա. Ներելու, թողութիւն տալու ենթակա: Ակամայն անգիտութեամբ է. որ ներելի՛ է և թողելի. Իսկ կամաւորն անթողելին և մահու չափն է: - 385. Երրորդ՝ յորժամ ի խոստովանութիւն և յապաշխարութիւն գայ, լինի ներելի և ակամայ. զի թէ նախ քան զմեղանջելն ակամայն, և եթէ յետ մեղացն ակամայն, լինի զղջմամբն ներելի և թողելի: - 385. Նույն իմաստով **ՍՄՐԲԲ**-ն բերում է՝ **ԹՈՂԵԼԻ**, **ԹՈՂԵԼԻԲ**:

ԹՕՇՈՒՄՍ, գ. Թուլանալը, թառամելը: Թողում զգերծումն մերկութեան և գթօշումն անարգութեան և տկարութեան խաչին. զայպանելն խաչողաց. և զխաւար լուսաւորացն. և յայլ դէմս դարձուցից զբանս: - 424. **ՅԱԲ**-ը հղում է նաև Տաթևացու վերոնշյալ վկայությանը: **ՍՄՐԲԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ԼԻՍԵՆԱԶԵԻ, ա. Լիսեռի ձև ունեցող: Շլնիքն **ե** ոսկր լիսեռնաձև: - 243. Եւ ողնաշարն լիսեռնաձև **ժղ** ոսկր: - 243. **ՂԱՄՐԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

Աճառյանը հղում է Տաթևացու գործածությանը և ընդունում նրա «նորագիտ բառ» լինելը (**ՉԱԲ**, հ. Բ, էջ 285): **ՍՄՅԲԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ԼՈՒՍԱՅՈՒ, գ. Մոմի գին, մոմը գնելու դրամ: Նոյնպէս և յայլ խորհրդոց կատարմունքն. կնքոյ, պսակի, և այլոցն, լուսացուէ և խնկոց գին: - 684. Աճառյանը հղում է Տաթևացուն և տալիս՝ «այժմ կոչուուն է լուսագին» բացատրությունը (**ՉԱԲ**, հ. Բ, էջ 294):

ԽԱՉՉԱՍԲՈՅՐ, գ. Նվիրատվությունն՝ խաչը համբուրելու ժամանակ: Նոյնպէս և յոտնալուայն և ի խաչհամբոյրը՝ գանձանակն է քրիստոսի գոր յիշատակեմք: - 684. **ՂԱՄՅԲ**-ն հղում է Ֆրիկի «Դիվան»-ին: «Արմատական բառարանում» Աճառյանը թվարկում է նոր բառերի մեջ (տալիս է **ԽԱՉԱՅԱՍԲՈՅՐ** ձևով):

ԽԱՓԱՆԵԼԻ, ա. Ընդհատվող, ժամանակավոր: Երկրորդ, գի նոցա նոցայն ժամանակեայ և խափանելի, իսկ տեառն մերոյ մշտնջենաւոր և յաւիտենական...: - 354. **ՆՅԲ**-ն վկայում է **ԽԱՓԱՆԻՉ**, **ԽԱՓԱՆՈՒՄ** ձևերը: **ԼՅԳԲ**-ն հղում է Գրիգոր Նարեկացուն:

ԽՆԴՐԵԼԻ, ա. Պահանջված, հետաքրքիր, պարզաբանման ենթակա: Բովանդակեալ ոչ զամենայն որ ամենեցունց է գիտելի. այլ զբանս բազունս որ բազմաց է պիտանի և խնդրելի: - 772. Նախ խնդրելի է թէ վասն ի՞նչ պատճառի նախահորն յանցանաց պատժապարտ եղեն և որդիքն: - 776. **ՆՅԲ**-ն վկայում է «**ԽՆԴՐԵԼԻՆ**» գոյականական կիրառությամբ և բացատրում՝ «ինչ մի խնդրեալ. խնդիր հայցողի կամ առաջարկողի»: **ԼՅԳԲ**-ն հղում է **ՆԲԳ**-ին՝ Դաւիթ Անյաղթի «Սահմանք իմաստասիրութեան» աշխատությանը:

ԽՆԿԵՂԵԳ, գ. Եղեգնախունկ: Ծաղիկ գմռնեաց. նմանէ պոյտն ծաղկի. և Կինամոն. արմատ է խոտոյ ի տմորիս հայոց. և խնկեղեց. որ յարմատս ո՛չ ամենայն եղեգան լինի. և Յիրիկ. խէժ է ծառոց: - 349. **ՆՅԲ**-ն և **ՉԱԲ**-ը բերում են **ԽՈՒՆԿԵՂԵԳՆ** տարբերակը, որի կողքին **ՉԱԲ**-ը հատուկ նշում է՝ «առանց ձայնավորի սղման» (**ՉԱԲ**, հ. Բ, էջ 421): **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ԽՈՍՏՈՎԱՆԵԼԻ, ա. Խոստովանելու ենթակա: Չորրորդ՝ ի զղջմանէ. գի ամենայն որ մեղք է՝ զղջալի է և խոստովանելի...: - 556. Իսկ արդ եթէ յանցանք մտացն խոստովանելի, ապա ուրեմն մեղք է: - 556. **ԼՅԳԲ**-ն հղում է Գրիգոր Նարեկացուն:

ԽՈՏԵԼԻ, ա. Անընդունելի: Մերժելու, խոտելու ենթակա: Տեն՝ ի չորից քաժանանցող մինն է ընտրելի, և **զն խոտելիք** են: - 215. Ունի ևս վեց գործածություն: **ՂԱՄՔԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ԽՍՏԱԿՐՕՆ, ա. Խստապահ, խստակենցաղ: Հինգերորդ՝ խիստ է կեղևն. նոյնպես և արդարքն խստակրօնք են...: - 766. **ԼՅԳԲ**-ն հղում է Փավստոս Բուզանդի «Պատմութիւն հայոց»-ին:

ԿԱՅԾԱԿԱԾԻՆ, ա. Կայծակ ծնող, առաջ բերող (խոսքը Մովսեսի մասին է): Նմանապես և մեծն ի մարգարես աստուածախօսն մովսէս որ աստուած կոչեցաւ փարաւոնի. իշխելով տարերցս փոփոխման, որ ջրածինն էր՝ եղև վիմածին և կայծակնածին. որում լուսաւորեցան երեսք: - 288. **ՂԱՄՔԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ԿԱՆԽԱՃԱՈՒՄ, չբ. Կանխատեսել, առաջինը խոսել: Տեսանօրք կանխաճառեցին: - 456. ...զի սուրբ գիրք կամ գառաջինսն պատմեն. որպես մովսէսին. կամ գվերջինսն կանխաճառեն. որպես Եսայեայն և այլոցն: - 643. **ՂԱՄՔԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ԿԱՊՈՒՏԻՄ, չբ. Կապտել: Նոյնպես յորժամ բարկանայ՝ կապուտի: - 245. **ՂԱՄՔԲ**-ն մի շարք հեղինակների մեջ առաջինը հղում է **ԳՏԳԲԶ**-ին: Գրաբարում ունենք «կապուտակիլ»՝ վերոնշյալ՝ կապտել իմաստով և «աւար, կողոպուտ» բառից՝ «կապտել»՝ ավարել, կողոպտել:

ԿԱՏԱՐԵԼԻ, ա. Կատարելու, անելու ենթակա: Նախ՝ զի ամենայն ոք յինքն ձգեսցէ զբանս օրինացն. և մի՛ ծուլասցի թէ հասարակաց է կատարելի: - 340. **ՆՅԲ**-ն և **ԱԶԲ**-ն բերում են «**ԿԱՏԱՐԵԼԻՔ**» ձևը՝ «կատարումն», «լմըննալը» բացատրությամբ:

ԿԱՐՂԱՑՈՂ, գ. Ընթերցասեր: Այլ և կարդացողին պարտ է նմանեցուցանել զիր խօսքն ասողին գրոց: - 643. «Գաւառական»-ը գործածական է համարում Արաբկիր, Պոլիս բարբառների համար և բերում՝ «զիտուն, ուսյալ մարդ» բացատրությամբ, այսինքն ենթակայական դերբայածկը օգտագործվել է հատկապես տվյալ գործողություն իրականացնողին մատնանշելու համար: **ՂԱՄՔԲ**-ն հղում է Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ քժշկութեան»-ը:

ԿԱՐԾՈՏ, ա. Կասկածամիտ: Չայնն բարակ՝ տխուր է և կարծուտ: - 247. **ՅԱԲ**-ը բերում է բառագործածությունը՝ հղելով Տաթևացու «Գիրք հարցմանց»-ին: **ՂԱՄՔԲ**-ն նույնպես հղում է **ԳՏԳՅ**-ին:

ԿԱՐՃԱՄԱՍՆ, ա. Կարճ մատներ ունեցող: Հաստ ձեռն և կարճամատն, նենգաւոր է և գող: - 247. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ԿՈՂԵՂ, ա. Հաստ, ամուր կողեր ունեցող: Չորրորդ՝ զի մի՛ տկար ոք կարծիցի. այլ որպէս կողեղ և հաստակող ասենք զըմբիշս. այսպէս զօրեղ եղիցի կինն ի տնօրինել զտունն: - 276. **ԼՅԳԲ**-ն հղում է Լ. Խաչիկյան, Եղիշէ «Մեկնութիւն արարածոց» աշխատությանը: **ՍՄՅԲԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ԿՈՇՏԱԻՐՈՐ, ա. Կոպիտ, բիրտ, անըրբանկատ: Եւ կոշտաւորն առանց իմաստութեան է: - 246. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին: **ՀԱԲ**-ը բառի նախնական նշանակությունը բերում է «հողի կարծր կտոր», իսկ «անկիրթ, բիրտ» նշանակությունը վերապահում արդի գրական հայերենին. ակնհայտ է, որ վերջին երկու նշանակությամբ բառը գործածվել է դեռ Տաթևացու օրերում:

ԿՈՊԻՏ, ա. Բիրտ, կոշտ: Չորրորդ պակասութիւն է՝ զի այժմ է՛ մարմին մեր թանձր և կոպիտ. այլ յայնժամ բառնի այս ի մարմնոյ և լինի անօսր և թափանցիկ. զոր ոչ պարիսպ կամ բանտ ըմբռնել կարիցէ: - 722. **ՆՅԲ**-ն վկայելով **ԿՈՊՏԱՁԵՒ** բառը՝ բացատրում է «ի կոպիտ բառէն, որ կայ ի ռամկօրէն»: **ԼՅԳԲ**-ն հղում է Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն Յոհաննու» աշխատությանը: **ՍՄՅԲԲ**-ն բերում է «զաւառական բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ՀԱՄԱՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆ, գ. Համահավասար լինելը, միահավասարութիւն: Վասն որոյ այսպէս ասեն զկարգ դասուցն. և սոցա տարածայնութիւն զհամահաւասարութիւն դասուցն նշանակեն: - 135. **ՂԱՄՅԲ**-ն հղում է Յովհաննէս Քննեցու «Յաղագս քերականին» աշխատությանը:

ՀԱՄԵՄԱՍԱՊԵՍ, մ. Համեմատության մեջ, համեմատվելով: Երրորդ՝ է՛ գործ նախախնամութեան. զի ըստ ընտանի կարողութեան իւրեանց՝ համեմատապէս զպարզևս ընկալցին. զի մի վնասեսցին փոքունքն մեծամեծօք. և թերի մնացին մեծամեծքն սակաւուք: - 130. **ԱԶԲ**-ն վկայում է՝ «համեմատաբար՝ բաղդատութեամբ» բացատրությամբ: **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳԶԶ**-ին:

ՀԱՅԵՑԱՐԱՏ, գ. Տկարատեսություն, վատ տեսնել: Յաչաց աստի՛ հայեցարատս հերքեալ լիցի տեսութեամբ լուսոյդ: - 771. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ՀԱՍԱՆԵԼԻ, ա. Հասնող, հասու: Որ ցուցանէ թէ՛ ամենկին ժամն այն ոչ

ունէք եւ հասանելի յեղելոցս, այլ առաջին անեղ բնութեանն աստուծոյ: - 48: **ԼՅԳԲ**-ն հղում է **ՆԲԳ**-ին՝ «Ընտրանի հայ եկեղեցական մատենագրութեան» աշխատությանը:

ՅԱԲՍՏԱԼԻ, ա. Յավատ ներշնչող, հավատալու ենթակա: Ձոր օրինակ՝ բժիշկն յորժամ հիւանդին զդեղն տայ, նախ ինքն ճաշակէ զի հաւատալի լիցի: - 497. Ունի ևս վեց գործածություն: **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ՅԵՌՈՒ, մ. Ամբողջությամբ փոխարինել է գրաբարյան **Յեռի** ձևին և ունի նույն՝ «հեռվում գտնվող» իմաստը: Ուսաք յիմաստնոց թէ՛ ի բաժանիլ լեզուաց **իբ** տանուտերանց, և ի գնալն յիւրաքանչիւր տեղիս ի հեռու կամ ի մօտաւոր աշխարհս. զօրն զայն տարեմուտս կարգեցին. և ուսուցին որդւոց իւրեանց պատուեալ զօրն զայն տրօք ընչից: - 200. Տղայն զմերձն տեսնու, և ծերն գիւեռու: - 227. **ԳՏԳՅ**-ում գտնում ենք ևս մեկ տասնյակ կիրառություն: **ՆԲԲ**-ն բերում է **ՅԵՌՈՅ՝** բառի բացատրության տակ՝ որպէս «ռանկօրէն» ձև:

ՅԵՐԶԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. Յերծվածող, հերծվածասեր: Ասեմք եթէ՛ կարի՛ արժանապէս քունդ անմտութեան հերծասիրութեանը դատեցար: - 497. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ՅՆԱԶԱՆՂԱՊԷՍ, ա. Յնազանդ, խոնարհ: Երրորդ՝ իմասցի ի տեղի ինազանդապէս սպասաւորութեան...: - 457. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳԸ**-ին:

ՅՈՍԱՆԻԹ, ա. Նույն նյութից բաղկացած: Առաջին միաւորութիւն ստոյգ և ճշմարիտ՝ իոմանիլք մասնաւորաբար որոշեցելոց. որոց ոչ ինչ տարանիւք ընդ մէջ երկի. որպէս երկուց ջահից լուցելոց միաւորութիւն լուսոյն: - 476. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ՅՈՏԱԾ, ա. Նեխած: Աղի, և դառն՝ քաղցր, և իոտած: - 240. Եւ իոտած ջուրն ի մէջքն է վասն գոյութեան ծննդեանն: - 240. Ձդառնութիւնն ի լեղին. և գիոտածն յերիկամունքն. և զմրուրն և զթթուն ի փայծեղն. և զքաղցր արիւնն ի սիրտն. և սիրտն երակովն և շնչովն բաժանէ ի բոլոր մարմինն: - 242. **ՂԱՄՅԲ**-ն հղում է միջնադարյան մի շարք հեղինակների:

ՅՈՒԵԼԻ, ա. Մեկնելու, քարոզելու, պատմելու ենթակա: Զի՞նչ է անճառելի աստուածաբանութիւն. և զի՞նչ ճառելի: - 103. Ունի ևս երեք գործածություն: **ԼՅԳԲ**-ն հղում է **ՆԲԳ**-ին՝ Անանիա Շիրակացուն:

ՃՈՒՌՂԱԿԱՆ, ա. Ճովողական: Ճուրղական հնդիկն: - 299. **ՆԲԲ**-ն և **ԱԶԲ**-ն բերում են **ՃՈՒՌՂՈՒԹԻՒՆ** ձևը՝ «թռնոց ձայն» բացատրությամբ.

ՂԱՄՅՐ-ն հղում է **ԳՏԳԳ**-ին: **ԼԳԳԲ**-ն հղում է Լ. Խաչիկյան, Եղիշէ «Մեկնութիւն արարածոց» աշխատութեանը:

ՄԱԶԱԾԱԾՈՒԿ, ա. Մագով ծածկված, թավամագ: Լանջքն որ փորին մագա-ծածոնկ է՝ անկրօն է և անկայուն և անգութ: - 247. **ՂԱՄՅՐ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ՄԱՆՐԱԿՈՐԻՋ, ա. Մանր կորիզ ունեցող: Իսկ թուզն քաղցր և մանրա-կորիզ. բանքն աստուծոյ քաղցր են ի մեզ և մանրաքնին: - 381. **ՂԱՄՅՐ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ՄԱՐԴԱԶԳԵԱՅ, ա. Մարդեղեն: Ասի դարձեալ՝ աստուած մարմնազգեաց. այլ ո՛չ ասի աստուած մարդազգեաց. կամ մարդ աստուածազգեաց. զի այս որոշման է: - 79. **ԱԶԲ**-ն բերում է **ՄԱՐԴԱԶԳԵՆՈՒՄ** ձևը՝ «մարդանալ, մարմնանալ, մարդկային բնութիւն առնուլ» բացատրութեամբ:

ՄԱՔՐԵԼԻՔ, գ. Մաքրող, սրբարար: Այսպէս ասէ սուրբն դիոնեսիոս եթ՝ մաքրելիք են **ե** դասք. յորոց վերայ իշխէ սարկաւազն և գործէ՝ զմաքրականն: - 608. **ՅԱԲ**-ը, ապա և՝ **ԼԳԳԲ**-ն հղում են Կյուրեղ Աղեքսանդրացու «Գիրք պարապմանց»-ին:

ՄԵՂՈՒՇԱԳՈՅՆ, ա. Մեղրագու՞յն: Թխակն վատուժ է և ազահ: Թէ լինի սակաւ մի մեղուշագոյն, արդարամիտ է և քաջ ուշին: - 246. **ՆԲԳ**-ն **ՄԵՂՈՅՇ** բերում է իբրև **ՄԵՂՈՒՇ ԱԶԲ**-ին հոմանիշ. վերջինս էլ բացատրում է՝ **ՄԵՂՈՒԿԱՆ**՝ «Որոյ ակն է իբրև զաչս մեղուաց» մեկնութեամբ: **ՍՄԲԲ**-ն, ապա և՝ **ՂԱՄՅՐ**-ն տալիս են «վարդագոյն» բացատրութիւնը, սակայն դատելով տեքստից՝ այն «ոչ շատ թուխ» կամ «մեղրագոյն» նշանակութիւնը ունի: **ՂԱՄՅՐ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ՄԻՋԱԿՕՐԵՆ, մ. Միախառնված, միջին: Այլ գիտելի է, զի **դ** սեռիւք որոշի կապ բանականացս. այսինքն հոգեկան և մարմնական և միջակօրէն: - 317. Նոյնպէս և կապն միջակօրէն տրամատի ի **դ**: - 317. **ԼԳԳԲ**-ն հղում է Գրիգոր Տաթևացու «Լուծումն պարապմանց գրքի» աշխատութեանը:

ՄՐՏԱՏԵՍԱԿ, ա. Խավար, մթամած: Եւ զոր այժմ մղտատեսակ և հեռու տեսանէր, յայնժամ յայտնի և մերձակայ տեսանէ...: - 668. **ՅԱԲ**-ը վկայում է Գրիգոր Տաթևացու բառագործածութիւնը:

ՄՇՏԱԿԱՆԱԶ, ա. Միշտ կանաչ, մշտադալար: Եւ թէ տկարանաս ի զօրութիւնն աստուծոյ՝ առ մեզ ևս զոն քեզ հաստատութեան նշան՝ անփուտ փայտ. և անթառան ծաղիկ. և մշտականաչ սաղարթ. և անթափ պտուղ: - 223. **ՂԱՄՅՐ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ՄՈԾԱԿ, գ. Մծեղ: Երրորդ՝ հարուածն է մուճն որ է՝ մանր տիգ. կամ մոծակ. կամ մծեխ. ի ցուցանել զի մանրակծու էին բարուք և խոցոտիչք բանիւք: - 334. **ՆՂԲ**-ն «ԱՇԽԱՐՅԻԿ ԲԱՌՔ» Յավելվածուն ունի օրինակ՝ **Մորեխ**-ը, բայց **Մոծակ**-ը չի բերվում: **ՂԱՄՂԲ**-ն հղում է Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոց»-ին, որը սակայն բերում է ոչ թե առանձին բառա-հոդվածով, այլ **ՍՈՒՆ** բառի բացատրության տակ:

ՄԱԿՈՅՏ, ա. Մսեղ: Լանջքն մսակոյտ՝ տխմար է: - 247. **ՂԱՄՂԲ**-ն հղում է **ԳՏԳՂ**-ին:

ՆԱԽԱՃԱՇԱԿՈՒՄՆ, գ. Վաղօրոք ճաշակելը: Իսկ սուրբն եպիփան սահմանէ՝ «հաւատն է կամաւոր և ստոյգ նախաճաշակումն յայնմ ճշմարտութենէ որ ո՛չ է յայտնեալ»: - 571. **ՂԱՄՂԲ**-ն հղում է **ԳՏԳՂ**-ին:

ՆԵՐԳՈՐԾԱՔԱՐ, մ. Ուժգին, սաստիկ: Երրորդ՝ համակ հանապազորդ ներգործական դարձումն բոլոր մարդոյն առ աստուած. որով մարդն աստուածային քաղցրութեամբն զմայլի. որպէս հրեշտակք ի բոլոր սրտէ՝ յամենայն անձնէ և յամենայն զօրութենէ միշտ ներգործաբար դիմեն առ աստուած. և յիրաքանչիւրսն ճառագայթի՝ ի նմա՝ աստուած: - 462. **ՂԱՄՂԲ**-ն հղում է **ԳՏԳԶ**-ին: **ԼՂԳԲ**-ն հղում է **ՆԲԳ**-ին՝ Անանիա Սանահնեցուն:

ՆԵՐԳՈՐԾԱՊԷՍ, մ. Կատարելապէս, ուժգնությամբ: Իսկ զչորրորդ սրբութիւնն որ է՝ միաւորութիւն բանականին առ աստուած, և միշտ ներգործապէս դիմել առ աստուած որպէս հրեշտակք ընկալաւ աստուածածին կոյսն ի յղանալն զորդին աստուծոյ: - 463. Եւ զմայլեալ ի բոլոր սրտէ և յամենայն անձնէ և ի զօրութենէ միշտ ներգործապէս դիմեալ առ աստուած հաստատեցաւ: - 463. **ՂԱՄՂԲ**-ն հղում է **ԳՏԳԶ**-ին:

ՆԵՐԵԼԱՊԷՍ, մ. Ներելի, ներելու ենթակա: Երրորդ՝ սրբութիւն յատկա-կան. որպէս սրբոյ կուսին, բառնայ զսկզբնական մեղս և զարմատն և դիւրասահութիւն մեղանջելոյն մահու չափ և ներելապէս: - 462. Եւ ունէր շնորհօք արգելք ի մեղաց մահու չափ և ներելապէս. որպէս յովհաննուն և երեմիային: - 463. **ՂԱՄՂԲ**-ն հղում է **ԳՏԳԶ**-ին:

ՆՇԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ, գ. Մինչհարսանեկան արարողակարգ, նշանդրեք: Եւ գիտելի է, զի պսակն սկսանի ի նշանադրութիւնն...: - 609. **ՆՂԲ**-ն և **ԱՂԲ**-ն **ՆՇԱՆ** բառահոդվածի տակ բերում են «նշան տուք» ձևը: «Գաւառական»-ը **ՆՇԱՆԴՐԷՔ** ձևը գործածական է համարում բազմաթիվ բարբառների համար՝ Ախալքալաք, Երևան, Խոյ, Ղարաբաղ, Մուշ, Տփխիս, որ **ՆՇԱՆՏՈՒՔ**-ի հետ շատ սովորական ձև է եղել. **ՆՇԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ**-ը նույն

իմաստով ավելի գրական ձևն է: **ՆՇԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ** բառը **ՀԱԲ**-ը բերում է որպես **ՆՇԱՆ** բառի յոթերորդ բացատրություն՝ առանց հեղինակային հղման: **ՂԱՄԴԲ**-ն հղում է **ԳՏԳՔԱ**-ին:

ՇԱՏԱԿՈՒԼ, ա. Շատակեր: ճակատն նեղ՝ չատակուլ է: - 246. Ձեռքն թիր՝ շատախօս է. և չատակուլ: - 247. **ՂԱՄԴԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ՈՂՋՈՅՆԱՈՒՔՆ, գ. Ողջույնը առաքող, հղող: Նախ՝ զի աստուած էր ողջոյնառաքն. որ խօսէր զկոյսն ի հարսնութիւն կուսութեան, կուսաբեր լինիլ պտղովն: - 464. **ՂԱՄԴԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին: **ԼԳԳԲ**-ն հղում է **ՍԳՆԲ**-ին:

ՈՂՋՈՅՆԸՆԿԱԼ, գ. Ողջույնը ստացող, ընդունող: Երրորդ՝ զի կոյս էր ողջոյնընկալն և գերազանց քան զամենայն կոյս որպէս ցուցաւ: - 464. **ՂԱՄԴԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին: **ԼԳԳԲ**-ն հղում է **ՍԳՆԲ**-ին:

ՈՆՑ, դ. Ինչպես: Ութնժերորդ՝ Մարդն ո՞նց ճանաչի: - 228. Մարդն ո՞նց ճանաչի: - 250. **ՂԱՄԴԲ**-ն հղում է մի շարք հեղինակների, այդ թվում և՛ Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ին:

ՈՏՆԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ, գ. Քայլքի ձայնը: Հինգերորդ՝ զգաթ էր կոյսն մարիամ. և ցօղ բանն աստուծոյ. որ ւետետօք հրեշտակապետին էջ ի վերայ նորա առանց ոտնածայնութեան և ծածուկ: - 421. **ՂԱՄԴԲ**-ն հղում է **ԳՏԳՔԶ**-ին:

ՈՒՂՂԱԶԵՒՈՒԹԻՒՆ, գ. Ճշմարտախոս, ճիշտը պահող, ուղղամիտ: Ձի ուղղաձևութեան ուսուցիչք ի բաժանմանէ ի միութիւն եկեալ խոստովանին զքրիստոս. և սոքա ի միութենէ ի բաժանումն որոշեն: - 176. Ունի ևս երկու կիրառություն: **ՂԱՄԴԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ՉԱՐԱԽՆՂԱՑ, ա. Չարական, չարով ուրախացող: Եւ որոց ձայն յմզուլման հնչէ, ստաբանք են և չարախնդացք: - 247. Իսկ որ իջանէ ի բարձսն, չարական է և չարախնդացք: - 247. **ՀԱԲ**-ը դնում է նոր բառերի մեջ: **ՂԱՄԴԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ՉԱՐԱԿԱՐԾԻՔ, ա. Չար, թյուր կարծիք: Եղիցի անդ երևակայութիւնն չարա-կարծիք: - 751-752. **ԱԶԲ**-ն բերում է՝ «կարծիք չար, կասկածոտ» բացատրությամբ: **ՍՄԴԲԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ՊԱՅԾԱՌԱՒԵՍՈՒԹԻՒՆ, գ. Գերազանց խոսելը, պերճախոսություն: Ձի կոյս Բանին և պայծառախոսութիւնն ի խելքն ծագէ. և Իմացականն՝ ի միջին փորուած գլխոյն: - 250. **ՆԴԲ**-ն և **ԱԶԲ**-ն բերում են **ՊԱՅԾԱՌԱՒԵՍՈՒ** ձևը՝ նկատի ունենալով Հովհան Ոսկեբերանին՝ իբրև՝ «յստակ ու գեղեցիկ խօսող» բացատրությամբ: **ՂԱՄԴԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ՊԱՅՃԱՌԱՄԻՏ, ա. Պայծառ միտք ունեցող: Այլ դու ո՛վ այրո՞ւ աստուծոյ մաքրամիտ և ճգնազգեաց միայնաւոր սուրբ հայրո՞ւ սահակ, թէ և զիջանես եղբայրական սիրով խնդրել բանս ի մենջ. սակայն կարօղ ես և զթերին լնուլ և գյաւելորդն կշռել. և զմեզ օգտեցուցանել ի ներգոյ՛ թոյին պայծառամիտ սրբութեան սրտի: - 558. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ՊԱՇՏԵԼԻ, ա. Պաշտելու, պաշտամունքի ենթակա: Երկրքին բնութիւնքն պաշտելի՞ են թէ մի: - 90. Եւ արդ, Ո՛ հաւատ մեծ պաշտելի լոյս իմ և տիպ. և զանձ անկողոպուտ. կացցես առ իս. յարզանդէ մօր իմոյ խուսափեալս ի ծոց քո: - 771. **ՂԱՄՅԲ**-ն «Պաշտելու՝ պաշտամունքի արժանի» բացատրութեամբ հղում է Ֆրիկի «Դիւան»-ին: **ԼՅԳԲ**-ն հղում է **ՆԲԳ**-ին:

ՊԱՏԱՐԱԳԵԼԻ, ա. Ջոհաբերման ենթակա: Ոչխար տարեկան. և պատարագելի. և զգօն և հեզ. և պտղատու զկաթն և ասր և ծնունդ: - 361. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին: **ԼՅԳԲ**-ն վկայում է՝ հղելով նաև Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն Յոհաննու աւետարանի» աշխատութեամբ:

ՊԱՏԿԵԼ, նր. Բազմապատկել: Վեցերորդ՝ միակն պատկելով բազմանայ. և աստուած է շարունակօղ բազմութեան էից: - 109. Ութերորդ՝ միմն պատկելով առնէ զտասն՝ և զհարիւր՝ և զհազար՝ և զբիւրն. և զանթիւն: - 109. Սակայն և նա՛ է ի թիւս յայս. այսինքն զի երիցս պատկելով երեքտասանն՝ լինի **108**. և ի քառասներորդումն պտղաբերի: - 263. Վասն այն նահապետքն զհարիւրն պատկելն որ է՝ ժամանակեան. և ի հազարն ո՛չ հասանին որ մշտնջենաւորն է: - 291. **ՅԱԲ**-ը, ապա և՝ **ՂԱՄՅԲ**-ն հղում են Տաթևացուն. առաջինը «Գիրք հարցմանց»-ին, երկրորդը՝ **ԳՏԳԶ**-ին:

ՊԱՏԿԵՐԱՅՈՅՑ, գ. Գուշակող՝ մարդու մարմնի մասերով: Երկի ապա թէ ճշմարիտ են պատկերացոյցքն, որ զբարս մարդոյն յայտնեն: - 246. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ՊԱՏԿԵՐԱՅՈՒՅՈՒԹԻՒՆ, գ. Գուշակություն՝ ըստ մարդու մարմնի մասերի: Չորեքտասներորդ՝ Պատկերացուցութիւն մարդոյն ըստ մասի: - 227. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ՊԱՐԶԱԹԵՒ, ա. Պարզ թև ունեցող: Ոմանք պարզաթևք են. որպէս ճանճք: - 215. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ՊԱՐՈՒՆԱԿԱԶԵՒ, ա. Աղեղնաձև, կամարակերպ: Եօթներորդ՝ զի պարունակաձև է կողն. ի նշանակել, զի կինն պարունակիչ և հաւաքիչ է տան առն և ընչից: - 276. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ՊԱՐՈՒՆԱԿԻՉ, գ. Պարունակող: Եօթներորդ՝ զի պարունակածն է կողմ. ի նշանակել, զի կինն պարունակիչ և հաւաքիչ է տան առն և ընչից: - 276. Վասն այն ասի արդարութիւնն ուղղութիւն կամաց. զի ո՛չ միայն է առանձնական զօրութիւն կամ առաքինութիւն. այլ և հասարակ և պարունակիչ ուղղութեան հոգւոյն: - 579. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ՊԱՐՍԱԻԵԼԻ, ա. Արգահատելի, նախատելի: Վեցերորդ՝ զի ո՛չ բարեգործքն լինէին գովելի, և ո՛չ չարքն պարսաւելի: - 20. Առաջինն է՝ գովելի սեր. վերջինն պարսաւելի: - 143. Իսկ միջինն որ է՝ բնականն՝ ո՛չ գովելի և ո՛չ պարսաւելի: - 143. **ՂԱՄՅԲ**-ն հղում է Յովասափ Սեբաստացու «Բանաստեղծութիւններ»-ին:

ՊԼՕՐԵԱՅ, ա. Բյուրեղյա: Եւ երկրորդն է լուսաւոր զօրութեամբ թափանցանց. գոլով ջրեղէն կամ պլօրեայ ըստ ոմանց: - 787. Բառաբանները վկայում են **ՊԼՕՐ** («բիւրեղ» բացատրությամբ) ձևը. վերջին ձևի համար **ՅԱԲ**-ը ապա և՛ **ՂԱՄՅԲ**-ն վկայում են մի շարք հեղինակների հետ՝ այդ թվում նաև՝ **ԳՏԳԲԶ**-ին. սակայն «Գիրք հարցմանց»-ում բառի գործածութիւնը չի նկատվել:

ՋՈՒԽՏ - Ջույգ: Եւ յորժամ թիւն երկրորդ լինի որ է՝ ջուխտ: - 641. **ՆՅԲ**-ն և **ԱԶԲ**-ն բերում են **ՋՈՒԽՏԱՎ** ձևը: **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԵՄԲԳ**-ին:

ՈԱՍՏԵՍ - Գուշակ, հմայ, կախարդ: Ապա ուրեմն ի ժամանակիս յայս ընկեր են սաւուղայ որք սակաւ մի կարծեօք հաւանին երազոց կամ վիճակաց և ռանտեսաց և այլոցն: - 429. **ՅԱԲ**-ը բերում է Տաթևացու վկայութիւնը՝ «գրբաց» բացատրությամբ: **ԼՅԳԲ**-ն հղում է **ՍԳՍԲ**-ին:

ՍԱՅՍԱՆԵԼԻ, ա. Չափավորվող, չափելի: Իսկ զմիւսն գործակից՝ զօրութեամբ անսահմանելի. զի իւր ասեն արար գործակից. իսկ բնութեամբ սահմանելի. զի արարած է: - 51. Իսկ զմիւսն զօրութեամբ և բնութեամբ սահմանելի. զի արարած և պաշտօնեայ և ծառայ է ասեն: - 51. **ԼՅԳԲ**-ն հղում է **ՆԲԳ**-ին՝ Դավիթ Անհաղթի «Մեկնութիւն ի վերլուծականն Արիստոտելի» աշխատությամբ:

ՍԱՏԱՆԱՅԱԳԻՏ, ա. Սատանայի հորինած, ստեղծած: Երկրորդ՝ զի սատանայագիւտ էր քնար և տաւիղ, իգացուցանել զմարդիկ: - 641. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին: Քնարին տրված Տաթևացու բնորոշման աղբյուրը, հավանաբար, Ծննդոց գիրքն է, որտեղ քնարի հեղինակ հիշատակվում է չարագործ Կայենի սերնդից Յոբաղը:

ՄՈՆԻ, գ. Անիվների կցածող: Իսկ արիստոտելի ի վերայ երկուց բևեռացն ասէ շարժիլ երկնի որպէս անիւ սայլին ի վերայ սննոյ: - 182. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳԲԶ**-ին:

ՍՍԱՅՈՒՄՆ, գ. Ստանալը, ընդունելը: Այլ որպէս բանին սեպիական է և բնութեամբ և ո՛չ ստացնամբ, այսպէս իմացիր և մարմնոյն վասն անճառ միաւորութեան բանին զի իւր է մարմինն. վասն այն ո՛չ ինչ բանին է՝ ասի մարմնոյն: - 46. Իսկ մարդս ո՛չ բնութեամբ, այլ յետոյ ստացնամբ և ունակութեամբ: - 138. **ԼՅԳԲ**-ն հղում է Գրիգոր Նարեկացուն:

ՍՐԲԱԳՐԵՄ, նր. Մաքուր գրել, արտագրել: Ձի ասեն թէ՛ յոբայ հէճուպն ի պարսիկս փախեաւ, և անդ գրոյց ետ որ գրեցին իւրեանց գրովն. և սողոմոն բերել ետ և սրբագրեաց: - 320. **ՅԱԲ**-ը բերում է նոր բառերի մեջ: **ՂԱՄՅԲ**-ն **ՍՐԲԱԳՐԵԼ** բառի դեպքում հղում է Մխիթար Այրիվանեցու «Պատմութիւն հայոց»-ին, իսկ **ՍՐԲԱԳՐՕՂ** դեպքում՝ **ԳՏԳԲԶ**-ին:

ՄՐՏԱԿՐԱՆՔ, գ. Սրտաթաղանթ: Նախ՝ զի ի դառն մաղձոյն հոսի յորովայնն ի ներքոյ սրտին և կսկծեցուցանէ գարտակրանքն - 619. **ՅԱԲ**-ը վկայակոչում է Տաթևացու բառագործածութիւնը՝ «սիրտը պատող մաշկը՝ ներսի կողմից» բացատրությամբ: **ՂԱՄՅԲ**-ն **ՄՐՏԿՏՐԵՔ** բառածկի տակ «աղա-վաղված բառ» բացատրությամբ՝ հղում է **ՄՐՏԻ ԱՄԱՆ** բառահոգվածին:

ՄՐՏԱՅԻՆ, ա. Ամուր, սրտապինդ: Գոյնն սպիտակ և կարմիր՝ ուժեղ է և սրտային: - 247. **ՂԱՄՅԲ**-ն հղում է Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» և «Անգիտաց անպէտ» աշխատութիւններին:

ՄՐՏՈՏ, ա. Անվախ, համարձակ: Եւ թէ լանջքն միայն է մագեղ, սրտոտ է: - 247. **ՂԱՄՅԲ**-ն հղում է Աբրահամ քահանա Կ. Պոլսեցու «Պատմութիւն անասնոց և զազանաց» աշխատութեանը: «Գաւառական»-ը գործածական է համարում Երևան, Մուշ, Նախիջևան և այլ բարբառների համար:

ՎԱՂԱԽՕՍ, ա. Կանուխ ծայնող: Եւ աքաղաղ վաղախօս լինի: - 218. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ՎԱՅՐԱԿՈՐ, ա. Դեպի ներս կորացած: Մատունքն մած և վայրակոր, ազահ է և չարաբարոյ: - 247. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ՎԱՐԶԿԱԿԱՆ, ա. Վարձատրվող: Եւ հոգւովն վարձկականն վասն խոստացեալ բարեացն: - 396. Եւ կատարեալ՝ վարձկականն վասն պատուոյն: - 576. Երկրորդ՝ յորժամ սիրեմ զաստուած վասն իմ. այս է վարձկականն: - 576. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ՎԵՐԱՄԲԱՐՁՈՒՄ, գ. Ամբարտավանելը, մեծամտանալը: Ի վեր շար-
ժումն է հպարտութիւն և փառասիրութիւն. զի յատուկ է սոցա ի վերամ-
բարձումն: - 560. **ՂԱՄՅԲ**-ն հղում է «Յովհաննու Սարկաւազ վարդապետի
Ներբողեան ի սուրբ Գրիգոր» երկին:

ՎԵՑԱԿՈՂՄ, ա. Վեց կողմ ունեցող: Եւ վեցակողմն, զի մարմինն եռակի
տարրո՛շ է. ունի վեր և վայր. յետ և առաջք. աջ և ահեակ: - 293. Սա՛ ունի զձև
նմանութեան տապանին վեցակողմ և կաթողիկէ, և դուռն ի կողմանէ: - 294.
ՂԱՄՅԲ-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ՎՕՈՒԱՍ (հուն.), գ. Տեղումներին դիմակայող արևելյան քամի: Հիւսի-
սայինք որք կոչին Վօռէսք: Այն որ մերձ յարևելս է, Վօռէան կոչի. նեղ՛
զամպս, և կապ՛ զանձրևս: - 205. Եւ վօռէանն սեղմ՛ զամպս և արգիլէ
զանձրևս: - 205. **ՀԱԲ**-ը Տաթևացու բառագործածությունը վկայում է՝ չնկա-
տելով միայն, որ Տաթևացին տարբերակված է ներկայացնում **ՎՕՈՒԱՍ**-ը և
հաջորդիվ ներկայացվող **ՎԱԻՈՒ(Ք)**, **ՎՕՈՒՍԲ**-ը:

ՎԱԻՈՒ(Ք), **ՎՕՈՒՍԲ** (հուն.), գ. Հյուսիսային ցուրտ քամի: Հիւսիսայինք
որք կոչին Վօռէսք: - 205. ...Եւ նախ ի չորս դէմս բաժանին ամենայն
հողմունք. և իւրաքանչիւրքն դարձեալ յերիս բաժանին. որ լինի բովանդակն
բժան: ...Իսկ Հիւսիսայինքն, Վաւռէք կոչին. որք են ցուրտ: - 205. **ՂԱՄՅԲ**-ն
հղում է **ԳՏԳՅ**-ին:

ՏԱՊՈՒԹԻՒՆ, գ. Տոչորում, կիզանում: Քաղց է ըստ մարմնոյ՝ թերութիւն
ստամոքսի. իսկ ծարաւ՝ տապութիւն ջերմութեանն: - 584. **ՂԱՄՅԲ**-ն հղում է
Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ»-ին:

ՏԱՐԱԶԱՅՆ, ա. Անհամաձայն, հակառակ: Ահա՛ այս ի կարճոյ բացա-
յայտութիւն ծածկեալ ամբարշտութեանց, որք **բ** բնութիւնս սահմանեն ի
վերայ միոյն քրիստոսի. թպէտ անձն մի համբաւեն համաձայն մեզ, սակայն
որոշմամբ բնութեանց լինին տարաձայն մեզ և եկեղեցեացն աստուծոյ: - 90.
ԼՅԳԲ-ն հղում է **ՆԲԳ**-ին՝ Դավիթ Անհաղթի «Մեկնութիւն ի վերլուծականն
Արիստոտէլի» աշխատությանը:

ՏԱՐԱՆԻԹ, ա. Տարբեր նյութ ունեցող: Առաջին միաւորութիւն ստոյգ և
ճշմարիտ՝ հոմանիւք մասնաւորաբար որոշեցելոց. որոց ոչ ինչ տարանիւք
ընդ մեջ երևի. որպէս երկուց ջահից լուցելոց միաւորութիւն լուսոյն: - 476.
ՂԱՄՅԲ-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ՏԱՐԵՐՈՒՐ, գ. Ննջեցյալի տարին բոլորող օրը: Զի՞նչ է եօթնօրէքն և

ամսագլուխն և տարեթուրը: - 683. Իսկ ամսագլուխն և տարեթուրը նույնպես յերեք դէմս է: - 683. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ՉՏԳԳ**-ին:

ՏԵՍԱԿԱՔԱՐ, մ. Մտավորական, իմանալի: Այլ ի մարմինն նիւթօրէն և սկզբնաբար. իսկ ի հոգին տեսակաբար և իբր նենթակայոջ: - 567. Եւ այսպէս քարշեալ եղև ի մեզ սկզբնականն մեղք՝ յանհնազանդութենէ հոգոյն և ի ցանկութենէ մարմնոյն. անցեալ ի ծնունդս նորա նիւթապէս ի մարմինս, և տեսակաբար ի հոգիս: - 776. **ՂԱՄՅԲ**-ն «Ըստ տեսակի» բացատրությամբ հղում է **ՉՏԳԲԶ**-ին:

ՏԵՍԱԿԱՆ, ա. Երևակայորեն, մտքով: Երկու հաւն՝ կրկին զօրութիւնք ի մեզ. տեսնական և գործնական: - 368. Զի գործնականան մեռանիմք ընդդէմ մեղացն. և տեսնականան մտօք թռչիմք ի դրախտն որ է՝ դաշտ երկնային: - 368. **ԱԶԲ**-ն նույն իմաստով բերում է՝ **ՏԵՍԱԿԱՆ** բառածևը: **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ՉՏԳԳ**-ին:

ՏՐՏԱԿԵԱՑ, ա. Տխրամած, մեկամաղծոտ: Եւ որ զհողն ունի, տրտմալեաց է և ծանրաշարժ և ծոյլ մարմնով: - 245. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ՉՏԳԲԶ**-ին:

ՏՕՆԱՅՄԱՅՔ, գ. Գուշակության, դյուբի, հմայության համար գործածվող իր: Այլ և թերափն՝ իղծք ասէ. և թերափիմք՝ տօնահմայք: - 425. Երեմիա Մեղրեցին նույնպէս **ԹԵՐԱՓԻՄ** բացատրում է՝ տօնահմայս: Հրաշյա Աճառյանը, ապա նաև Ստեփանոս Մալխասյանցը **ԹԵՐԱՓԻՄ** բառի բացատրության մեջ հիշատակում են նախնիների տված «տօնահմայք» բացատրությունը նույնպէս, ընդ որում, երկուսն էլ այն համարում են սխալ, քանի որ **ԹԵՐԱՓԻՄ** եբրայերենից թարգմանաբար նշանակում է ըստ Աճառյանի՝ «մարդանման կերպարանքով տնային կուռք», ըստ Մալխասյանցի՝ «մարդակերպ տնային կուռք»: Ստ.Մալխասյանցը, բերում է «տօնահմայք»-ի առանձին բացատրություն, սակայն հարցականով, այն է՝ «Հմայութեան տօն»: Փաստորեն, չունենալով «տօնահմայք»-ի հստակ բացատրությունը, այն, այնուամենայնիվ, սխալ է համարվել: Տաթևացու բացատրությունը բերում ենք ամբողջությամբ. «Եփուտն հոմանուն է. քանզի կոչի ուսանոց. և կոչի վիճակ: Այն որ ուսանոց է, որպէս վակաս քահանային. և որպէս մայրն սամուէլի արար: Եւ այն որ վիճակն է՝ ծիրանեգոյն հանդերձ է. որ զսեղան հացին և զխնկոցն ծածկէին. և տեսութիւն կամ փրկութիւն թարգմանի: Իսկ թերափն է բոլորակ հանդերձ ծածկոյթ տապանակին: **Եւ զայս գործի հմայութեան առնէին.** և քաւութիւն թարգմանի: **Այլ և թերափն՝ իղծք ասէ. և թերափիմք՝ տօնահմայք»**: - 425:

ՏՕՆԵԼԻ, ա. Տոնելու ենթակա որևէ բան: Դարձեալ ասեմք եթէ՛ տօնօղթս և տօնելիք թժան է: - 616. Վասն որոյ տէրունի՛ է տօնելի միշտ: - 642. **ԼՅԳԲ**-ն հղում է **ՆԲԳ**-ին:

ՑՆԾՂԱՅ, գ. Երաժշտական գործիք: Ասափ և Դիթան ցնծղայիւք երգէին: - 640-641. Բառարանները վկայում են **ՏՆԾՂԱՅ** ձևը: **ՀԱԲ**-ը հղում է Բարսեղ Կեսարացուն:

ՓՇՈՏ, ա. Փշածածկ: Եւ եերորդ՝ ո՛չ ևս թզենեալ՝ այսինքն դառն վարուք ստուերանալ. զի տերև թզենւոյն դա՛ռն է և փշոտ ըստ մեղացն առակի: - 281. **ՆՂԲ**-ն և **ԱԶԲ**-ն **ՓՇՈՒՏ** բառածևը բացատրում են՝ «**ՓՇՈՏ**». վերջինս առանձին բացատրությամբ չի բերվում: **ՀԱԲ**-ը բերում է նոր բառերի մեջ:

ՓՈՒՆԱՐԿԱՊԷՍ, մ. Փոխարինելու միջոցով: Երկրորդ՝ ասել զնոյն աստուածն մարդ. զնոյն մարդն աստուած. ո՛չ փոխարկապէս, այլ փոխատրապէս: - 77. **ԼՅԳԲ**-ն հղում է Գրիգոր Տաթևացու «Լուծումն Պառապմանց Կիւրղի» աշխատությանը:

ՓՈՇԻԱՆԱԼ, չբ. Փռչի դառնալ: Տասներորդ՝ զի յայսմանէ հաստատեսցի ի մեզ հաւատ յարութեանն. որպէս զառաջինն ի հողոյ ստեղծ զմեզ, դարձեալ ի յարութեանն ի նոյն հողոյն լուծեալ և փռչիացեալ՝ յարուցանէ աստուած: - 229. **ՂԱՄՂԲ**-ն հղում է **ԳՏԳՔԱ**-ին:

ՓՈՇԻԱՆԱԽՍ, չբ. Ջղջալ: Յայս միտս՝ յորժամ փռչիմանիմք ի վերայ բանի կամ տրտմիմք, ատամամբք զմատն խածանեմք: - 670. ...լալ և կրճել ատամանցն. փռչիմանիլ, տխրիլ, և ոչ ինչ օգտիլ: - 671. **ՆՂԲ**-ն բերում է **ՓՈՇԻԱՆՈՒԹԻՆ** ձևը: **ՀԱԲ**-ը Տաթևացու բառագործածությունը վկայում է՝ հղելով «Գիրք քարոզութեան» Չմեռան հատորին: **ՂԱՄՂԲ**-ն հղում է միջնադարյան մի շարք հեղինակների:

ՓՈՒԶ, ա. Սնամեջ, դատարկ: Իներորդ՝ զի որպէս կողից երեսն որ ի փորն մայի՛ կոկ գոլով և մզղնատեսակ. իսկ մէջն փուչ և մրրախառն. այսպէս սէրն զոր ցուցանէ առ այրն, նօսր առ ի ցոյցս՝ և երեսս միայն ունի. իսկ ի սիրտն զմրուր դառնութեան: - 276. **ՓՈՒԶ** բառահողվածի տակ **ՀԱԲ**-ը մատնանշում է. «արմատ առանձին անգործածական» (**ՀԱԲ**, հ. **Դ**, **Ե**, 1979, էջ 525), մինչդեռ այն գործածական է եղել թե՛ Տաթևացու օրերում, թե՛ արդի հայերենում (առավելապէս խոսակցականում և բարբառներում): Վկայում է նաև՝ **ՍՄՂԲԲ**-ն: **ՂԱՄՂԲ**-ն հիշատակում է **ՓՈՒԶ** ձևը՝ հղելով Ամիրդովլաթ Ամասիացու երկերին:

ՓՈՓՈՒՏԵԼԻ, ա. Փոփոխելու ենթակա: Այսպես անժամանակն զժամանակեայս. անմարմինն զմարմնաւորս. անփոփոխն գփոփոխելիս. անսկիզբն զսկզբնաւորքն. և զայլսն նմանապէս: - 113. Ունի ևս յոթ գործածություն: **ԱԶԲ**-ն **ՓՈՓՈՒՏԻՄ** բառահոդվածի տակ բերում է նաև՝ **ՓՈՓՈՒՏԵԼԻ** ձևը՝ «կամ **ԱՆՏ**, որ փոփոխելով իցէ» ոչ հստակ բացատրությամբ: **ՂԱՄՅԲ**-ն հղում է միջնադարյան մի շարք հեղինակների, այդ թվում և՝ **ԳՏԳՅ**-ին:

ՔԱԼԱՍԻԿԷ (անստույգ նշանակությամբ բառ). գ. Լյարդի վերին երակը: Եւ կոչի վերին երակն քալասիկէ: - 244: Միայն մեկանգամյա գործածությամբ **ՅԱԲ**-ը վկայակոչում է միայն Տաթևացուն: **ՂԱՄՅԲ**-ն դարձյալ հղում է **ԳՏԳՅ**-ին:

ՔԱԾԱԲԱՐԻ, ա. Կնաբարո: Եօթներորդ՝ քածաւարին. այլամազն խառնեալ. զանազան բարուց նշանակ: - 371. **ԵՄԲՅ**-ն «քածաւարոտն» բացատրում է՝ «ձողձողեալ այլախառն մազովն է», որն իր հերթին օգնում է հասկանալ Տաթևացու վկայած **ԱՅԼԱՍԱԶ**-ը: **ՅԱԲ**-ը վկայում է Տաթևացու գործածությունը՝ **ՔԱԾԱԲԱՐՈՏ** բառահոդվածի տակ: **ՂԱՄՅԲ**-ն «Կրտած, ներքինացրած» բացատրությամբ հղում է **ԳՏԳՅ**-ին:

ՔԱԿԱՆՕԹ, գ. Յույն արքեպիսկոպոսի զգեստի ձևավորում: Երկրորդ՝ Արքեպիսկոպոսք. որ թարգմանին եպիսկոպոսապետք. և սքեմ նոցա քականօք և պղնձաւոր. և փիլոն. և ի վերայ նորա եմփորոն **դ** կրկին խաչիւ շուրջ զիւրև: - 607. Դարձյալ մեկանգամյա գործածությամբ **ՅԱԲ**-ը վկայակոչում է միայն Տաթևացուն: **ՂԱՄՅԲ**-ն «Յույն արքեպիսկոպոսի զգեստի մաս» բացատրությամբ հղում է **ԳՏԳՅ**-ին: **ԼՅԳԲ**-ն հղում է **ՍԳՆԲ**-ին:

ՔԱՅԱՍԱՅԹԱՂԷՔ, գ. Քահանայի թաղման կարգ: Եւ նոյն գքահաւնայթաղէքն, որ ունի է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ գաւառի ի վաղարշապատ քաղաքի ի վկայարանս սրբոյն հռիփսիմի. յետ **ճժա** ամի սրբոյն գրիգորի [է արարեալ]. զի մինչև ցայն հնովն վարեին: - 659. **ՆՅԲ**-ն և **ԱԶԲ**-ն վկայում են **ՔԱՅԱՍԱՅԹԱՂ** ձևը: **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ՔԱՅԱՍԱՅՕՐԴՆԷՔ, գ. Քահանայի օրհնության կարգ: Իսկ վասն քահաւնայօրհնէիցն, սուրբն սահակ է արարեալ. յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրոյ. ի նաւասարդի ամսեանն որ օր մի էր. և յիշատակ սուրբ կարապետին արար գքահաւնայօրհնէքն: - 659. **ՂԱՄՅԲ**-ն հղում է **ԳՏԳՅ**-ին:

ՔԱՐԹՈՇ, գ. Մողեսի տեսակ: Ասեմք եթէ՝ մողեզն և կոկորդիլոսն որ քարթոշ ասեն, և յերկրի ազգի ազգի զեռունք արիւն ոչ ունին: - 511.

Բառարանները վկայում են **ՔԱՐԱԹՈՇ** ձևը: **ԱՉԲ**-ն բերում է երկու ձևն էլ՝ առանց հեղինակային վկայության: **ՂԱՄԴԲ**-ն հղում է միջնադարյան մի շարք հեղինակների, այդ թվում և՛ **ԳՏԳԳ**-ին:

ՔՆԱՏԵՂ, գ. Քունք: Ներքին կգակն և վերին. և **բ քնատեղը** մին ոսկր. և գագաթն: - 243. **ՂԱՄԴԲ**-ն հղում է միջնադարյան մի շարք հեղինակների, այդ թվում և՛ **ԳՏԳԳ**-ին:

ՔՆԱՓ, ա. Քնկոտ: Եւ ոմանք ասեն՝ թէ սեաւ մաղծն առնէ տրտմութիւն և սրտմտութիւն. և խարտէշն զբարկութիւն և զմախանք. արիւնն արի և վայրաբեր. և պալղամն ծոյլ և **քնափ**: - 245. Թէ կրօնաւոր է՝ հարցանէ թէ ծոյլ եղեա՞լ է յաղօթքն. կամ անհնազանդ. թէ բղջախոհ. թէ յատուկ իրք ունօղ. թէ պճնօղ. թէ որոնօղ լաւ կերակրոց և ըմպելեաց. թէ **քնափ** և թէ կռօղ: - 601. **ԵՄԲԳ**-ն վկայում է՝ «քնով ափշեալ» բացատրությամբ: **ՅԱԲ**-ը վկայում է Տաթևացու գործածությունը: **ԼԳԳԲ**-ն հղում է **ՍԳՆԲ**-ին:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

***ԱՂԱՐՈՒՔ**, գ. Տաթևացին շինականի երեխայի ծննդյան օրը կոչում է ԱՂԱՐՈՒՔ. «Նախ՝ որպես հասարակ շինականք ի ծննդեան զաւակաց զմին օրն պատուեն աղարուք կոչելով»: - 321: Եթե հիմք ընդունենք **ՆՂԲ**-ի՝ **ԱՂԻ(Ք) - Որդի աղեաց. Սիրելի զաւակ.** բացատրությունը, ապա կարելի է մեկնել՝ **«զավակ, երեխա»:** Կա նաև մեկ այլ տարբերակ. «Հայերեն զաւառական բառարան»-ում **ԱՂ** բառահոդվածի տակ Սեբաստիա, Պօլիս բարբառների համար բերվում է մարմնի այն մասի բացատրությունը, «որ կը շոշափե ծննդական գործարանները» (Ղարաբաղի բարբառում՝ **աղուէսինք**, ըղվետութ) մնանատիպ բացատրություն բերում է նաև Ստեփանոս Մալխասյանցը «Հայերեն բացատրական բառարան»-ում, այսինքն այս կամ այն կերպ բառը, եթե մշանակում է **ծնունդ, ժառանգ** (այս դեպքում, ծագումնաբանորեն դրա հետ կարող ենք կապված տեսնել նաև **ԱՂԽ** բառը՝ «ցեղ, զարմ, ժողովուրդ» բացատրությամբ), ապա բառը կարելի է համարել **գոյական հիմքով կազմված ածանցավոր բառ** (-ուք գոյականակերտ վերջածանց ունեն ԱՅՐՈՒՔ, ԾԵԾԿՈՏՈՒՔ, ՍՐՏԵՍԱՆՆՈՒՔ և այլ բառեր): Հօգուտ **ծնունդ, ժառանգ** բացատրության վկայում է նաև **ԱՂՈՒՐԻ** (ըստ **ՆՂԲ**-ի՝ «ուղէշ, շառաւիղ», ըստ Աճառյանի՝ «որթի տաշտաթաղ անելու ճիւղը», ապա՝ «սերունդ, շառաւիղ». այն չստուգաբանված բառերի շարքում է, որին հայագետը տալիս է «հազուադիւս» պիտակը) բառի գոյությունը հայերենում, սակայն այս դեպքում պետք է բացատրել **ԱՂՈՒՐԻ-ԱՂԱՐՈՒՔ** անցումը: Բառակազմական կաղապարը փոխվում է, եթե այն դիտարկենք կապված **«ԱՂԱ»** բառի հետ (ԱՂԱՐՈՒՔ՝ այսինքն աղալու, ուտելու, ծամելու գործողություն). այս դեպքում էլ կունենանք բայական հիմքով կազմված ածանցավոր բառ: Որևէ բառարան չի վկայում:

ԱՐԵԳՈՅՆ, ա. Խիստ աղի: Աղեգոյնը յարտօսք աչաց: - 786. Իսկ ի ներքուստ, ի լինիլ տրտմութեանց՝ խուճապեալ մարմնոյն հոսի մաղձ դառն ի ստամոքս որովայնի. և վերացեալ զոլորշեաց նորա գօրէն շոգոլեաց պուտկի առ խելապատակս գլխոյ. և ծանրացեալ անտի թորի՝ առ բիրն ասացեալ ական. չոր գոլով և աղեգոյն ի սևատեսակն մաղձոյ: - 787. Որևէ բառարան չի վկայում:

ԱՂՕԹԵԼԻ, ա. Աղոթելու, աղոթելու համար: Որով յայտ է՝ զի ի կէս աւուրն որ է **ժք** ժամն՝ աղօթելի՝ է մեզ յամենայն օր. և զկէսն այլ՝ մարմնական հոգոց պարապիլ. գործոյ աշխատութեան՝ ննջելոյ՝ կամ այլ ինչ իրաց: - 623. Որևէ բառարան չի վկայում:

ԱՄԲԱՐՏԱՆՈՒԹԻՒՆ, գ. Ամբարտավանություն, մեծամտություն: Եւ սկիզբն ամենայն մեղաց ամբարտանութիւնն է որպէս ասէ սիրաբ: - 569. «Գիրք հարցմանց»-ի «Ձի՞նչ է ամբարտաւանութիւն» ենթավերնագրում հինգ անգամ հանդիպում ենք «ամբարտաւանութիւն» բառին և միայն մեկ անգամ՝ «ամբարտանութիւն» ձևին: Չբացառելով տպագրական սխալի հանգամանքը՝ այն, այնուամենայնիվ, բերում ենք:

ԱՄԵՆԱՁՈՅԳ, ա. Խիստ հավասար, ճշտագույն հավաստեցված: Այլ ամենագոյց և հաւասար է միաւորութիւն փրկչին: - 89. Որևէ բառարան չի վկայում:

ԱՅԼԱԳԻԾ, ա. Տարբեր, հակառակ: Դարձեալ՝ կարելին և անկարելին են այլագիծք և այլասեռք. և ոչ կարեն լինիլ մի և նոյն. զի այլասեռ հակակայք են: - 165. Որևէ բառարան չի վկայում:

ԱՅԼԱԿԱՏԱՐ, ա. Այլ կերպ, այլ տեսակ: Իսկ ի հրեշտակս և ի մարդն՝ այլակատար և երկրորդաբար: - 138. Որևէ բառարան չի վկայում:

ԱՅԼԱՎԻՃԱԿ, ա. Այլ կարգ ունեցող, այլ աթոռի պատկանող: Եւ թէ ոք ասիցէ, այլավիճակք այլ և այլ աթոռոց ճշմարիտ երկի զի ինքնագլուխք են: - 541. Որևէ բառարան չի վկայում:

ԱՆԱՆՁԱՏՈՒԹԻՒՆ, գ. Չբաժանվող, անբաժան լինելը: Ո՞րպէս է մեծութիւն մեղաց: ...Անանջատութեամբ. որպէս ազահութիւնն: - 565. Որևէ բառարան չի վկայում:

ԱՆԲԱԽԵԼԻ, ա. Անշոշափելի: Դարձեալ և այլ յատկութիւն երկնից որպէս ասացաւ՝ բարձր: ...Չորրորդ՝ կարճր և անբախելի: - 184. **ԱՁԲ-ն ԱՆԲԱԽ՝** բացատրում է «անշարժելի», այսինքն դիմում է «-ելի» վերջածանցին, ինչը անսովոր է թե՛ **ՆՂԲ**-ի, թե՛ **ԱՁԲ**-ի համար: Որևէ բառարան չի վկայում:

ԱՆԲՈՎԱՆԴԱԿԱՊԷՍ, մ. Անպարփակելի, անսահմանափակելի: Ձի բազմանայ և ի միութեան մնայ. բովանդակի անբովանդակապէս. և բաժանի անբաժանապէս. որ է մի և նոյն տեսակաւ և գոյացութեամբ որպէս ցուցաւ: - 530. Որևէ բառարան չի վկայում:

ԱՆԳՈՅԱՆԱԼ, չբ. Անէանալ: Յաղագս որոյ աշխարհ գոյացեալ. երբեմն մշտնջենաւոր գոյութեամբ, անգոյանալ երբէք ոչ կարէ: - 162. Եւ եթէ այս սուտ է հարկ է ասել քեզ կամ մնալ ի թուփն, կամ փոխիլ յանէն և անգոյանալ որպէս ցուցաւ: - 253. Բայական ձևը որևէ բառարան չի վկայում:

ԱՆԴՐԱՆԿԱՊԷՍ, մ. Անդրանիկ կերպով, իբրև առաջին: Իսկ տերն մեր էր

անդրանիկ ի հօրէ և անդրանիկ ի մօրէ. և անդրանիկ շնորհաց և արդարութեան. և անդրանիկ յարութեան մեռելոց. վասն որոյ անդրանկապէս ընկալաւ զօրէնս թլփատութեան: - 486. Որևէ բառարան չի վկայում:

ԱՆՁՆԱԿԱՆԱՊԵՍ, մ. Անծամբ, անծնապես: Երբեմն նշանակէ՝ զբոլորութիւնն. որպէս ասէ՝ «աստուած սէր է». և այս առաւել լինի անծնականապէս և եականապէս: - 575. Որևէ բառարան չի վկայում:

ԱՆՍԵՂՐ, ա. Առանց մեղրի, մեղր չպարունակող: Եւ վասն անխմոր և անմեղր զոհից. և վասն աղի: - 284. Որևէ բառարան չի վկայում:

ԱՆՈՒՍՈՒՄՆԱՊԵՍ, մ. Անգիտաբար: Ո՛չ թէ նոր իմն տեսակ և կամ նոր աշխարհ. այլ զեղելոցս նախախնամութիւնն. և ի նոյնութիւն կալն հայր կամի և որդի կատարէ. ոչ ծառայաբար և անուսումնապէս. այլ տիրաբար և հանճարով: - 46. **ԱՁԲ**-ն ունի **ԱՆՈՒՍՈՒՄՆԱԲԱՐ** ձևը:

ԱՆՉԱՐՉԱՐԱՊԵՍ, մ. Անչարչարելի: Որև գոն ի յեղեալքս միաւորեալք. որպէս հուր և երկաթ. հոգի և մարմին. որք չարչարին անչարչարապէս: - 76. Որևէ բառարան չի վկայում:

ԱՆՍՏՈՅԳ, ա. Անորոշ, ոչ ստույգ: Դարծեալ՝ անարգապէս ծնանի. և անստոյգ է մահուանն աւուր: - 275. Որևէ բառարան չի վկայում:

ԱՆՎԱՐՁԱՏՐԵԼԻ, ա. Չվարձատրվող, չհատուցվող: Հինգերորդ՝ բանական քննութիւնն անվարձատրելի է: Իսկ հաւատոյն վարձս ընդունի և փառս: - 122. Որևէ բառարան չի վկայում:

ԱՆՓՈՐՁԵԼ, նք. Չփորձել, չտանել փորձության: Զինչ է որ ասէ՝ «փորձեաց աստուած զաբրահամ». և **յակորոս** ասէ՝ «աստուած անփորձէ չարեաց. փորձէ՛ և ո՛չ զոք»: - 160. Որևէ բառարան չի վկայում:

ԱՇԽԱՐՀԱԿԱՁՄՈՒԹԻՒՆ, գ. Աշխարհի կայացման կարգը: Յայտ է յաշխարհակազմութեանն. ըստ որում իւրաքանչիւրքն պատշաճապէս ներգործեցան: - 780. Որևէ բառարան չի վկայում:

ԱՊԱՇԽԱՐԵԼԻ, ա. Ապաշխարելու, զղջալու ենթակա: Եւ արդ՝ անգիտութեամբն ներելի՛ է. իսկ գիտութեամբն ապաշխարելի. իսկ չարութեամբ մեղքն է պատժելի. կամ աստ ժամանակեայ, կամ անդ յաւիտենական: - 701. Որևէ բառարան չունի վկայություն:

ԱՊԱՊ, գ. Ապուպապ, որ յոթերորդ սերնդի սկիզբն է: Առաջին մեք, և հայրն, և պապն մեր. հօր պապն, և պապու հայրն, և պապուն պապն, և

ապպապ։ որ է՝ է. նմանապես և ի մօր կողմն: - 611. **ԱԶԲ**-ն բերում է **ԱՊՈՒ-ՊԱՊ** ձևը՝ «հին պապ» բացատրությամբ: Որևէ բառարան չունի վկայություն:

ԱՋՈՒԱԾ(Ք), գ. Աջակողմյան, աջ կողմից հարող, ածող: Եւ թէ յաջոյ յաջուածոց խենեշուքին մեղկէ, վերնոյն հեշտալեաց հաւատա՛ւ և ո՛չ խաբիս: - 770. Բառը, հավանաբար, ստեղծվել է **աստուած** բառի կաղապարի համաբանությամբ: **ԱԶԲ**-ն վկայում է **ԱՋՈՒ** ձևը՝ «աջ» բացատրությամբ: Որևէ բառարան չունի վկայություն:

ԱՌԱՍՊԵԼԱԽՕՍԵԼ, չբ. Առասպելաբանել: Թողլով զայլս որ յազգս այսմ. առասպելախօսեն արտաքին բանք: - 788. Որևէ բառարան չունի վկայություն:

ԱՌՆՉԱՊԵՍ, մ. Փոխայայնանավորված: Փոխկապակցված: Եւ այս թէ առընչապէս, և թէ բնակցապէս ուղղակի՛ իմասցի...: - 108. Որևէ բառարան չունի վկայություն:

ԱՌՕՂ, գ. Վերցնող, ընդունող: Իսկ միաւորութեանն իմանալ՝ ոչ է ինչ մեծ. այլ է հաւասար որպէս առօղն նոյնպէս և առեալն զոյգ աստուած և մարդ: - 39. Ուստի մինն տըւօղ և միւսն առօղ ըստ նոցայն. այս է բանն և մարդն: - 66. Որևէ բառարան չունի վկայություն:

ԱՋԴՈՂՈՒԹԻՒՆ, գ. Ազդեցություն, զորություն: Եւ զանազան տեսութիւնք վարդապետաց չեն ընդ դէմ միմեանց. այլ զորօրինակ ոմն զական պատւականութիւն, և այլ ոմն զբնութեան, և կէսք զաստղողութեան, և ոմանք զորակացն գեղեցկութեանց, պատմեն զմի և զնոյն ական իր: - 781-782. **ԱԶԲ**-ն ունի **ԱԶԴՈՂՈՒԹԻՒՆ**: Աճառյանը տարբերակում է **ԱԶԴ** և **ԱՍՏ**. առաջինը «լուր», երկրորդը՝ «ուժ» իմաստով, ըստ այդմ «ուժ, զորութիւն» իմաստով ճիշտ է Տաթևացու գրչագրությունը:

ԱՍՈՂ, գ. Խոսքը արտաբերող անձ: Զի մի՛ է ձայնն յառաջ եկեալ յասողէն. իսկ լսողք՝ առաւել և նըւագ ընդունին: - 131. Այլ և կարդացողին պարտ է նմանեցուցանել զհւր խօսքն ասողին գրոց: - 643. **ԱԶԲ**-ն վկայում է՝ առանց հեղինակային վկայության:

ԱՍՏԻՃԱՆԱԶԵԻ, ա. Աստիճանի ձև ունեցող: Եւ սկսան շինել հաստահիմն լայնամիջոց. աստիճանաձև ելիւք և իջիւք: - 296. Որևէ բառարան չունի վկայություն:

ԱՐԱՏՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. Արատավորը սիրող, մեղսավոր: Թէ ի բերան

պատերազմի յեւ անմահին և ի մուտ մահկանացուին. դիցես պահապան բերանոյդ. լար կարմիր շրթանցդ. այսինքն հաւատով սիրով զօրացեալ. և ո՛չ բաժանիլ ի քնասիրութիւն և յարձաքսիրութիւն. յառաքինասիրութիւն. և յախտասիրութիւն. յընկերսիրութիւն և յարատասիրութիւն: - 770-771. Որևէ բառարան չունի վկայություն:

ԱՐԵՆԱԶԳՍ, գ. Արյունակից, ազգակից: Եւ որպէս ի մէջ արենազգացն ո՛չ լինի խնամութիւն մինչև ի չորրորդ ծնունդն: - 611. Որևէ բառարան չունի վկայություն:

ԱՐԵՆԱԿՑՈՒԹԻՒՆ, գ. Արյունակցություն, արյունակից լինելը: Զի հայրն և որդին և թոռն որ է՝ **գ.** և թոռին թոռն որ է՝ **դ.** որ լինի է, և եզր արենակցութեան: - 611. Որևէ բառարան չունի վկայություն:

ԱՐԵԻԱՊԵՍ, մ. ճառագայթակերպ, լուսակերպ: Իսկ տիւ և գիշեր, այսինքն արևապէս հասունն նոցա՝ տիւ է համարեալ. և անհասութիւն խորոցն աստուծոյ՝ գիշեր: - 767. Որևէ բառարան չունի վկայություն: Ըստ Աճառյանի՝ «արեգակն աստղն է, իսկ արև նրա լոյսը» (**ՀԱԲ**, հ. **Ա**, էջ 311). ըստ այդմ՝ «արևապէս» պետք է հասկանալ «լույսի մման, ճառագայթակերպ»:

ԱՐՅԵՍՏԱԽՈՐ, գ. Արիեստավոր, վարպետ: Հինգերորդ՝ միտքն տեսանէ որպէս ներգործական պատճառ և արիեստաւոր. և զգայութիւնն որպէս գործիական պատճառ և միջնորդ: - 121. Երրորդ՝ և թէպէտ իցեն բազում արբանեակք շինածոյն, այլ մինն է արիեստաւորն և պատճառ: - 164. Տես **ԱՐՅԵՍՏԱԿԱՆ**:

ԱՐՏԱԳՈՒԲԵԱԼ, ա. Գունաթափված, գունազրկված: Իսկ մարդասիրին աստուծոյ տեսեալ արտագունեալ զպատկեր իւր, կամեցաւ նորոգել զնա: - 776. Իսկ ստինք յատկապէս գործի՝ է բնութեան ի պէտս սննդեան այնոցիկ ծննդոց զօրէն սերմանեաց երկրի. յորմէ հիւթոյ արեանն գոյացելոյ, ընդ ազուգայս երակաց արտագունեալ որակօք կաթն փոխակերպեալ: - 786. **ԼՂԳԲ**-ն հղում է **ՍԳՆԲ**-ին:

ԱՐՏԱՂՈՍՈՒՄՆ, գ. Դուրս հոսելը: Նոյնպէս և նիւթն սկզբնական ո՛չ յառնէ ի ծնօղս որ աւելորդ արտահոսումն է նոցա. այլ յառնէ ի ծնեալ մարմինն որոյ հիմն է շինուածոյն: - 719. **ԱԶԲ**-ն բերում է **ԱՐՏԱՂՈՍՈՒԹԻՒՆ** ձևը՝ «դուրս վազելը, վազածը» բացատրությամբ:

ԱՐՏԱՅԱՅՏՈՒՄՆ, գ. Երևալը, ցույց տալը: Ո՛չ ըստ բաւական բանի

առեալ գլուծումն. այլ ըստ կարի տկարութեան արտայայտումն. մանաւանդ հարկեալ ի սիրոյ քունդ եղբայրական խնդրոյ: - 788. Որևէ բառարան չունի վկայութիւն:

ԱՐՏԱՔԱՐՇԵԼ, նբ. Դուրս քաշել, դուրս բերել: Եւ որպէս այլքն այլ ինչ, և սա՛՛ զծխատեսակ ջերմութիւն սրտի ընդ ցնցուղս ծայրից արտաքարշելով ի կրկին կողմանէ որպէս ասեն բժիշկք: - 786. Որևէ բառարան չունի վկայութիւն:

ԱՐՏԱՔՍԵԼԻ, ա. Վնդդելի, դուրս քշելու ենթակա: Եօթներորդ՝ զի լի՛րբ է ոչխարն. և լի՛րբն արտաքսելի՛ է յեկեղեցոյ. որպէս յուրա լրբութեամբ ել արտաքս: - 617. Որևէ բառարան չունի վկայութիւն:

ԱՐՓԻԱԾԻՆ, ա. Արևից ծնված, լուսափայլ: Գիր քոյոյ վսեմամիտ խոհեմութեանդ ո՛վ արփիածին հարազատ, և վերնոյն սիօնի նազելի զաւակ Գեորգէոս Րաբունեայ պետ: - 773. Գրաբարում՝ «**ԱՐՓԻ**» բաղադրիչով շուրջ երեք տասնյակ բառ է գործածվել. Տաթևացին ավելացնում է **ԱՐՓԻԱԾԻՆ**-ը: **ՂԱՄՅԲ**-ն «արևածին, պայծառ» բացատրությամբ հղում է **ԺԵ** դարի Յայերեն ձեռագրերի հիշատակարաններին: **ԼՅԳԲ**-ն վկայում է՝ իբրև Գրիգոր Տաթևացուն տրված մակդիր, սակայն ինչպէս տեսնում ենք, այն Տաթևացին արդեն իսկ գործածել է «Գիրք հարցմանց»-ի պատվիրատուին՝ Գևորգ Րաբունապետին ուղղված նամակում, այսինքն՝ աղբյուրը «Գիրք հարցմանց»-ն է:

ԱԻԵԼ, ա. Ավելի, գերազանցող, առավել: Եւ **ե** օր ևս աւել աւուրքն, որ լինի **ժա** օր: - 191. **Ի. Ա. և Լ.** ամն կան աւել ապա՛՛ աւարտեցաւ: - 635. **ՂԱՄՅԲ**-ն հղում է «Վիմագիր տարեգրին»: Բառարանները բերում են **ԱԻԵԼԻ** ձևը: **ՅԱԲ**-ը այն համարում է «արմատ առանձին անգործածական» բնիկ հայերեն բառ, այսինքն՝ ենթադրելի է, որ առանձին արմատը ավելի վաղ կիրառություն է ունեցել:

ԱՔՍՈՐՈՒՄՆ, գ. Աքսորելը, վտարելը: Վեցերորդ՝ աքսորումն ի հայրենեաց: - 751. Որևէ բառարան չունի վկայութիւն:

ԲԱԶՍԱԲԱՇԽՈՒԹԻՆ, գ. Շատերին բաշխելը, մասնահանումը: Զագահութիւնն՝ բագմաբաշխութիւնն. որ ետ զմարմին իւր ի կերակուր և զարիւնն իւր ընպելի. զհոգին ի զին. զջուր կողին ի լուացումն. զհանդերձն՝ խաչողացն. զմարմինն՝ աշակերտացն. և զմայրն՝ յոհաննու: - 489. Որևէ բառարան չունի վկայութիւն:

ԲԱԶՄԱԶԱՆԱԴԵՍ, մ. Բազում ձևերով: Դարձեալ՝ հասարակն և յատուկն աստուածային՝ բազմազանապէս ասի ի սրբոյն դիոնիսեայ: - 105. Որևէ բառարան չունի վկայություն:

ԲԱԶՄԱՔՐԻՍՏՈՍ, գ. Բազում քրիստոսներ ունեցող: Եւ ես ասեմ քեզ զի թէ մասունքն քրիստոսի քրիստոս է, ապա բազմաքրիստոս էք և դուք: - 92. Որևէ բառարան չունի վկայություն:

ԲԱԺԱՆԻՉ, գ. Սահմանագատող: Երկրորդ՝ բաժանիչք և սահմանք են երկրի: - 211. Որևէ բառարան չունի վկայություն:

ԲԱԼԱՍԱՄԻՆ, գ. Դարմանող միջոց: Ասեմք թէ, ի հնարից չարին բարձին մարդիկք զխոստովանութիւնն որ հարկաւոր էր, յայն ապաւինեալ թէ՛ ի վերջին օրն օժանիմք ձիթով բալասամինաւ և արդարանամք: - 604. **ՆՐԲ**-ն վկայում է **ԲԱԼԱՍԱՆ** և **ԲԱՂԱՍԱՄՈՆ** ձևերը. **ԱՉԲ**-ն բացատրում է՝ «պալսամ». հավանաբար ճիշտ գրչագրությունը **ԲԱԼԱՍԱՄԻՆ** ձևն է՝ **ԲԱՂԱՍԱՄԻՆ** - **ԲԱՂԱՍԱՄ** - **ԲԱԼԱՍԱՆ** անցումով:

ԲԱՆԱԿՐՈՒԹԻՒՆ, գ. Բանականություն, խելամտություն: Վասն որոյ յայսմանէ և յառաջ հաստատի մարդ ի հանճարս բանակրութեան և ի տեսութիւն ինացման մինչև ի **խթ** ամն որ է եօթնիցս եօթն: - 265. Որևէ բառարան չունի վկայություն:

ԲԱՐԵԳՈՒՆԻՍ, չք. Առավել բարիանալ, դառնալ բարեգոյն: Ձի տնկական հոգին յօժարի՛ գոլ. և զգայականն բարեպէս գոլ. և բանականն ևս բարեպէս գոլ. զի ո՛չ երբէք հանգչի, մինչև միաւորեսցի ընդ ևս բարեգունին: - 249. Որևէ բառարան չունի վկայություն:

ԲԱՏԱՐՉԱԿԱԴԵՍ, մ. Բացարձակ կերպով: Ձի իմաստութիւնն է ճանաչումն աստուծոյ բացարձակապէս. իսկ հանճարն է ճանաչումն համեմատաբար. այսինքն համեմատելով զստեղծուածս առ ստեղծօղն: - 270. **ՅԱԲ**-ը դնում է նոր բառերի մեջ՝ առանց վկայություն:

ԲԱՅՈՐՈՇ, ա. Ձանազանվող, հատուկ: Իսկ ենթադրութիւն է զանազանելին և ո՛չ զանազանեալն բացորոշ յատկութեամբ. որպէս ոմն մարդ: - 174. Իսկ անձն է զանազանեալ հանդերձ բացորոշ յատկութեամբ. որպէս պետրոս: - 174. **ԵՄԲԳ**-ն բերում է՝ **ԲԱՅՈՐՈՇՈՒՄՆ** ձևը՝ «անջատումն կամ մերժումն» բացատրությամբ: **ՅԱԲ**-ը դնում է նոր բառերի մեջ՝ առանց վկայություն:

ԲԱՅՈՐՈՇԱԿԻ, մ. Որոշակի, զանազանապէս: Իսկ ի վաղիւն ո՛չ գիտեմք

թէ անծրն է թէ ոչ. զի գիտեմք որ մինն լինի. այս՝ կամ այն՝ որ և հանդիպի. անծրն՝ կամ ո՛չ. այլ ի հարկէ բացորոշակի ո՛չ գիտեմք զմինն: - 9. Եւ թէ ոք ասիցէ, բազում բանք մեր բացորոշակի լինին ի հանդերձեալն. որպէս թագաւորն յորժամ ասէ շինեսցի քաղաք, և շինի. և ասեմք թէ այսանուն մարդ մեռանելոց է, և մեռանի. և աղօթեմք և լինի. և այլն մմանապէս անէծք կամ օրհնութիւնք: - 9. Որևէ բառարան չի վկայում:

ԲԱՅՈՐՈՇԱՊԷՍ, մ. Որոշակիորեն, հստակ: Եւ որովհետև ծանեաք զայս, արդ՝ պատասխանեմք առարկութեանցն, եթէ որքան է՝ ի հարկաւոր պատճառէ՛, լինի բացորոշապէս բանն ճշմարիտ. որպէս բան թագաւորի. և մարդոյն մեռանիլն. և արև ծագելն. և լինիլն զարուն յետ ծմռան: - 10. Որևէ բառարան չունի վկայություն: **ԱԶԲ**-ն ունի՝ **ԲԱՅՈՐՈՇԱԲԱՐ**՝ «բացայայտ, որոշակի» բացատրությամբ:

ԲԱՅՈՒՆՉՆ, ա. Լայն ռունգեր ունեցող: Բացունչն՝ զուարթ է և ուժեղ: - 246. **ԼՅԳԲ**-ն հղում է **ՍԳՆԲ**:

ԲՆԱԿԱՆԱԿԱՆ, ա. Բնավորապէս, բնական: Դարծեալ՝ հանճարն է ի բնականականն. գիտութիւնն յուսումնականն. և իմաստութիւնն յաստուածաբանականն: - 270. Որևէ բառարան չունի վկայություն:

ԲՆՈՒԹԵՆԱԿԱՆ, ա. Բնությամբ, ի բնէ: Ձի **գ** են եղանակք անուանց. այսինքն բնութեական որ ի մախնւոյն կոչի: - 312. Բնութեական, որպէս ցատունն և ցանկութիւն: - 318. Որևէ բառարան չունի վկայություն:

ԲՈԼՈՐԱՊՍԱՏ, ա. Շուրջ բոլորը պատող, շրջանաձև պատված: Պճղնաւորն կապոյտ բոլորապատ երկինքն է և բեհեզն՝ լուսոյ տարածումն ի ներքոյ...: - 348. Որևէ բառարան չունի վկայություն:

ԲՈՒՐԲԱՌ, գ. Խնկաման: ...և գո՛րծ է նոցա, հրամանաւ քահանային աւետարան կարդալ, քարոզել, և բառնալ քոց և բուրբառ. և նստիլ ամենևին ո՛չ: - 608. Բառարանները վկայում են **ԲՈՒՐՈՒԲԱՌ**, ապա երկրորդաբար՝ **ԲՈՒՐՈՒՎԱՌ**, **ԲՈՒՐՎԱՌ** ձևերը: Հավանաբար, նախնական **ԲՈՒՐԲԱՌ** ձևից անցում է կատարվել **ԲՈՒՐՈՒԲԱՌ**, ապա՝ **ԲՈՒՐՎԱՌ** ձևին. առաջինի դեպքում ունենք **բուրմունքը բառնալ** (ներկայի հիմքով), **բարձրացնել**, երկրորդի դեպքում՝ **բուրմունքը առնել**: Կարծում ենք ավելի նախնական է **ԲՈՒՐԲԱՌ**-ը, որից և անցումը կատարվել է **ԲՈՒՐՎԱՌ**-ին՝ ժողովրդական ստուգաբանության սկզբունքով: Որևէ բառարան չունի վկայություն:

ԲՈՒՐԵԼԻ, ա. Բուրոդ: Եւ յերեքին յաւետարանսն մերձ կացեալ խնկօք քուրելեօք: - 618. Որև բառարան չունի վկայություն:

ԳԱՐՏՆԱԲԱՐ, մ. Թաքնված, ծպտյալ: Չի գոգ նոքա են որովք սատանայ գաղտնաբար հալածե՞ գիււատացեալս: - 708. **ՆՅԲ**-ն, **ԱՉԲ**-ն ունեն **ԳԱՐՏ** հիմքով կազմված **ԳԱՐՏԱԲԱՐ** (գողաբար), ինչպես նաև հաջորդ բառահոդվածի **ԳԱՐՏԱՊԵՍ** ձևերը, և քանի որ նրանք տարբերակված են բերում **ԳԱՐՏ** և **ԳԱՐՏՆԻ** հիմքերով կազմված բառաձևերը, ուստի նրանց վկայությունների հետ բերում ենք **ԳԱՐՏՆԻ** հիմքով կազմված **ԳԱՐՏՆԱԲԱՐ**, **ԳԱՐՏՆԱՊԵՍ** ձևերը:

ԳԱՐՏՆԱՊԵՍ, մ. Գաղտնիորեն: Եւ այսպես լինի կատարեալ. մեղք խառնեալ օտարին գաղտնապէս, ընդ մտածութեանն բնաւորապէս: - 558. Որև բառարան չունի վկայություն: **ՆՅԲ**-ն, **ԱՉԲ**-ն ունեն **ԳԱՐՏԱՊԵՍ** ձևը:

ԳԵՐԵՉՍԱՆՕՐԻՆԷՔ, գ. Գերեզմանի օրհնության կարգ, որ կատարվել է **Ավագ շաբաթվա** ուրբաթ օրը՝ խորհրդանշելով Յիսուս Քրիստոսի գերեզման դրվելն ու դժոխքի ավերումը. «Ձգերեզմանս յորո՞ւմ աւուր պարտ է օրհնել: Պատասխանի: Ի մեծի ուրբաթին: Չի քշաբաթին մեռելո՞ց է և ո՞չ գերեզմանօրհնէք: Եւ այս է խորհուրդն. զի յայնմ աւուր խաչեցաւ քրիստոս, և գերեզմանք բացան և այլն: Եւ ի նոյն օրն ի գերեզման եմուտ և էջ ի դժոխս և քարոզեաց»: - 684. Չի՞նչ է գերեզմանօրհնէքն: - 684. **ՅԳԲ**-ն գործածական է համարում Ղարաբաղ, Ախալքալաք բարբառների համար՝ «հանգուցեալին գերեզմանը քահանային օրհնել տալու գործողութիւնը» բացատրությամբ: Բառը փոխանցվել է բարբառներ՝ երևոյթի ընդհանրացմամբ և բառիմաստի ընդլայնմամբ, այսինքն եթե ի սկզբանե այն բացառապես վերաբերել է գատկական Ավագ ուրբաթ օրը կատարվող գերեզմանի օրհնության կարգին, հետագայում աստիճանաբար ներառել է ընդհանրապես գերեզմանի օրհնության կարգը. այս իմաստով է վկայում նաև **ՍՄՅԲԲ**-ն:

ԳՈՂԱՑՈՒՄՆ, գ. Գոհանալը, գոհաբանություն հայտնելը: ...վասն որոյ մեզ լեզու լինի և ի դէմս մեր գոհանայ զաստուծոյ ըստ իւրաքանչիւր ժամու. այսինքն յառաւօտն, ի հասարակ օրն, և յերեկոյն. զի գոհացումն է և ո՞չ աղօթք: - 626. Գրաբարյան որևէ բառարան չունի վկայություն: Վկայում է **ՍՄՅԲԲ** -ն:

ԴԱՌՆԱԿԵՐՊ, մ. Խոժոռ, մռայլ: Ապա յայտ է յասացելոցս թէ՛ քրիստոս երևեսցի արդարոցն քաղցրատես, և մեղաւորացն դառնակերպ. որ

նշանակեցաւ ի սիւն ամպոյն ի տուէ և ի հուրն ի գիշերի: - 741. Որևէ բառա-
րան չունի վկայություն:

ՂԱՏԱԿՇՈՒՆ, չբ. Դատել, քննել ճշտությամբ: Երրորդ զմեզ առ այլս
ղատակշռել. այսինքն առ վերինս և ներքինս և հաւասարս: - 745. Որևէ
բառարան չունի վկայություն: **ՆՂԲ**-ն և **ԱՂԲ**-ն նույն իմաստով բերում են
ՂԱՏԱԿՇԻՌ ԼԻՆԵԼ ձևը:

ՂԱՏԱՊԱՐՏԵԼԻ, ա. Դատապարտման, դատի ենթակա: Երկիր որ փոխիլ
հրամայի, է՛ յանցանք ղատապարտելի: - 210. Որևէ բառարան չունի
վկայություն:

ՂԱՏԱՊԱՐՏՈՒՄ, գ. Դատապարտման ենթարկելը: ...այլ դատա-
պարտիլ հարկաւոր է. որպէս դիւաց մեղանչումն և անկումն. որ է մահն և
ղատապարտումն որ է՛ պատիժն: - 667. Որևէ բառարան չունի վկայություն:

ՂԱՏԵԼԻ(Ք), գ. Դատող, դատի մասնակիցներ: Չորրորդ, զի երեք են ղատե-
լիքն. մին դատաւորն, և **ք** դատախազքն. պիտոյ՛ է այսինքն **գ** վկայք: - 742.
Որևէ բառարան չունի վկայություն:

ՂԵԻԱԿՈՉ, գ. Դներին կանչող, ցույց տվող: Վիուկն այն է, որ ի վիաց և
յանդնոց մեռեալս կերպարանեն. դևք ի կերպս մարդկան երկին. զոր
ղևակոչ ասեն և հագիմաթ. և Նշանագէտ, որ ի գերեզմանս ննջէ և նշանաւոր
մարդ կերպարանէ. որպէս զսամուէլ սաւուղայ երևեցոյց հարցուկ կինն: - 388.
Որևէ բառարան չունի վկայություն:

ՂԵՁՕՐՅՆԵՔ, գ. Դեզի օրհնություն: Այլ և ունինք զմարմնաւոր պա-
տարագս զօրինակին. զենմունք վասն կենդանեաց և մեռելոց: Որպէս
տօնականն զատկի և տէրունական տօնից: Անդ և ղեզօրհնէից: Ազապս
մատաղաց. և ոգէհանգիստ: Հատ պատարագի մարտիրոսաց: Եւ վասն
կենաց. և վասն փրկութեան: Եւ վասն ուխտի, խաչի, և եկեղեցւոյ: Պտուղս:
Շօթ: Նաշիհ: Չէթ: Մոմ: Խունկ. և այլն: - 362. **ԼՂԳԲ**-ն հղում է **ՍԳՆԲ**-ին:

ՂԺՈՒԱՐԱԹՈՂՈՒԹԻՒՆ, գ. Դժվար թողություն տրվող, աններելի: Ղժուա-
րաթողութեամբ, որպէս մեղքն որ ընդ դէմ հոգւոյն սրբոյ: - 565. **ԱՂԲ**-ն
ՂԺՈՒԱՐԱԹՈՂ բացատրում է՛ «որ դժուար թողութիւն կուտայ»: Որևէ
բառարան չունի վկայություն:

ՂԺՈՒԱՐԱՅԱՂՈՒԹԻՒՆ, գ. Դժվարությամբ հաղթահարվող: Ղժուարա-
յաղթութեամբ. որպէս հպարտութիւնն: - 565. **ԱՂԲ**-ն **ՂԺՈՒԱՐԱՅԱՂՈ** բա-
ցատրում է՛ «որ դժուար կը յաղթուի»: Որևէ բառարան չունի վկայություն:

ԴԻՏԵԼԻ, ա. Նկատելի, դիտարկելի: Դիտելի՝ է, զի ի ճանապարհի աստի կենաց երկու են ոսոխք. այսինքն դատախազք: - 743. Որևէ բառարան չունի վկայություն:

ԴԻՐԱՍԱՅՈՒԹԻՒՆ, գ. Հեշտություն, հեշտ գլորվել, գահավիժել: Սակայն արմատ մեղացն որ է՝ ցանկութիւնն և դիւրասահութիւնն ի մեղանչելն՝ մնայ. որպէս յայտ է ի մկրտեալսն որք կարեն մեղանչել: - 462. Ունի ևս չորս կիրառություն: Գրաբարյան որևէ բառարան չունի վկայություն: Վկայում է **ՍՄՅԲԲ**-ն:

ԴԻՐԱՍԵՐՏԵԱԼ(Ք), գ. Հեշտությամբ սերտողները: Ութերորդ՝ զի ազատ և անձնիշխան կամօք ընտրեն զբարին և խոտեն զչարն. և դիւրասերտեալք ի բարին, և դժուարաշարժք ի չարն: - 137. Որևէ բառարան չունի վկայություն:

ԴՆԵԼԻ, ա. Դնելու ենթակա: Ամմիտն և անզգայն զոր ասեմք աստուծոյ, ո՛չ ըստ պակասութեան, այլ ըստ գերազանցութեան է ընելի: - 118. Ունի ևս երկու կիրառություն: Որևէ բառարան չունի վկայություն:

ԵԿԱՌՐ, գ. Երկվորյակներ (համաստեղություն): Իսկ Եկաւորն և Կշիռն և Ջրիոսն, ունին զբնութիւն օդոյ ջերմ և գէշ: - 189. Ի խոյն և ի ցուլն և յեկաւորն առնէ զգարուն. որ է հասարակ տիւն և զիշերն **ժք** ժամ: - 190. **ՂԱՄՅԲ**-ն հղում է Առաքել Սյունեցուն, որ Գրիգոր Տաթևացու քրոջ որդին և աշակերտն էր: **ՆՐԲ** - ն և մյուս բառարանները **ԵԿԱՌՐԵՍ**, **ԵԿԱՌՐՈՒԹԻՒՆ** բառերը բացատրում է իբրև՝ «եկ, գալուստ, հասանել»: Բառի «ծղի, քազուկ» (որոնք զույգ կամ կրկնակ են) իմաստով հետաքրքիր վկայություն ունի Աճառյանը. **ԵԿԱՌՐ** բառահոդվածի տակ նա իբրև «նորագիտ բառ» վկայում է նաև Մխիթար Հերացու մեկանգամյա գործածությունը՝ «ծղի, քազուկ» իմաստով. «Ապա թէ գլխացաւութիւն խիստ լինի, զերկու զեկաւորսն՝ որ է ծղին՝ կապէ» (**ՀԱԲ**, հ. Բ, Երևան, 1973թ., էջ 12), այսինքն, կասկածից վեր է, որ բառը գործածական է եղել «զույգ, կրկնակ» իմաստով՝ **Երկուաւոր-երկաւոր-եկաւոր** անցումով (չպնդելով, սակայն ասենք, որ երկու բազուկները կողք-կողքի պահելու պարագայում՝ կունենաք **ԵՐԿՎՈՐՅԱԿ** համաստեղության մոտավոր պատկերը):

ԵՂՏԻՐԱՒՈՐԵԼ, կբ. Դառնալ եղջյուրակերպ: Ձի՞նչ է յատկութիւն լուսնի: ...Սերծեալ յարեզակն լուսաւորի. այլ և եղջիւրաւորի: - 186. Որևէ բառարան չունի վկայություն:

ԵՆԹԱԴԱՏԵԼ, նբ. Ենթադրաբար դատապարտել: Հինգերորդ՝ զի կարէ՛

մարդ ներհակ սովորութեամբ պահօք և աղօթիւք և կրթութեամբ մարմնոյ սանձել յինքեան զայսպիսիս նշանաց գործ: Վասն որոյ ո՛չ է պարտ ԵՆՔԱՊԱՏԵԼ զմարդ վատն այսպիսի նշանաց երևան: - 246. **ԵՄԲԳ**-ն վկայում է՝ «մտօք ընտրել կամ քննել» բացատրությամբ: **ԵՆԹԱՊԱՏՈՒԹԻՒՆ** բառը **ՍՄԲԲ**-ն բացատրում է. 1. «խօսքի իմաստը արտաքին ձևի հետ բաղդատելը: 2. Ենթադրութիւն», ընդ որում՝ առաջինը՝ «հին բառ կամ նշանակութիւն», երկրորդը՝ «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանների տակ: Առաջին բացատրությունը բավականաչափ մոտ է Տաթևացու բառագործածության իմաստին:

ԵՆԹԱԿԱՅԱԲԱՐ, մ. Ենթակա, ստորադիր: Այլ անձնաւոր գոյացութիւն ի ներքոյ եղեալ ԵՆՔԱԿԱՅԱԲԱՐ մարդկութեան իւրոյ: - 88. Որևէ բառարան չունի վկայություն:

ԵՈՒԲԱՐ, մ. Երեք, եռակի բացատրությամբ: Իսկ Ուր ոչ ասեմք տեղի աստուծոյ. զի տեղի որ է՝ բովանդակութիւն, եռաբար ասի: - 172. Որևէ բառարան չունի վկայություն:

ԵՈՒԲՆԱԿ, ա. Երեքով բնակեցված: Եւ քրիստոս զյարկն դաւթի որ է՝ եկեղեցի՝ չորիցս առաքինութեամբ եռաբնակ օթևան աստուծոյ կազմեաց: - 328. Որևէ բառարան չունի վկայություն:

ԵՈՒՆԴՈՒԹԻՒՆ, մ. Ավյուն: Դարձեալ՝ կատարեալ սեր է, յորժամ է ունակութեամբ մեծ. ներքին շարժմամբն ուղիղ. արտաքին գործքն ժիր. արմատովն հաստատեալ. ջերմ եռանդութեամբն խոհեմ. և քաղցրութեամբն մխիթարական: - 576. Որևէ բառարան չունի վկայություն:

***ԵՍԹԱՆԱՆՈՒՆԴՐԻ**, գ. Պաշտամունքային առարկա: Թէ Եսթանանդրին. որ է՝ դարիճակաւ արարած. այսինքն կաղապարաւ. և պաշտեցին: - 387. Որևէ բառարան չունի վկայություն:

ԵՐԵՔ

- **ԵՐԵՑՈՒՆԱ**, թ. Երեք(ը), երեքին, երեքին էլ: Այլ սոցա երեցունց հաւասար է հոգւոյն և մարմնոյն բարկութիւն. և առաւել մարմնոյն ծուլութիւն. և առաւել հոգւոյն ազահութիւն: - 559. Որևէ բառարան չունի վկայություն:

ԵՐԵՔԹԵԼԵԱՆ - Երեք թել ունեցող: Երեքթելեան լարքն, հոգին եռամասնեայ և մարմինն ի չորս տարերաց: - 744-745. Որևէ բառարան չունի վկայություն:

ԵՐԿՂՈՆԻ, ա. Երկու դուռ ունեցող: Չի կենցաղս այս որպէս երկրքնի քաղաք է. ի միւսն մտանեմք և ի միւսն ելանեմք: - 680. **ԵԴԲ**-ն և **ԱԶԲ**-ն ունեն **ԵՐԿՂՈՒՆ**, **ԵՐԿՂՈՒՆ** ձևերը:

ԵՐԿԴՐԱՄԻ, գ. Երկու դրամ՝ հինգ դանկի հավասար արժողությամբ: Ջարձաթն է առ ի համարոց գլխոցն կէս երկդրամի որ է՝ **ժ**: դանկ: - 344. **ԱԶԲ**-ն ունի **ԵՐԿԴՐԱՄԵԱՆ** ձևը՝ «Երկու տրամնոց» բացատրությամբ:

ԵՐԿԻՂԱԶԳԱԾ(Ք), գ. Երկյուղակիր, երկյուղով պատված: Վեցերորդ՝ զի անկասկած լիցուք ի վատթար երկիւղէ. յորում երկիւղագգածք չարչարին ըմբռնեալք ի մեղս: - 281. Որևէ բառարան չունի վկայություն:

ԵՐԿԻՂԵՄ, նք. Վախեցնել, ահաբեկել: Տասներորդ՝ ծայնն երկիւղէ տղայոց. և բանն երկիւղէ կատարելոց: - 354. Որևէ բառարան չունի վկայություն:

ԵՐԿԻՍՕՍՈՒԹԻՒՆ, գ. Երկու անձի խոսակցություն: Երկու երկի ի սուրբ գիրս երկխօսութիւն: - 465. **ԱԶԲ**-ն բերում է **ԵՐԿԻՍՕՍ** ձևը՝ «Լեզուն խարդախ» բացատրությամբ:

ԶԳԱՅԱՎԱՍՈՒԹԻՒՆ, գ. Զգայություն, զգալու կարողություն: Դարձեալ հոգին ունի զօրութիւնս ոմանս հասարակ ընդ անասնոց. որպէս զգայաւկանութիւն: - 249. Գրաբարյան որևէ բառարան չունի վկայություն: Վկայում է **ՍՄՅԲԲ**-ն:

ԶԵՂԻՍԱԲԱՐ, մ. Ցոփությամբ, շվայտորեն: Նոքա որք զբախտ և զճակատագիր և զիրամանն համբաւեն, ո՛չ ինչ ասեն ի կամաց մեր գործիլ. այլ զամենայն ի հարկէ՛ ասեն. զի զեղխաբար զկենցաղս վճարեսցեն: - 7. Որևէ բառարան չունի վկայություն:

ԶԵՂԾՈՒՄՆ, գ. Եղծում, կեղծիք: Սակայն բեր գառարկութիւնս նոցա տեսցուք. և զեղծումն նոցին յարմարեսցուք: - 15. Գրաբարյան որևէ բառարան չունի վկայություն: Վկայում է **ՍՄՅԲԲ**-ն: Ունի նաև՝ **ԶԵՂԾՄՈՒՄՔ**:

ԶՈՒԳԱՍՓԻՒՈ, ա. Հավասար սփռվող, տարածվող: Եւ դարձեալ՝ զօրօրինակ, լոյսն և ջերմութիւն են էութիւն նորին զուգասփիւռ. այլ երբեմն միմն ծածուկ, և երբեմն երկոքին յայտնիք, և ընդ դէմ սորա: - 779. Որևէ բառարան չունի վկայություն:

ԶՔՕՂԵԼ, նք. Քողարկել: Ուստի և վեհագոյն իմացութեանց էից սերովբեն զքօղեալ զերեսս և զոտս մարդեղութեան խորհրդոյն պարուրեալ: - 456. Բառարանները վկայում են **ԱՔՕՂԵԼ** ձևը. ենթադրելի է, որ նախնի ձևը **ԶՔՕՂԵԼ**-ն է: **ՍՄՅԲԲ**-ն բերում է՝ հղելով **ԱՔՕՂԵԼ**-ին:

ԷԿԱՆԱՍՊԵՍ, մ. Գոյեղեններին, էակներին վերաբերող: Երբեմն նշանակէ՝ զբոլորութիւնն. որպէս ասէ՝ «աստուած սեր է». և այս առաւել լինի անձնականապէս և էականապէս: - 575. Վկայում է **ՍՄՅԲԲ**-ն:

ԸՆԴԴԻՄԱՏԵՍԱԿ, գ. Հակոտնյա, հակառակ տեսակին պատկանող: Չորրորդ՝ ասին ոչէ՝ և ընդդիմատեսակքն. որպես անմարմին. անկենդան. և անշունչ: - 111. Որևէ բառարան չունի վկայություն:

ԸՆԴՅԱՆՐԱՊԵՍ, մ. Ամբողջությամբ, լիակատար: Մինչև յօր դատաստանին տեսանեն մեղաւորք փառս արդարոց ընդհանրապէս՝ այլ ո՛չ մասնաւորաբար. զի տեսանիցեն զնոսա ի մեծ փառս՝ այլ ո՛չ ի յորպիսիս: - 741. **ԱՁԲ**-ն բերում է **ԸՆԴՅԱՆՐԱԿԱՆԱՊԵՍ** ձևը՝ **ԸՆԴՅԱՆՐԱՊԵՍ** բացատրությամբ. վերջինս առանձին բացատրությամբ չի բերվում:

ԹԱԳԱԻՌԱԾԻՆ, ա. Թագավորից սերված, արքայածին: Երկրորդ՝ ի ծիրանին. զի արքայա՛զն է և թագաւորածին: - 271. Որևէ բառարան չունի վկայություն:

ԹԱՓԱՆՑՈՒԹԻՆ, գ. Անաղարտ, անաղտեղ, թափանցող լինելը: Եւ այս գիտելի է, զի տէր մեր քրիստոս նախ քան գյարութիւնն զչորեսիսն զայս եցոյց ի մարմին իւր: Զթափանցութիւնն՝ զի կուսութեամբ ծնաւ: Զթեթութիւնն, ...Զպայծառութիւնն, Զանչարչարութիւն...: - 722. Որևէ բառարան չունի վկայություն:

ԹԻՐԱՄԻՏ, ա. Խոտոր, մոլոր միտք ունեցող: Իսկ ամենայն անդամք որ ներհա՛կ են այսմ, գթիւրամիտն ցուցանեն: - 248. Որևէ բառարան չունի վկայություն:

ԹԻՐԱՊԵՍ, մ. Խոտոր, խեղաթյուրված: Եւ թէպէտ համաձայն մեզ այլք ասացին մի անձն՝ բայց թիւրապէս: - 83. Որևէ բառարան չունի վկայություն:

ԹԼՓԱՏՈՒՄՆ, գ. Թլպատելը: Առաջինն ի թլփատումն: - 492. Գրաբարյան որևէ բառարան չունի վկայություն: Վկայում է **ՍՄՐԲ**-ն:

ԹՈՒՌՄՆ, գ. Թվարկում: Եւ որպէս ի թուումն պարզևացն է՝ կարգ արհեստական. զի նախ դնին արժանաւորագոյնքն: - 583. Որևէ բառարան չունի վկայություն:

ԻՆՔՆԻՄԱՍՏ, մ. ա. Ինքնին իմաստավորված, ինքն իրենով իմաստավորված: Այլ այսու զանազանին, զի աստուած ինքնինմաստ ունի զտեսութիւնն. այսինքն յինքենէ՛ է անսկիզբն և անվախճան: - 120. **ՆՂԲ**-ն **ԻՆՔՆԻՄԱՍՏՈՒԹԻՆ** բացատրում է՝ «Նոյն ինքն իմաստութիւն, բուն իմաստութիւն»: **ՍՄՐԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ԻՐՈՂԱՊԵՍ, մ. Առարկայական, իրապես: Իսկ որք զմի քանքար հաւա-

տոյ կան զմկրտութեանն շնորհի ի բաց կորուսանեն, ո՛չ զկնիքն խորհրդապէս, այլ զարժանն վարձու իրողապէս: - 783. Որևէ բառարան չունի վկայություն:

ԼՈՒՍԱԻՐԵԼԻ, ա. Լուսավորող, լուսավոր: Յատկութիւնք Օղոց Լ թուով: ...Թեթև: Անօր: և Լուսաւորելի: - 203. Որևէ բառարան չունի վկայություն:

ԼՈՒՄՆԿԱԼ, ա. գ. Լույսը կալող, պահող: Յաղագս Ջրոյ յատկութեանց: ...Ութևժ լուսնկալ նիւթ է: - 207. Բառարանները վկայում են «**ԼՈՒՄՆԿԱԼ**» ձևը, որ նշանակում է՝ «ընդունարան լուսոյ», իսկ **ԱԶԲ**-ի բացատրությամբ նաև՝ «աստուածընկալ»: Թվում է, թե **ԼՈՒՄՆԿԱԼ**-ը կարող է մեկնվել իբրև «Լուսինը կալող»՝ հաշվի առնելով «ն»-ի առկայությունը, սակայն մի կողմից՝ միայն լուսինը չի կալում, մյուս կողմից՝ բառարանագրության մեջ քիչ չեն դեպքերը, երբ «լուսն» բաղադրիչը բացատրվում է լույսով, մասնավորապէս **ԵՍԲԳ**-ն «լուսնակիր», «լուսնթագ» մեկնում է՝ «լուսաւոր»:

ԽԱԶՕՐՅՆԵԼ, չբ. Խաչի օրհնություն: Իսկ վասն հիմնարկութեան սուրբ տաճարի և ժամահար օրհնելոյ. սկիհ և մաղզմայ. և զգիրք. և զկնունք առնելոյ. և խաչօրհնելոյ. և զքառասնորդաց **գ** ժամուց զքարոզքն և զաղօթսն, յոհան մանդակունին է արարեալ: - 659. **ԱԶԲ**-ն բերում է **ԽԱԶՕՐՅՆԵՔ** ձևը՝ «օրհնութիւն խաչի» բացատրությամբ: «Գաւառական»-ը բառը զործածական է համարում Ալաշկերտի, Վանի բարբառների համար, սակայն խիստ տարբերվող բացատրությամբ. նախապէս օրհնված խաչքար, որ հորվել է, ապա հանգուցյալի հոգու համար ճաշ տրվել:

ԽՆԿԱՐԿՈՒՄՆ, գ. Խնկարկելը, խունկ ծխելը: Կան թէ յաւուրն կրկին էր խնկարկումն. յառաւօտն և յերեկոյն. և յառաւօտն խնկեալ էր ահարօն: - 364. Որևէ բառարան չունի վկայություն:

ԽՈՒՆԱԽՈՅ, ա. Տկար, անարժան, նվազ, փոքրիկ: Եւ այսպէս տրտմեալ սգով և թախծեալ մտօք ընծայեցի տխեղծ մատամբ գխունախոյ նուէրս բանի, իբր զլոմայս այրւոյն՝ քունդ գանձարանի: - 789. **ՂԱՄԻԲ**-ն «Աղքատիմաց, տկարամիտ» բացատրությամբ հղում է **ԺԴ** դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններին, և քանի որ իբրև վկայություն նույնությամբ բերվում է **ԳՏԳՅ**-ի հիշատակարանի «**ընծայեցի տխեղծ մատամբ գխունախոյ նուէրս բանի, իբր զլոմայս այրւոյն՝ քունդ գանձարանի**» հատվածը, ուստի կարծում ենք, որ աղբյուրը հենց Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ն է:

ԾԱՆԱԿՈՒՄՆ, գ. Ծաղրել, խայտառակել: Հինգերորդ` ծանակումն առա-
կանաց: - 751. Որևէ բառարան չունի վկայություն:

ԾԱՍԿԻՉ, գ. Ծամիչ, ծամող: Ատամունք` վարդապետք և մեկնիչք և ծասկիչք հոգևոր կերակրոյն: - 534. **ՀԱԲ**-ը այս բառի համար բերում է ծասքեալ, ծասքումն, անծասքելի ձևերով բառավկայությունները` յուրա-
քանչյուրը դիտարկելով որպէս առանձին բառածն: **ՍՄՅԲԲ**-ն բերում է **ԾԱՍԿԵԼ** և հղում **ԾԱՍԲԵԼ**-ին:

ԾԽՈՒՄՆ, գ. Ծխալը, խնկարկելը: Նախ` որպէս ասեն ոմանք` Բուրվառն
նշանակէ զմարդկութիւնն քրիստոսի. և Հոլրն զաստուածութիւնն. Ծխումն
զբուրումն հոգւոյն սրբոյ: - 645. Գրաբարյան որևէ բառարան չունի վկա-
յություն: Վկայում է **ՍՄՅԲԲ**-ն:

ԾՈՐԵԼԻ, ա. Հոսող, կաթացող: Եւ ոմանք միայն զգալի և ապականացու
և ծորելի որպէս երկիրս այս. և զայսոսիկ ո՛չ ընդունիմք մեք ճշմարտութեան
հետևողքս: - 221. Որևէ բառարան չունի վկայություն: **ԱԶԲ**-ն ունի` «վազող,
թափող» բացատրությամբ` առանց հեղինակային վկայության:

ԾՈՍՏՕՆ, գ. Սխալ կամ ծուռ տոն: Յորում ամի եղև ծռատօն զատկաց
ազգի կոչեցեալ յունաց. ի վերոյ ասացեալն աւուր նորոյս տէրումնաց: - 789.
«Գաւառական»-ը բառածնը զործածական է համարում Բաբերդ, Կարին,
Մարաշ բարբառների համար` «Հունաց ս. Գեորգի տօնի օրն է»
բացատրությամբ: **ՂԱՄԲԲ**-ն «Հոլմերի ս. Գեորգի տոնը, որ հայերի համար
տոնն չէ» բացատրությամբ հղում է **ԺԴ** դարի հայերեն ձեռագրերի
հիշատակարաններին: **ՀԱԲ**-ը, ապա և` **ԼՅԳԲ**-ն անդրադառնում են Գրիգոր
Տաթևացու մեկ այլ նմանատիպ նորակազմ բառի` **ԾՈՍԱՋՏԻԿ** («Լուծումն
պարապմանց Կիւրդի» գրքից). **ԼՅԳԲ**-ն բացատրում է` «Տոմարական
հաշիվներով սխալ գատիկ»:

ԿԱՂԱՊԱՐԵԱԼ, ա. Կաղապարված, նմանեցված: Ո՛չ բանն որպէս
հալածու կաղապարեալ. և կամ մարմինն որպէս բոց ի հոյր և ծուխ անօսր
լուծեալ յօդոյ: - 770. Այս բառի համար **ՆԲԲ**-ն և **ԱԶԲ**-ն ընդհանրապէս
բայական ձև չեն հիշատակում` այն վերապահելով միայն **ԳԱՂԱՓԱՐԵՍ**
ձևին: **ՍՄՅԲԲ**-ն բերում է **ԿԱՂԱՊԱՐԵԼ**, **ԿԱՂԱՊԱՐԻՉ**, **ԿԱՂԱՊԱՐՈՒՄՆ**:

ԿԱՍՏՐԱՈՒՄՆ, ա. Կամար հոնք ունեցող: Կամարաւունքն` թէ ի վերոյ շա-
րակցեսցին սակաւիմաստ է. թէ վայր ի յռնգունսն հասցէ, սրամիտ է: - 246.
Որևէ բառարան չունի վկայություն:

ԿԱՍՈՒԹԻՒՆ, գ. Կամեցողություն, կամքի դրսևորում: Եւ ո՛չ լինի ի մէջ մի և նոյն էութեանն կամք և ո՛չ կամութիւն: - 36. Գրաբարյան որևէ բառարան չունի վկայություն: Վկայում է **ՍՄՐԲԲ**-ն:

ԿԱՅԱՑՈՒԹԻՒՆ, գ. Գոյություն, էություն: Իսկ թէ բաժանական է անձն՝ որպէս յա՛յտ է ի սահմանն՝ անհաղորդելի կայացութիւն: - 86. Որևէ բառարան չունի վկայություն:

ԿԱՅԾԵՄ, չբ. Փայլատակել: Եօթներորդ՝ զի լինի ամպ որ ո՛չ որոտայ և ո՛չ կայծէ վասն սաստիկ խստութեանն: - 206. Ութերորդ՝ ահագին տեսիլն դիւաց և վիշապաց. զոր ի կայծի կայծել հրոյն տեսանեն. և ողորմելի աղաղակ լալ ականացն և ոտնհար լինողացն: - 752. Որևէ բառարան չունի վկայություն:

ԿԱՐԴԱԼԻ, ա. Պետք է կարդալ, ընկալել: Ապա ապականութիւնն փրկեաց զմեզ. զնա կարդալի է փրկիչ. այսինքն և զապականութիւնն և ո՛չ զքրիստոս: - 503. Որևէ բառարան չունի վկայություն:

***ԿԵՆԴՈՒՐԱԾԻՆ(Ք)**, գ. Կենդուրածնունդ (արդյո՞ք նկատի ունի Կայենի ժառանգներին, եթէ կապ տեսնենք **ՅԱԲ**-ի հիշատակած **ԿԵՆԴԱՐ** («մի չար դև» բացատրությամբ) և **ԿԵՆԴՈՒՐ** բառերի միջև՝ **ԿԵՆԴԱՐԱԾԻՆ-ԿԵՆԴՈՒՐԱԾԻՆ** անցումով): Ձի կենդուրածինքն լցին զարևելս. և իսմայէլացիքն զհարաւ. եսաւացիք զհիւսիս և զարևմուտս. և սոքա ո՛չ անկան ընդ թուով: ...Իսկ զսառայածինսն հրամայէ՛ թուել որպէս զաստեղս: - 377. Որևէ բառարան չունի վկայություն:

ԿԻՍԱԷՇ, գ. Ջորի, խառնածին: Նոքա ի կիսաէշ նման զսնօրէնութիւնն սուրբ համբաւեն. և կամ առ աջօք և ունայնութեամբ. որպէս մանիքեցւոցն, և կամ եւտիքի կարծի: - 81. **ՆՐԲ**-ն և **ԱԶԲ**-ն, ապա և՝ **ՅԱԲ**-ը բերում են **ԿԻՍԷՇ** ձևը:

ԿԻՍԱՏԵԼ, նբ. Թերի թողնել, ընդհատել, պակասեցնել: Երրորդ՝ թէ խոստովանօղն կիսատեաց զխոստովանութիւնն և ծածկեաց: - 603. Վկայում է **ԵՄԲՅ**-ն՝ «կիսել, ընդմիջել և յերկուս հաւասար մասունս բաժանել» բացատրությամբ: Բառաբացատրությունը հետաքրքրական է այնքանով, որ կիսել՝ «երկու մասի բաժանել» սկզբնական իմաստը **«ատ»** միջածանցով ստացել է երկրորդայինն նոր իմաստ՝ թերի թողնել, ընդհատել: Բարբառներում ունի նաև՝ «պակասեցնել» իմաստը: Այս իմաստով բերում է նաև՝ **ՍՄՐԲԲ**-ն:

ԿԻՍԱՓՈՒՆ, գ. Սաղմոսի մաս: Իսկ եկեցե՛ն ունի սաղմոսս **թ** փոխ բոլոր պահապան **թ** ժամուց հանապազորդ գիշերոյն: Եւ վեց կիսափոխն՝ յաւելեալ ժամուցն մինչ ի հանգստեանն: - 622. Որևէ բառարան չունի վկայություն:

ԿՇՈՂԱԿԱՆ, ա. Հավասարակշռող: Ողորմութիւն տեառն է եռակի: ...Երրորդ կշռողական: - 747. Իսկ կշռողական է զոյգ արդարութեամբ կշռել. որպէս յորժամ ողորմելով միոյն պատժ՝ զընդդիմակն նորին. որպէս փրկեցաւ իսրայէլ և պատժեցաւ եգիպտոս. և յազատիլ բնութեան մարդոյն՝ պատժեցաւ սատանայ: - 747. Որևէ բառարան չունի վկայություն:

ԿՇՏՈՒՄ, գ. Հագենալը, կշտանալը: Այս է քաղցն որ կշտունն ո՛չ ունի: - 570. Գրաբարյան որևէ բառարան չունի վկայություն: **ՍՍՅԲԲ**-ն բերում է «զաւառական բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ԿՈՂՈՊՏՈՒՄ, գ. Կողոպտելը: Առաջին՝ կողոպտունն ընչից: - 751. Գրաբարյան որևէ բառարան չունի վկայություն: Վկայում է **ՍՍՅԲԲ**-ն:

ԿՈՆՔԻԼՈՍ, գ. Ջրային կենդանի, խեցեմորթ, որից լինում է ծիրանի գույնը: Ծիրանին ջրոյ. զի կոնքիլոսն որ ներկէ՝ զծիրանին՝ ի ջրոյ՝ է. և Բեհեզն սպիտակ՝ երկրի. զի վուշն յերկրէ լինի: - 342. Բառարանները վկայում են «**ԿՈՆՔԵՂ**, **ԿՈՆՔԵԼ**», իսկ **ՍՍՅԲԲ**-ն՝ «**ԿՈՆՔԻՂՈՍ**» ձևը՝ «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ԿՈՐՈՎԱԼԻՑ, ա. Կորովով առլեցուն, քաջ: Սաստկագին զոչմամբ. և ահագնատեսիլ սուսերամերկ կորովալից նետողաց. որ պատեալ պահեալ պաշարէին զմեզ: - 789. Բառարանները ունեն **ԿՈՐՈՎԱԼԻՐ** ձևը: Վկայում է միայն **ՍՍՅԲԲ**-ն:

ԿՈՒՍԱԲԵՐ, մ. Կուսութամբ պտղաբերած: Նախ՝ զի աստուած էր ողջոյնառաքն. որ խօսէր զկոյսն ի հարսնութիւն կուսութեան, կուսաբեր լինիլ պտղովն: - 464. Որևէ բառարան չունի վկայություն:

ՀԱԼԱԾՈՒ, գ. Հալված, ծուլածո: Ո՛չ բանն որպէս հալածու կաղապարեալ. և կամ մարմինն որպէս բոց ի հրոյ և ծուխ անօսր լուծեալ յօդ: - 770. Հավանաբար, բառը ստեղծվել է գրաբարյան **ՉՈՒՂԱԾՈՒ** բառի համաբանությամբ: Որևէ բառարան չունի վկայություն:

ՀԱԿԱՍԱԿԱՆ, ա. Հակասող, ժխտող: Հակասական. որպէս ստորասութիւն և բացասութիւն: - 21. **ՀԱԲ**-ը բերում է «նոր գրականուն կազմուած» բազմաթիվ բառերի շարքում, սակայն Տաթևացու բառագործածությամբ բառը պետք է թվագրել առնվազն 14-րդ դարով:

ՀԱՂՈՐՂԱՐՈՒՄ, գ. Հաղորդության համար տրվող դրամ: Այլ թե ասեն՝ հաղորդադրամ, կամ խոստովանադրամ, խո՞րթ է. յագահութեանց երիցանց սահմանեալ և ո՛չ ըստ կանոնաց որպէս այլքն: - 684. **ՆՂԲ**-ն չի բերում, մինչդեռ վկայում է **ԱՁԲ**-ն՝ «հաղորդի համար առնուած անարժան ստակ» բացատրութեամբ՝ առանց հեղինակային վկայութեան: **ԼՂԳԲ**-ն հղում է **ՍԳԼԲ**-ին:

ՀԱՄԱԺՈՒՆԳ(Ք), գ. Հավասար իրավունքներով ժառանգորդ: ...որպէս ասէ առաքեալն, «չիք խտիր ո՛չ հրէի և ո՛չ հեթանոսի. ո՛չ ծառայի և ո՛չ ազատի». զի դուք միապատիւ եք ի քրիստոս յիսուս և համաժառանգք արքայութեանն: - 590. Որևէ բառարան չունի վկայություն:

ՀԱՄԱԿԱՐԳԱՊԵՍ, մ. Հավասարապէս, համահավասար: Ասենք եթէ՛ նոքա երեքեան դասքն՝ այսինքն աթոռք՝ քերօքէք՝ և սերօքէք՝ միակարգ միապատիւ և գերազանց էութիւնք են. զի անընդմիջաբար յաստուծոյ ամենայն լուսափայլութիւնք իմաստք և շնորհք ի նոսա հեղանին համակարգապէս. և ապա նոքօք յայլ ամենայն գոյս երկնաւոր և երկրաւոր: - 135. Որևէ բառարան չունի վկայություն:

ՀԱՄԱՅԵՏԵԻԼ, չբ. Հավասարապէս հետևել: Ասելի է թէ՛ կոյսն և ապականեալն են հակակայք ըստ ունակութեան և պակասութեան. որպէս երեսք և կուրութիւն. որոց ի լինիլն համահետևի երեքին սոքա. այսինքն ժամանակն, և մասն, և նոյն: - 165. **ՆՂԲ**-ն և **ԱՁԲ**-ն բերում են **ՀԱՄԱՅԵՏ** ձևը՝ «միահետ, համաշաւիղ, զուգընթաց» և «հաւասար քալող» բացատրութեամբ՝ առանց հեղինակային վկայութեան: **ՍՄՂԲԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ՀԱՄԱՅՈՂ, ա. Նույն հողից, հողակից: Նախ՝ զի մի՛ համեմատ առն կարծիցէ զինքն. այլ որպէս ոչ համահասակ և ոչ համահող լիցի: - 276. Որևէ բառարան չունի վկայություն:

ՀԱՄԱԶԱՅՆԵԼԻ, ա. Համաձայնության արժանի: Ապա ուրեմն համա-ձայնելի է մեզ փիլոնի իմաստնոյ. որ անձորելի է ասէ պտուղն և անթափ տերևն: - 224. Որևէ բառարան չունի վկայություն:

ՀԱՄԱՌԻԵԼԻ, ա. Համբուրելու արժանի: Եօթներորդ՝ զի սիրելի և համ-բուրելի է նշխարքն սուրբ որ ի քրիստոս միացաւ և օծաւ, և քրիստոսի եղև բաժին: - 673. Որևէ բառարան չունի վկայություն: **ՀԱԲ**-ը բերում է «նոր բառ» բնութագրմամբ:

ՀԱՄԻՇԽԱՆ, ա. Հավասար իշխանություն ունեցող: Ասեմք առ այս, եթե համակարգ և համիշխանք են վերջինն ընդ առաջնոյն ի կարգել և ի յուղղել. այլ ո՛չ ի թիրել և ի քակել. զի առաջնոյն աւանդապահ է վերջինն նոյն մտօք և նոյն կամօք: - 541. Որևէ բառարան չունի վկայություն:

ՀԱՍՏԵԼԻ, ա. Հաստատված, ստեղծված: Նախ՝ զի խոստովանեալ է յամենեցունց որ ո՛չ է հաստելի. այսինքն ո՛չ ստեղծեալ: - 273. Որևէ բառարան չունի վկայություն:

ՀԱՏԱՆԵԼԻ, ա. Հատվող, սպառվող: Արդ՝ զի՞նչ ասես վասն կենաց պտղոյն. եթէ կերակրելի է և հատանելի, ո՞րպէս է կենաց պտուղ: - 223. Գրաբարյան որևէ բառարան չունի վկայություն: Վկայում է **ՍՄՅԲԲ**-ն:

ՀԱՐՑԱՆԵԼԻ, ա. Հարցման ենթակա: Եւ այս հարցանելի է, զի թէ մագդաղենացին ընդ առաջին կանայսն եկն զոր մատթնոս պատմէ և համբուրեցին զոտն յիտուսի: - 515. Ունի ևս երեք գործածություն: Որևէ բառարան չունի վկայություն:

ՀԱՐՑԱՔՆՆԵԼԻ, ա. Հարցաքննության, քննարկման, վերլուծության ենթակա: Այլ ի վերայ այսմ հարցաքննելի է երիս իրս: - 140. Որևէ բառարան չունի վկայություն:

ՀԱԻԱՆԵԼԻ, ա. Հավանության արժանի: Եւ այս հաւանելի՝ երկի վասն կրկին պատճառի: - 188. Այլ որ հաւանելին է՝ կրկին է: - 208. Ոմանք ասեն թէ աւանդիլ հոգւոյն քրիստոսի, աւագակն եմուտ յերկրաւոր դրախտն ուստի էլ ադամ. և չէ՛ հաւանելի. զի անդ մարմնովն եմուտ յետ յարութեանն: - 495. **ԱՋԲ**-ն ունի **ՀԱԻԱՆԵԼԻՔ** ձևը՝ «հաւնողներ» բացատրությամբ:

ՀԵՏԵԼԵԼԻ, ա. Հետեւելու, հետամուտ լինելու ենթակա: Թէպէտ և զայս կարգ փոխեն ոմանք և զգօրութիւնն և զպետութիւնն աւանդեն որ մեզ ո՛չ է հետեւելի. այլ սրբոյն դիոնիսեայ որպէս ասացաք: - 135. Որևէ բառարան չունի վկայություն:

ՀՆԱՐՕՂ, գ. Հնարամիտ, հնար գտնող: Հինգերորդ՝ զի խորամանկ է և հնարօղ: - 218. Որևէ բառարան չունի վկայություն:

ՀՈԳԷԳԱԼՈՒՄՍ, գ. Ս. Հոգու գալստյան տոնը: Տասն է. ինն ի դէմս քրիստոսի. և մինն ի հոգին սուրբ ի հոգեգալուստն: - 634. **ՂԱՄՅԲ**-ն ունի «Հոգոյ-գալուստ» ձևը. հղում է Հովասափ Սեբաստացուն:

ՀՈԼԱԹԵԻ, ա. Թևատարած: Հոլաթեն և սաւառնեալ, արծակ և պարզ բոլորակածն է: - 638. Բառարանները ունեն **ՀՈԼԱԹԵԻԵԱՆ**, **ՀՈԼԱԹԵԻԵԼ** ձևերը:

ՀՈՂԱՎԻՐՈՒՄ, մ. Հողմակերպ: Եօթներորդ՝ զի հողմ ի հողմոյ փոշի լինի. այսպէս յորժամ հողմափուն շնչէ ի մարմինս մեր՝ ցուի և լինի փոշի: - 229. Որևէ բառարան չունի վկայություն:

ՀՈՐԵՍ, նք. Փորել: Հռոմի. զի հորեն երկրագործք և մշակք զցորեան և զգինի, յշտեմարանս ժողովեալ. զի **թ** հռոմի՝ մուտ է աշման: - 200. **ԱԶԲ**-ն, ապա և՝ **ՀԱԲ**-ը բերում են «խոր տեղ ժողվել ցորենը» բացատրությունը, սակայն ինչպէս տեսնում ենք, Տաթևացու բառագործածությունը ընդլայնված է:

ՀՈՒՆԱԻՈՐԵԱԼ, ա. Չափավորված, հունի մեջ դրված: Վեցերորդ, զի յարութիւնն է գործ սքանչելեացն աստուծոյ և ո՛չ բնութեան. զի բնութիւնն հունաւորեալ է զօրութեամբ յերկար ժամանակս գործ: - 717. Որևէ բառարան չունի վկայություն:

ՀՍԿԱՅԱՆՂԱՍ, ա. Հաղթահասակ, հսկայամարմին: Այլ որ առաւել մեծն է և հսկայանդամ, և կարի փոքր և փանաքի, յերեսնամեայ հասակն իւրեանց չափաւորին: - 726. Որևէ բառարան չունի վկայություն:

ԶԻՒՆԱՍԵՌ, ա. Չմից մահացած: Եւ ձմեռն, զի ձիւնամեռ լինին: - 197. Բառը Տաթևացին օգտագործել է՝ ստուգաբանելու «ձմեռ» բառը: Որևէ բառարան չունի վկայություն:

ԶԿՆԱԿՈՒԼ(Բ), գ. Գիշատիչ խոշոր ձկներ: Չկնակուլքն մեծամեծք են որք կլանեն զմանուսն: - 365. **ՀԱԲ**-ը բերում է նոր բառերի մեջ՝ արդի հայերենի «լայնակտուց ձկնակեր թռչնի» իմաստով:

ԶՈՅԼԱՐԱՆ, գ. Քուրա, հալոց: Եւ գիտելի է, զի **ժ** փորձանացն արբահամու որք էին ձոլարան նորա՝ մի է և այս: - 304. **ՆԴԲ**-ն և **ԱԶԲ**-ն վկայում են **ԶՈՒԼԱՐԱՆ** ձևը: **ՂԱՍԴԲ**-ն հղում է **ԳՏԳԳ**-ին:

ԴԵՂ, գ. Եղունգ: Որ և զծովս և զաղբերս և զհեր և զղեղս առաւելու ընդ իւր և նազէ: - 187. Բարբառներում ունենք՝ «ղէնգ, ըղէնկ» ձևերը:

ՄԱԿԱՂԱՐԶՈՒԹԻՒՄ, գ. Անդրադարձություն: Երրորդ՝ անդ մէկին է ջերմութիւն՝ և աստ կրկին. զի հասեալ ի զոգ երկրի, մակադարձութեամբ ժողովին առ նա և լինի շող: - 211. **Մակ**- նախածանցով բառաբարդումներում ի սկզբանէ առկա «կրկին, վրա» իմաստները հետագայում

համալրվել են նոր նրբիմաստներով (օրինակ՝ մակառութին՝ բացա-
յայտութիւն)։ Տաթևացու գործածության պարագայում ունենք «հետ, ետ»
իմաստը։ Որևէ բառարան չի վկայում։

ՄԱՅՐՈՐԴՆԷՔ, գ. Մայր (մայրապետ) օրհնելու կարգ, մայրապետության
կարգ տալու օրհնություն։ Ջօրհնութիւն կարգաւորութեանցս այսոցիկ ո՞վ է
արարեալ. և ո՞վ է բերեալ յագգս հայոց։ ...Իսկ զկարգ մայրօրհնէից՝ սուրբն
կիպրիանոս կարգեղոնացի։ Որ և զուստիանէ սրբուհի կոյսն մայր արար
կանանց հաւատաւորաց։ - 658. **ԼԳԳԲ**-ն հղում է **ՍԳՆԲ**-ին։

ՄԱՍՆԱՊԵՍ, մ. Մասամբ, մասնավորապես։ Եւ զայլ մասնապէս
զբացայայտութիւն կոչմանց ամենայն դասուց՝ զոցես յայլուրեք ի բանն
գրեալ որ ասէ՝ «ո՞ արար զիրեշտակս յոգիս»։ - 136. Երրորդ՝ զի վերինքն
զներքնոցն ունին բոլորապէս զամենայն. և ներքինքն զվերնոցն մասնաբար
ըստ չափու իւրեանց. և քահանայապետն ունի զաստիճան ներքնոցն
բոլորապէս. և ներքինքն զվերին քահանայապետիցն մասնապէս։ - 136. Որևէ
բառարան չի վկայում։

ՄԵՂԱԴՐԵԼԻ, ա. Մեղավոր, մեղադրյալ։ Այսպէս սատանայ է մեղադրելի
իբր պատճառ և գտակ չարեաց մարդկայինս բնութեան և ոչ աղամ։ - 777.
Գրաբարյան որևէ բառարան չի վկայում։ Վկայում է **ՍՄՂԲԲ**-ն։

ՄԻԱԺԱՄ, մ. Նույն տևողություն, նույնատև։ Իսկ ի ձիոյ և յիշոյ լինի ջորի.
զի ընտակերք են և միաժամք ծնանին։ - 267. Որևէ բառարան չի վկայում։

ՄԻԱԿԱՐԳ, ա. Նույն կարգ ունեցող, համապատիվ։ Ասենք եթէ՝ նոքա
երեքեան դասքն՝ այսինքն աթոռք՝ քերօրեք՝ և սերօրեք՝ միակարգ միա-
պատիւ և գերազանց էութիւնք են. զի անընդմիջաբար յաստուծոյ ամենայն
լուսափայլութիւնք իմաստք և շնորհք ի նոսա հեղանին համակարգապէս. և
ապա նոքօք յայլ ամենայն գոյս երկնաւոր և երկրաւոր։ - 135. Որևէ
բառարան չի վկայում։

ՄԻԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ, գ. Միակերպ, միօրինակ լինելը։ Եւ ըստ իմաստա-
սիրին, յառաջ քան զմարմինն յորում է զանազանութիւն լուսոյ՝ է՝ միւսն ի
վերոյ յորում է միակերպութիւն լուսոյ։ - 763. Գրաբարյան որևէ բառարան չի
վկայում։ Վկայում է **ՍՄՂԲԲ**-ն։

ՄԻԱՉՔ, գ. Մի աչք ունեցող, միաչքանի (ագգ, ազգություն)։ Եւ այս են **հք**
լեզուքն։ Եբրայեցիք։ Ասորիք։ Քաղդէացիք։ Մարիանոսք։ Աղուանք։ Բուսա-
նացիք։ Տաճիկք։ Ռուսք։ Բուլղարք։ Պեծեցեցիք։ Մուկոնք։ Ռիկոյք։ Միաչք։

Թզուկք...: - 298. **ԱԶԲ**-ն ունի **ՄԻԱԿԱՆԻ**՝ «մեկ աչքով, միաչէն» բացատրու-
թյամբ, սակայն ոչ ազգության կամ ցեղանվան իմաստով:

ՄԻԱՑՈՒՄՆ, գ. Միանալը, միավորվելը: Իսկ կողմնաւոր՝ ի խնամելոցն առ
աստուած դարձողապէս միացումն յառաջին սկիզբն: - 142. Երկուտա-
սաներորդ՝ անճառ և անպատում է աստուած. և հոգւոյն միացումն ի մարմնի
ի վեր է քան զբան: - 272. Հինգերորդ՝ զանբաժանելի միացումն ի սերն
քրիստոսի. զի որ ի խաչին թողին և փախեան...: - 524-525. Գրաբարյան որևէ
բառարան չի վկայում: Վկայում է **ՍՄՅԲԲ**-ն:

ՄԻՋՆՈՑ, գ. Կենտրոն, մեջտեղ: Երբուծն դօշն է. որ ունի զսիրտն: Չի
միջնոց է մարմնոյն, և սկիզբն է կենդանւոյն, և կատարած կենաց: - 360.
ՆՅԲ-ն և **ԱԶԲ**-ն նույն իմաստով բերում են **ՄԻՋՈՑ** բառը՝ «մէջը, մէջ տեղը»
բացատրությամբ: **ՍՄՅԲԲ**-ն բերում է «զաւառական բառ կամ նշանա-
կութիւն» նշանի տակ:

ՄԿՐՏԵԼԻ, ա. Մկրտելու ենթակա: Եւ մկրտելի է այսու ձևով: - 588. Եւ
այնք որ ոչ խոստովանին զմիասնական սուրբ Երրորդութիւնն, մկրտելի է
զմկրտեալն ի նոցանէ ի փառս ամենասուրբ Երրորդութեանն: - 590. Չաւակս
այլազգեաց մկրտելի՞ է թէ ոչ: - 591. Որևէ բառարան չի վկայում:

ՄՇՏԱՊԷՍ, մ. Միշտ, մշտական: Այսպէս և դ տարերք ըստ ինքեանց
անապականք են. զի մասնաւորքն ի նոցանէ ապականին և դարձեալ ի նոսա
խառնին. և այսոքիկ ըստ կամացն աստուծոյ են կամ մշտապէս: - 733. Որևէ
բառարան չի վկայում:

ՅԱԻՏԵՆԱԿԱՆԱՊԷՍ, մ. Հավիտենական, ընդմիշտ: Այսպէս և հոգին
սուրբ էառ յաւիտենականապէս զեութիւնն ի հօրէ բղխմամբ, և որդի
ծննդեամբ: - 60. **ՀԱԲ**-ը «յաւիտեան» բառի հիմքով կազմված նոր բառեր է
համարում **ՅԱԻՏԵՆԱՊԷՍ**, որի փոխարեն Տաթևացին ունի ՅԱԻ-
ՏԵՆԱԿԱՆԱՊԷՍ (-ական ածանցով) և **ՅԱԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ**, որի դեպքում
էլ Տաթևացին ունի ՅԱԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ (առանց -ական ածանցի): Ինչպես
նկատելի է, «Հայերէն արմատական բառարանի» վկայություններն էլ
-ական ածանցի առկայությամբ կամ բացակայությամբ են: **ՍՄՅԲԲ**-ն բերում
է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ՅԱԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, գ. Մշտնջենավորություն: Եօթներորդ՝ զյաւիտենա-
կութիւնն որ ասէ «ի սկզբանէ աշխարհի»: - 740. Տես՝ **ՅԱԻՏԵՆԱԿԱՆԱՊԷՍ**:

ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ, գ. Հիշատակ, հիշատակում: Եւ այսպէս օրհնութիւն

սոցա ընդ տեղւոյն իւրեանց կայ և մնայ մշտնջենաւոր յիշատակութեամբ: - 320. Եւ դարձեալ թէ՛ յիշատակութիւն օրինացն յաւիտեան մնաց: - 369. (**ՉՏԳԳ**-ում գտնուն ենք մեկ տասնյակ կիրառություն): **ՉԱԲ**-ը «արժանայիշատակ»-ի հետ բերում է նոր բառերի մեջ:

***ՅԻԶԱԶԵՍ**, բ. Անստույգ բառ: Վասն է՞ր այրեցան նաբաթ և արիւթ որդիքն ահարօնի: ...Կամ թէ հպարտացան յիջաջել հրոյն ի վերայ սեղանոյն: - 364. Բառի վերաբերյալ որևէ տեղեկություն չկարողացանք գտնել:

ՅՈԳԵՅԱՆԳԻՍՏ, գ. Հոգեհանգստյան արարողակարգ: Իսկ յօրինակն խառնենք աղ. որպէս յագապս. յոգեհանգիստս և ի տօնական պատարագս: - 356. **ԱԶԲ**-ն բերում է «մեռելի յիշատակ» բացատրությամբ՝ առանց հեղինակային վկայության:

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐԵՍ, նբ. Հանգուցյալին ուղեկցել, հուղարկավորել: Երրորդ, զի ի հեռու ճանապարհ գնայ. այս է յերկրէ յերկինս. յուղարկաւորենք մինչ ի գերեզմանն: - 676. **ՉԱԲ**-ը նույն իմաստով վկայում է՝ **ՅՈՒՂԱՐԿՈՒԹԻՒՆ** կամ **ՈՒՂԵՐԿՈՒԹԻՒՆ**:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ, գ. Նախապատրաստում: Վեցերորդ՝ նախ ցօղն կարապետ իջանէր. և ի մեզ շնորհքն նախապատրաստութեան ճաշակմանն: - 339. Եւ գիտացիր, զի **գ** է նախապատրաստութիւն աղօթիցն: - 620. Վեցերորդ՝ զնախապատրաստութիւն փառացն որ ասէ «որ պատրաստեալ է ձեզ»: - 740. Գրաբարյան որևէ բառարան չի վկայում: Վկայում է **ՍՄԴԲԲ**-ն:

ՆԱԽԱՍՏԱՅԱՆ, ա. Նախապես սահմանված: ...նոյնպէս ողորմութեան և արդարութեան է միշտ բարերարելն և պատժելն ըստ նախասահման գիտութեան նորին նախքան զլինիլն էիցս ըստ առաքելոյ: - 779. Որևէ բառարան չի վկայում:

ՆԱԽԱՍՏԱՆՈՒՄՆ, գ. Նախապես սահմանելը: Եւ միւսն է յաւիտեանական նախասահմանումն աստուծոյ. յորմէ ո՛չ ոք կարէ ջընջիլ: - 18. Այսպէս է նախասահմանումն աստուծոյ և յառաջընտրութիւնն. և ո՛չ առնէ հարկ ի վերայ ումեք: - 20. **ՍՄԴԲԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ՆԱԽԱՍԵՌ, ա. Նախնական, միատարր: Գոյացութիւն որ սկիզբն է ամենեցուն և նախասեռ. և ի նմանէ զուգաբաժանեալ մարմինն. և շնչաւորն. և զգայունն. և կենդանին. և բանաւորն. և մարդն. ո՞չ ապաքէն բնութիւն են սոքա այլևայլ. և ժողովեալ զոյացուցանեն զմի անհատն պետրոս անշփոթ միութեամբ: - 176. Որևէ բառարան չի վկայում:

ՆԱԽԱՍԻՐԵԼ, նր. Սիրելի ի սկզբանե, սկզբից և եթ: Տասներորդ՝ և որպես իսահակ նախասիրել զանդրանիկն որդի, բայց յետոյ ետ զօրինութիւնն նորին՝ որդւոյն կրտսերոյ: - 305. Բառի բացատրութեանը մոտ է երեմիա Մեղրեցու վկայած **ՆԱԽԱՍԵՃԱՐ** բառը, որի համար հեղինակը բերում է «նախարգոյ» բացատրութիւնը: Որևէ բառարան չի վկայում:

ՆԱԽԱՍԵՂՈՒԱԾ, գ. Առաջին ստեղծվածներ: Դարձեալ, ի նախաստեղծուածս՝ մարդն միայն էր՝ և կենդանիք բազում: - 551. **ՆՂԲ**-ն և **ԱՉԲ**-ն բերում են **ՆԱԽԱՍԵՂԾ**, **ՆԱԽԱՍԵՂԾԵԱԼ** ձևերը՝ «Ադամ, Եվա» բացատրութեամբ: Որևէ բառարան չի վկայում:

ՆԱԽԱՏԵՍԻԼՆ, գ. Կանխատեսում, մտադրութիւն, գաղափար: Երկրորդ՝ զի յետոյ ջնջեցան նախատեսիլն: Իսկ առ աստուած անջնջելի՛ է զիր նախատեսութեանն: - 164. Որևէ բառարան չի վկայում:

ՆԱԽԱՐԱՐՉՈՒԹԻՒՆ, գ. Արարչութեան սկիզբը (առաջին հինգ օրերը): Ասեմք եթէ յետ յղացման բանին յարգանդի կուսին օրինօք և ոչ օրինօք բնութեան, ժուժկալեալ ամսոց ըննից և աւուրց հնգից, ըստ հասարակաց ասեմ և անդրանկաց. ըստ հնգից յաւելեալ թւոց նախաստեղծին նախարարչութեան աւուրց: - 469. Որևէ բառարան չի վկայում:

ՆԱԽԸՆՏՐԵԼ, նր. Նախապատվութիւնը տալ: Այլ տեսութիւնն աստուծոյ զոչ էսն տեսանէ և նախընտրէ. ըստ այնմ, «զանգործս իմ տեսին աչք քո»: - 164. **ԱՉԲ**-ն բերում է՝ «աւելի ընտրել» բացատրութեամբ:

ՆԱԽԸՆՏՐՈՒԹԻՒՆ, գ. Առաջընտրութիւն: Եւ սոքա որ երկինս մեզ կրտսեր և վերջին, փոխեին և լինեին նախկին և առաջին ըստ նախընտրութեանն աստուծոյ: - 310. Գրաբարյան որևէ բառարան չի վկայում: Վկայում է **ՍՄՂԲԲ**-ն:

ՆԱԽՕՐԻՆԱԿ, գ. Առաջին, սկզբնական օրինակ, բնօրինակ: Երբեմն նախագաղափար. իբր նախօրինակ. և մեք պատկեր և նմանութիւն նորին: - 112. **ԼՂԳԲ**-ն հղում է **ՍԳՆԲ**-ին: **ՍՄՂԲԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ՆԵՆԹԱԿԱՅ, ա. Պարունակելի, բաղկացական, ենթակայութեան տակ գտնվող: Այլ ի մարմինն նիւթօրէն և սկզբնաբար. իսկ ի հոգին տեսակաբար և իբր ենթակայոջ: - 567. «Պարունակելի, բաղկացական, ենթակայութեան տակ, ենթակայութեան ներսում գտնվող» իմաստով այս բառը բերում է միայն երեմիա Մեղրեցին **ՆԵՆԹԱԿԱՅՈՒՄ** ձևով և կասկած չկա, որ այստեղ

գործ ունենք «**ՈՒ + ԵՆՔԱԿԱՅ**» կառույցի հետ, այսինքն՝ ենթակայության տակ, ենթակայության մեջ, ենթակայության ներսում գտնվող, հատկապես, որ **ԵՆՔԱԿԱՅ** նշանակում է նաև՝ «տակը եղած»։ այլ հարց է, որ Երեմիա Մեղրեցին **ՆԵՆԹԱՎԱՅՈՒՄ** ձևը համարում է «պարառական հովվով»՝ հաշվի չառնելով բերվող օրինակի ներգոյական հոլովածը («պարառական հովվով, ենթակայ, բայց նշանակե՛լ գպատահումն»¹⁶, **ԵՄԲ**, էջ 237)։ Եզակի այս գործածությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Տաթևացու օրերում դեռ շարունակել է կենսական մնալ «**ՈՒ**» հնագույն նախածանցը՝ ներս, տակ, ներսում նշանակությամբ, որ այսօրվա կենդանի բարբառների հարստություններից մեկն է. «**ՈՒ** կենալ» այրվել, այսինքն ներսից բռնկվել. «**ՈՒ** եկավ»՝ դիպչեց և այլն (Ղարաբաղ, Գորիս)։

ՆԵՐԳՈՅԱԿԱՆ, ա Ներհատուկ, ներլինելություն։ Ասաց թե՛ որ ի կերպարանս աստուծոյ էր բանն, այսինքն էակից հօր, ո՛չ ինչ գրկումն համարեցաւ ի նեղգոյական փառաց զլինիլն հաւասար մեզ։ - 93. Գրաբարյան որևէ բառարան չի վկայում։ Վկայում է **ՍՄԴԲԲ**-ն։

ՆԵՐՁՆԴՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ, գ. Յնարավորություն, կարողություն։ Նախ՝ թեպէտ աստուած տեսանէ՛ զամենայն նախատեսութեամբ և ո՛չ ինչէ արտաքոյ տեսութեանն աստուծոյ, սակայն տեսանէ՛ զոմանս ի հարկէ՛ և զոմանս ի նեղընդունակութենէ լինիլ։ - 15. Որևէ բառարան չի վկայում։ **ՍՄԴԲԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ։

ՆԵՐԿԱՅԱԲԱՐ, մ. Առկայաբար, այժմ։ Այլ այնպէս ասաց առ ի ցուցանել զանչափ յաւիտենական աստուածութիւնն՝ որ ըստ ինքեան պարունակէ զամենայն ժամանակս. ըստ որում աստուածային ելմունք ի յապառնի ժամանակս իցեն. և կերպիւ ինչ ներկայաբար՝ զոն։ - 65. Ունի ևս երկու կիրառություն։ Որևէ բառարան չի վկայում։

ՆԵՐԿԱՅԱՊԵՍ, մ. Առկայապես։ Ա՛րդ՝ աստուածայինն միտ չորիւք յատկութեամբ տեսանի այսպէս. համանգամայն. ներկայապէս կատարեալ. և անփոփոխ։ - 118. Ունի ևս երեք գործածություն։ Որևէ բառարան չի վկայում։

ՆԻԹԱՊԵՍ, մ. Նյութական։ Եւ այսպէս քարշեալ եղև ի մեզ սկզբնականն մեղք՝ յանհնազանդութենէ՛ հոգոյն և ի ցանկութենէ՛ մարմնոյն. անցեալ ի ծնունդս նորա նիւթապէս ի մարմինս, և տեսակաբար ի հոգիս։ - 776. Գրաբարյան որևէ բառարան չի վկայում։ Վկայում է **ՍՄԴԲԲ**-ն։

16 Մեջբերումը բերում ենք առկա սխալով։

ՆԻԹՕՐԷՆ, մ. Նյութեղեն: Այլ ի մարմինն ցիլթօրեն և սկզբնաբար. իսկ ի հոգին տեսակաբար և իբր նենթակայոջ: - 567. Որևէ բառարան չի վկայում:

ՆԿԱՏԵԼԻ, ա. Նկատվող, դիտարկվող: Վասն զի ի դևն երիս իրս նկատելի է. այսինքն բնութիւնն՝ գործն՝ և մեղքն: - 146. **ՆՂԲ**-ն և **ԱՁԲ**-ն բերում են **ՆԿԱՏԻՉ** ձևը՝ «նայող, դիտող» բացատրությամբ: Գրաբարյան որևէ բառարան չի վկայում: Վկայում է **ՍՄՂԲԲ**-ն:

ՆՇԱՆԱՔԱՐ, գ. Հանգուցյալի հասակը մատնանշող երկու քար: Ձի՞նչ է քար գերեզմանին: ...Նշանաքարն կրկին, Նախ ցուցանէ զհոգի և մարմին բաժանեալ ի միմեանց: Դարձեալ՝ նշանակէ զքանակ հասակի մարմնոյն մեռելոյ: - 679. Հիշատակվող քարերը մինչև օրս էլ կարելի է տեսնել հին բնակավայրերի գերեզմաններում, որոնցով մատանշում են ննջեցյալի տեղը՝ գլխավերևում և ոտքերի տակ: Որևէ բառարան չի վկայում:

ՆՈՒԻՐԵԼԻ, ա. Նվիրելու ենթակա: Երրորդ՝ մեղրն ո՛չ է վաստակ. ի մեր աշխատանա՛ց է նուիրելի աստուծոյ: - 356. Ունի ևս երկու գործածություն: **ՍՄՂԲԲ**-ն բերում է «հին բառ կամ նշանակություն» նշանի տակ:

ՆԱՂԱՂԵԱԼ (ՆԱՂԱՂԵԱ), ա. Միախառնված: Միաւորութիւնն սեռաբար տրամատի յերիս. ի յանշաղկապն և ի շաղկապեալն և ի շաղաղրեալն: - 475. Իսկ շաղաղրեալն միաւորութիւն՝ և սա՛ բաժանի յերիս. այսինքն ըստ դրութեան. ըստ ժողովման. ըստ կոչման: - 476. Որևէ բառարան չի վկայում:

ՆԱՆԱՂԵԱՔ, ա. Շան դենք ունեցող, շնակերպ: Իսկ թէ մարդ լինի շանաղէմք, և այն ո՛չ է ի խառնուածոյ շանց, այլ նշան է հայրենեաց, կամ սպի անձանց: - 267. Բառը հետաքրքրական է այնքանով, որ ժողովրդական խոսքում տարածված «շան երես» (պնդաճակատ, անամոթ իմաստով) արտահայտությունը ի սկզբանե, հավանաբար, ուղիղ իմաստով վերաբերել է մարդկանց, որոնց դենքը շնակերպ է եղել, ինչպես որ սովորաբար տեղի է ունենում փոխաբերական խոսքի հետ. այսինքն «շանաղէմք»-ը և «շան երես»-ը ծագումնաբանորեն կարող են նույն իմաստն ունենալ: **ԼՂԳԲ**-ն հղում է **ՍԳՆԲ**-ին:

ՇԻԿՈՒԹԻՒՆ, գ. Խարտյաշ, շեկ լինելը: Ուստի յա՛յտ է, զի որակ ծնողացն խառնի ի բեղմնաւորիլն. ի դաշտանւոյն զօղի. ի հիւանդութենէ, ի շիկութենէ. որպէս ադամ տրտմութեամբ ծնաւ զորդին կայէն. ցաւած ծնողացն ցաւածին որդի: - 439. Որևէ բառարան չի վկայում:

ՇՐՋԱՊԱՐԵԱԼ (ՇՐՋԱՊԱՐԵԱ), ա. Շրջափակված: Եւ շրջապարեալ

ընդելեաց ի հերատուկ ճիւղաց: - 789. **ՆՅԲ**-ն և **ԱԶԲ**-ն բերում են **ՇՐՁԱ-ՊԱՐՈՒԹԻՒՆ** ձևը՝ «Պարառութիւն», «բոլորտիքը բռնել» բացատրությամբ:

ՈՉԳՈՅՈՒԹԻՒՆ, գ. Անէութիւն, անգոյություն: Զի ապականութիւնն տանի յոչգոյութիւն. իսկ մահն առաջնորդէ՝ ի կեանս: - 497. Զի աճունն զզգայութիւնն զարգացուցանէ. իսկ ապականութիւնն ընդ դէմ մմին զգոյն ի նուազութիւն և յոչգոյութիւն փոփոխէ: - 501. Գրաբարյան բառարանները նույն իմաստով ունեն **ՈՉԵՂՈՒԹԻՒՆ**, **ՈՉԵՈՒԹԻՒՆ** ձևերը: **ՍՍՅԲԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ՈՉԽԱՐԱՆՈՑ, գ. Ոչխարներին պահելու տեղ: Հինգերորդ զգուշանամք, զի մի՛ ոչխարանոց լիցի եկեղեցի և գոմ: - 617. «Գաւառական բառարան»-ը ունի **ՈՉԽԱՐԱՍԵՂ** ձևը: Որևէ բառարան չի վկայում:

ՈՏՆԱԲԵԿ, ա. Ոտքը կտրված, անդամահատ: Քանի՞ են արատք արգելք քահանայութեան: ...Ութերորդ՝ ոտնաքել. յընթացս վարուց: - 370. **ՆՅԲ**-ն ունի «**ՈՏՆԱԲԵԿ**» ձևը՝ «Ոյր բեկեալ է ոտն» բացատրությամբ:

ՈՐԹԱՊԱՇՏ, ա. Հորքը պաշտողներ (կռապաշտության տեսակ): Եւ տե՛ս, զի և զղկի՛ օրհնեաց. վասն զի ապաշխարեաց ի յարեմէ սիկիմացուց ի յարիւն եղբարցն որթապաշտից: - 409. **ՆՅԲ**-ն և **ԱԶԲ**-ն բերում են՝ **ՈՐԹԱ-ԳՈՐԾՈՒԹԻՒՆ**՝ «հորթու ձևով կուռք շինելը» բացատրությամբ: Որևէ բառարան չի վկայում:

ՈՐԿՈՐՍԵԼ, չք. Ագահել, որկրամոլությամբ զբաղվել: Եւ ցանկութեանն են այլքն. զի ցանկայ ագահել. և որկորստել. և պոռնկիլ: - 559. Որևէ բառարան չի վկայում:

ՈՐՈՇԵԼԻ, ա. Ձատելի: Գիտելի՛ է, զի հոմանուն է զօրութիւնն. այսինքն կարութիւնն. և հոմանունն մայր է մոլորութեան. վասն որոյ որոշելի է զնոսա: - 167. Որևէ բառարան չի վկայում: **ՀԱԲ**-ը բերում է **ՂԻԻՐՈՐՈՇԵԼԻ** ձևը:

ՈՒՂԱԿԻՑ, ա. Ուղիին, ճշմարտին կցված, միավորված: Վասն այն յերկարեցի, թէ ոք հակառակի՝ այսպէս պատասխանեսցես նոցա. և զեղկելի անձն իմ յիշեսցես ի տէր ուղակից եղբայր իմ ի քրիստոս: - 511. Որևէ բառարան չի վկայում:

ՈՒՂԱՉԵՒ, ա. Ուղիղ ձև ունեցող, ուղղաձիգ: Հինգերորդ՝ զի մարդն իշխան և տէր է ամենայն կենդանեաց. վասն որոյ ամենայն կենդանիք զլիսակոր են իբրև զծառայ և հնազանդ. և մարդն ուղղաձև իբրև ազատ և

թագաւոր: - 233. Դարձեալ՝ մարդոյս է ուղղած լինիլ որպէս ցուցաւ: - 275. Որևէ բառարան չի վկայում:

ՈՒՐԲԱԹԱԶԵՆ, ա. Ուրբաթ օրը լուծող, պատարագող: Այսինքն է, զազգս քրիստոնէից տեսանէմք զի ո՛չ ըստ անուանն և զմիութիւն կանոնական սահմանի ունել: ...Ասորիք, Առաջինն՝ ուրբաթագեմն: - 553. Այս բառի իմաստային դաշտում մի դեպքում **ՈՒՐԲԱԹԱԼԷԶ**-ի տակ **ՆՅԲ**-ն բերում է ուրբաթը **լուծող** բացատրությունը, **ՈՒՐԲԱԹԱՅՐԲ**-ի տակ **պատարագող** իմաստը, իսկ **ԱԶԲ**-ն բերում է՝ **ՈՒՐԲԱԹԱԼԷԶ** և **ՈՒՐԲԱԹԱԶԵԼ** ձևերը՝ «աւելորդապաշտութիւն մը» անորոշ բացատրությամբ: Բոլոր դեպքերում խոսքը կրօնական մի ծիսակարգի մասին է, որ ուրբաթ օրը արգելված էր անել: Որևէ բառարան չի վկայում:

ՉԱՐԱԽԱՅՏ, մ. ա. Պիսակավոր, բորոտ: Երրորդ՝ ժողովուրդն չարախայտ եղև յեզիպտոս. մինչև արկաւ ի ծոց խնամոցն աստուծոյ և ողջացաւ: - 332. Որևէ բառարան չի վկայում:

ՉԱՐԱԽԱՌՆ, մ. ա. Չար խառնվածքով: Այսմ ասեմ **գ** պատճառ: Կամ ի խառնուածոյ տարերացն՝ չարախառն և բարեխառն գոլ: - 251. Որևէ բառարան չի վկայում:

***ՉԷՁՈՏԲ**, գ. Ոչ կին, ոչ տղամարդ: Ձի էգն, և չեզոտքն, և անկատարն, և անհաւատն, և արիւնահեղն, և կարգաւոր, տքա վեցեքեան ո՛չ կարեն գենուլ զի պիղծ է գենն նոցա: - 365. Եւ չեզոտքն, զի չունի արիւն սերման, ո՛չ հեղցէ զարիւն կենդանոյ: - 365. **ՅԱԲ**-ը վկայում է՝ բերելով այն **ՈՔ** գլխաբառի տակ և ի վերջոյ կապում «չեզոք» իմաստի հետ՝ ընդունելով նաև՝ «**չ-եզ-ոք**» իբր թէ **ոչ-մի-ոք**» բացատրությունը: «Գիրք հարցմանց»-ում բառը հանդիպում է երկու անգամ, հետևաբար, զրչագիր կամ տպագրական սխալ չկա բառում, որի դեպքում չի բացատրվում «տ» հնչյունի ամկայությունը՝ «չեզոք» բառում: Ընդունելով «ոտք»-ն իբրև բարդության բաղադրիչ՝ կունենանք **չեզ+ոտք** բառակապակցությունը (ինչպես՝ խոչ-ընդոտ, չորքոտանի), որ կարող է նշանակել «չեզոք ոտք», այսինքն՝ սեռ չունեցող մարդ: Եթե անգամ եզրահանգումը անսպասելի է, ապա դա կա նաև «չորքոտանի» բառի դեպքում, որտեղ **չորս** և **ոտք** բառերի համադրությամբ ունենք «**կենդանի, անասուն**» իմաստը:

ՉԿԱՍ, ա. Չկանեցող: Է և այլ իմն աննմանութիւն հոգւոյ ըստ իմացմանն. առաւել և նազ. ուշիմ և ապուշ. չկամ և կամեցօղ. հեզ և յանդուգն. ցանկացօղ և ողջախոհ. ըստ բնական բարոյիցն որակացեալ. նման և

անճան գոլով իրերաց: - 237. **ՉԱԲ**-ը դնում է նոր բառերի մեջ: **ՍՄՐԲԲ**-ն բերում է «գաւառական բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ՉՈՐԱՑՈՒՑԻՉ, ա. Ցամաքային, չոր: Այն որ յԱրևելից հնչէ, առ հասարակ Եւրոսք կոչին: Եւ են բարեխառն և չորացուցիչ: - 205. Գրաբարյան որևէ բառարան չի վկայում: Վկայում է **ՍՄՐԲԲ**-ն:

ՊԱՅԵԼԻ, ա. Պահելու ենթակա: Երրորդ՝ զի խորհրդով և ծածուկ է պահելի ի հերձուածողաց և ի հեթանոսաց և յանվարժ մտաց ախմարաց...: - 123. Ունի ևս չորս գործածութիւն: Որևէ բառարան չի վկայում:

ՊԱՏԺԵԼԻ, ա. Պատժելու արժանի, պատժելու ենթակա: Եւ արդ՝ անգիտութեամբն ներելի՛ է. իսկ գիտութեամբն ապաշխարելի. իսկ չարութեամբ մեղքն է պատժելի. կամ աստ ժամանակեայ, կամ անդ յաւիտենական: - 701. Գրաբարյան որևէ բառարան չի վկայում: Վկայում է **ՍՄՐԲԲ**-ն:

ՊԱՏԿԵՐԱՊԵՍ, մ. Պատկերին, նկարագրին համապատասխան: ...ըստ որում որ էջ հոգին սուրբ յորովայն անարատ կուսին և մաքրեաց զնա, և կազմեաց ի նմանէ զարիւնն. և սրբեաց և օծեաց զնա միաւորելով պատկերապէս: - 475. Որևէ բառարան չի վկայում:

ՊԱՏՆԱՌԵԼԻ(Ք), գ. Պատճառվածը, պատճառի հետևանքը: Ամենայն ինչ որ լինի՝ ունի պատճառ. և ամենայն պատճառ ի հարկէ է՝ նախքան զպատճառելին. ապա թէ հարկաւոր պատճառս այս ո՛չ է բանն մեր որպէս ցուցաւ, է՝ ուրեմն զորութիւնն աստեղաց ի շարժմանէ նոցա ազդեցեալ: - 10. Յետ այսորիկ հարցանելի՛ է ի նոր օրինաց և յեկեղեցոյ կարգաւորապէս ընդ մարդեղութեան բանին յարմարեալ. իբր պատճառելիք առ պատճառ նորին հետևեալ և շարադասեալ: - 528. Ունի ևս վեց գործածութիւն: Որևէ բառարան չի վկայում:

ՊԱՏՆԱՄԻՈՐԵԼ, կբ. Արժանի գտնվել, հարմար գալ: Երկրորդ՝ ի կողմանէ ընդունողաց առաքելոցն. զի պատշաճաւորեցան հոգոյն սրբոյ. զի փորձիւ գիտէին զվարդապետութիւնն քրիստոսի, զմահն և զյարութիւնն և զայլն: - 521-522. Որևէ բառարան չի վկայում:

ՊԱՐԱԳՐԵԼԻ, ա. Պարփակող, պարունակող: Նմանապէս՝ անպարագրելի և պարագրելի: - 75. **ժք**) Եւ ո՛չ ասի պարագրելի վասն մարմնոյն. այլ անպարագրելի մարմնովն: - 78. Նոյնպէս տեղիք մարմնոյն պարունակող՝ զմինն պարագրելի, և զմիւսն անպարագրելի: - 87. **ԵՄԲՅ**-ն բերում է

«բովանդակելի» բացատրությամբ: **ՍՄՅԲԲ**-ն բերում է «հազուադեպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ՊԱՐԳԵՌՈՒՄՆ, գ. Շնորհիւմ, վարձատրում: Կամ թէ ոստք փայտիս այտորիկ ասին եօթանքս այտոքիկ. այսինքն՝ քրիստոսի ծնունդն, մկրտութիւնն, չարչարանքն, ի դժոխս իջումն, յարութիւն, յերկինս համբարձումն, և հոգւոյն սրբոյ պարգևումն: - 755. Որևէ բառարան չի վկայում:

ՊԱՐՈՆԱՅԻ, ա. Իշխանավոր, պարոն: Իսկ վրացն Ախալժիլ, որ ստուգաբանի Ախացայ. այսինքն թէ մեծ պարոնացի. Սեթալի. որ է՝ սոնթեցի: - 201. Որևէ բառարան չի վկայում:

ՊՈՂՈՒՄՍ, գ. Պողպատ: Որպէս բան ի ձայն՝ և բան ի գիր՝ և լոյս յօդ՝ և տեսութիւն յակն՝ և հուր յերկաթ՝ և մուխ ի պողուատ: - 769-770. **ՆՅԲ**-ն և **ԱԶԲ**-ն վկայում են **ՊՈՂՈՎԱՍ** ձևը՝ առանց հեղինակային հղման:

ՋՆՋԵԼԻ, ա. Ջնջվող: Եւ այս ևս կրկին է գիր և դպրութիւն. մին անջինջ և յաւիտենից որ առ աստուած. և միւսն ժամանակեայ և ջնջելի որ առ մեզ. գոր մեր գործօք և կամօք գրեմք և ջնջեմք. թէ զչար թէ զբարի: - 481. Եւ միւս գիր է գործօց փոփոխական և ջնջելի ըստ ժամանակիս: - 741. Գրաբարյան որևէ բառարան չի վկայում: Վկայում է **ՍՄՅԲԲ**-ն:

ՋՈՒՐԻ (ՋՈՐՈՋ) (վրաց.), գ. Խաչ: Եւ տէր մեր յերկրի մարդացաւ, և յերկինս թագաւորեաց. իսկ նստիլն ի վերայ ջորոջ, որ է Խաչն. զի վիրք զԽաչն ջուարի կոչեն: - 441. Որևէ բառարան չի վկայում:

ՋՐՕՐԴՆԵՔ, գ. Ջուր օրհնելու կարգ: Իսկ զկանոն ջրօրհնեից՝ սրբոյն բարսղի է արարեալ յեօթն ամի հայրապետութեան իւրոյ յերուսաղէմ. զի անդ հանդիպեցաւ: - 658. **ՂԱՄԲ**-ն հղում է Խաչատուր Կեչառեցուն՝ բերելով նրա «Այլ տաղ ծննդի և ջրօրհնեաց» վկայությունը: Ինչպէս տեսնում ենք Տաթևացին խոսում է **ՋՐՕՐԴՆԵՔ**-ի կարգի մասին:

ՍԱՌՈՒՅՈՒՄՆ, գ. Սառնանալը, սառնությունը: Չորրորդ՝ զի ջերմ է արտասուքն և գսառուցումն հալէ և ջերմացուցանէ զտերն: - 619. Գրաբարյան որևէ բառարան չի վկայում: Վկայում է **ՍՄՅԲԲ**-ն:

ՍԱՍԿԱՍԱՐՍՈՒՆ, ա. Սարսափելի, ահեղ: Ոչ ինչ ընդհատ բերելով ի մեզ զօրինակ մեծի սաստկասարսուռն ատենի: - 788. **ՂԱՄԲ**-ն բերում է **ԺԴ** դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարանների **ՍԱՍԿԱՍԱՐՍՈՒՐ** ձևը, սակայն ճիշտ է Գրիգոր Տաթևացու **ՍԱՍԿԱՍԱՐՍՈՒՐՆ** վկայությունը, քանի որ իբրև գործածություն **ՂԱՄԲ**-ն նույնությամբ բերում է **ԳՏԳԴ**-ի «Ոչ ինչ

ընդհատ բերելով ի մեզ զօրինակ մեծի սաստկասարսուռն ատենի» հատվածը, այսինքն՝ աղբյուրը Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի հիշատակարանն է:

ՍԵՐՄՆՕՐՅՆԷՔ, գ. Կալի, հնձանի, սերմի օրհնության կարգ: Ի բ ամի թագաւորութեանն, առաքեաց սուրբն իսահակ և ետ բերել գւեթմնօրհնէքն զկալոյ և զհնձանին: - 658. Որևէ բառարան չի վկայում:

ՍԵԿԱՍՈՐԹ, ա. Սև մորթ, մաշկ ունեցող: Սևամորթն՝ զխորամանկն յայտնէ: - 247. Որևէ բառարան չի վկայում: **ՅԱԲ**-ը բերում է նոր բառերի մեջ:

ՍԻՊԱՃԵՄ, ա. Հայարտ քայլող, սիգաքայլ: Եւ դարձեալ՝ ըստ սողոմոնի **գ** են սիգաճեմք. առիւժ՝ և նոխազ՝ և արաղաղ: - 54. Որևէ բառարան չի վկայում:

***ՍԻՍՔՈՒՅՏ**, Անստույգ բառ: Եւ այլքն պղինձ արծաթապատ. որպէս սիմքուֆտ, և կամ ոսկի: - 343. Որևէ բառարան չի վկայում:

ՍԿՁԲՆԱՊԵՍ, չբ. Նախապես, ի սկզբանէ: Ջի մեղքն ադամայ թէպէտ սկզբնապէս առհասարակ բնութիւնս տարածեցաւ. այլ ո՛չ առաւել քան զայլոցն եղև. այսինքն որդւոցն նորա: - 777. Գրաբարյան որևէ բառարան չի վկայում: Վկայում է **ՍՄՅԲԲ**-ն:

ՍԿՁԲՆԱԴՈՐՈՒԹԻՒՆ, գ. Սկիզբ, ծագում: Նախ՝ զի արարածոց սկզբնաւորութիւն ի նմա՝ եղև: - 196. Գրաբարյան որևէ բառարան չի վկայում: Վկայում է **ՍՄՅԲԲ**-ն:

ՍՆՔՆՈՏ, ա. Որքինով, կեղով վարակված: Վեցերորդ՝ երջունոտն. սնքնոտն. անբուժն է: - 371. **ՂԱՄՅԲ**-ն բերում է **ՍՆՔՆՈՏ** ձևը՝ հղելով **ԵՄԲՅ**-ին: Հատկանշական է, որ «Հայերէն արմատական բառարան»-ում այս բառը տեղ է գտել բացառապէս Գրիգոր Տաթևացու բառագործածության հիման վրա. հայագետը նաև համոզմունք է հայտնում, որ «բառը գործածական էր ժամանակակից լեզուի մէջ» (**ՅԱԲ**, հ. **Դ, Ե**, 1979, էջ 238): **ՍՄՅԲԲ**-ն վկայում է և՛ **ՍՆՔՆՈՏ** ձևը, և՛ **ՍՆՔՆՈՏ**-ը:

ՍՐԲԵԼԻ, ա. Սաքրելու, սրբագործելու ենթակա: Նոյնպէս զսուրբ կերակուրն դարձեալ սրբելի է ամուսնքն աստուծոյ: - 654. Որևէ բառարան չի վկայում:

ՍՐՏԱՍՏՕՂ, ա. Հախուռն, գայրացկոտ: Չորրորդ՝ զի խրոխտ է և սրտամտոյ: - 315. Որևէ բառարան չի վկայում:

ՎԱՅՐԱԲԱՆԵԼ, նր. Ջրպարտել, չարախոսել: Իսկ ներելին թպտո որոշի
յերիս տեսակս ըստ մեծութեան և նւաղութեան. այլ մանրամասնաբար
յանթիւս ելանէ. որպէս ծիծաղիլ. վայրաբանել. և այլն: - 568. Որևէ բառարան
չի վկայում:

ՎԱՏԱՐԱՄԱԲ, ա. Վատ համբավ ունեցող: Չորրորդ՝ զի մի՛ վատահամբավ
լիցի ընդ ծնանիլն իբր ոչ ունելով այր: - 461. **ՅԱԲ**-ը բերում է նոր բառերի մեջ:

ՎԱՐՉԱՏՐԵԼԻ, ա. Հատուցելու ենթակա: Ա՛րդ՝ եթէ ի կատարածի ի հարկէ
սքանչելեացն հաւատալ վարձատրելի՞ է թէ ոչ: - 783. Ունի ևս հինգ գործա-
ծություն: Որևէ բառարան չի վկայում:

ՎԱՐՉԱԻՈՐԵԼԻ, ա. Վարձատրության, հատուցման արժանի: Որք
դարձուցեն զսիրտ հարց յորդիս ըստ մաղաքիայի. այսինքն ուսուցանեն
զհաւատն փրկչին զոր հարքն ունէին. և է՛ վարձաւորելի և կարի քաջ. և թէ
այսպէս և թէ այն՝ քրիստոս քարոզի: - 785. Որևէ բառարան չի վկայում:

ՎԵՐՅԱՅԵՑՈՒՄՆ, գ. Վերադիտումն: Անունք Նախահարցն: ...Յարեդ՝
վերհայեցումն աստուծոյ: - 299. Որևէ բառարան չի վկայում:

ՎԵՐՋՆԹԱՅ, ա. Հետին, վերջից ընթացող: Նախընթաց, համընթաց,
վերջընթաց: - 731. Եւ վերջընթացն է հրեղէն ծովն ի հարաւ. ուր առաքէ՛
զմեղաւորս ի հուրն յաւիտենից: - 731. Որևէ բառարան չի վկայում:

ՎԵՐ

- **ՎԵՐ ՔԱՐՇԵՄ**, նր. Վեր ձգել: Այլ Ամպն լինի, յորժամ զօրութեամբ արե-
գականն ի վեր քարշին գոլորշիքն ի ջուրց և ի գէշ տեղեաց: - 204. Եւ զի
քարշեն լուսաւորք զգոլորշին յերկրէ՛ յայտ է ի ցօղ առաւօտուն և յեղեամն.
որ ի գիշերն ի վեր քարշին. և ընդ ծագել լուսոյն հատանին և յետս յերկիր ան-
կանին. և յաւուրս ծմերան լինի եղեամն. և յամարան ցօղ: - 208. **ՂԱՄՅԲ**-ն
«վեր» բաղադրիչով վկայում է **ՎԵՐ ԲԵՐԵՄ**, **ՎԵՐ ՉԳԵՄ**, **ՎԵՐ ԸՆԿՆԵՄ** և այլն:

ՎԵՑԱՄԱՏՆ, ա. Վեցմատնյա, վեց մատ ունեցող: Երկրորդ՝ ուղղեսցին
աւելիքն ի չափն. որպէս աւելո՛րդ եղունգաց հերաց և վեցամատնից և
այլոցն. որք չափաւորին: - 725. Որևէ բառարան չի վկայում:

ՎԿԱՅ

- **ՎԿԱՅ ԲԵՐԵԼ**, նր. Վկայաբերել, վկայակոչել: Ոմանք թուզ ասեն. թէ ի
նոյն ժամն որ կերաւ և մերկացաւ՝ և կարեաց ի տերևոյ նորա. և վկայ բերեն
թէ՛ վասն այն անէծ զթգենին յերուսաղէմ: - 224. Որպէս արիոս վկայ բերելով
«ո՞ ել յերկինս և իջոյց զքրիստոս». և թէ՛ «հայր սրբեաց և առաքեաց»: - 475.
ՂԱՄՅԲ-ն բերում է **ՎԿԱՅ ԲՈՆԵԼ** ձևը:

ՏԱՐԱԿՈՒՄԵԼԻ, ա. Երկբայելի, վարանելի: Տարակուսելի է առ այս, զի թէ հարկ է որոց բնութիւնքն մի գոլ՝ նոցա և կամքն և ներգործութիւնն մի լինիլ. ընդէ՞ր ապա զի մարդկային բնութիւնս մի է և նոյն հօրն և որդւոյն՝ և ո՛չ է կամքն և գործքն մի: - 45. Գրաբարյան որևէ բառարան չի վկայում: **ՍՄՅԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ՏԱՐԱԶԱՓՈՒԹԻՒՆ, գ. Տարբեր չափ ունեցող: Ո՛չ ըստ տարաչափութեան քանակի ասեմք. այլ ըստ ամենազօր կարողութեան և անչափ անհասութեան ասեմք գնա մեծ: - 171. Որևէ բառարան չի վկայում:

ՏԵՍԱԿԱՒՈՐԵՄ, նբ. Առանձնանալ, գանազանվել: Եւ այն ևս սքանչելիք, որ ի փոքրագոյն մարմինն ընկալեալ եղև հոգի բանական, և տեսակաւորեալ որպէս քառասնօրեայ մանուկ յարգանդի: - 470. Ասի և մէջ. զի տեսակաւորէ՛ զգործս: - 575. Չորրորդ, հեղմամբ շնորհաց. ըստ այնմ «մարմին և արիւն ո՛չ յայտնեաց, այլ հայրն իմ». և է այս տեսակաւորեալ հաւատ: - 784-785. Որևէ բառարան չի վկայում:

***ՏՄՈՐԻՍ** - Տեղանո՞ւն: Ծաղիկ զմռնեաց. նմանէ պոյտն ծաղկի. և Կինամոն. արմատ է խոտոյ ի տմորիս հայոց. և հսկելդէզն. որ յարմատս ո՛չ ամենայն եղեգան լինի. և Հիրիկ. խէժ է ծառոց: - 349.

ՏՆՕՐՅԱԷ, գ. Տան օրհնութեան կարգ: Այսպէս և ի տնօրհնէքն ընծայք խաչին և աւետարանին որ ի նոցա տունն մտանէ: - 684. «Գաւառական»-ը գործածական է համարում՝ Այնթապ, Աստրախան, Ղարաբաղ, Նախիջևան բարբառների համար: **ՂԱՄՅԲ**-ն հղում է Մարտիրոս Ղրիմեցու «Բանաստեղծութիւններ»-ին: **ԼՂԳԲ**-ն հղում է **ՍԳՆԲ**-ին:

ՏՐԵԱԼ, ա. Ապականյալ: Եւ **բժան** արատ պատարագին: ...Մետասաներորդ՝ մալեալն, տրեալն. պական արիութեամբ: - 371. **ԵՄԲՅ**-ն բերում է **ՏՐԱԳՈՐԾԵԼ** ձևը՝ «ապականել» բացատրությամբ: Հետաքրքիր է, որ բառը **ՏՈՒԻՉ** «իզացող» իմաստով «Գաւառական»-ը բերում է Պոլսի բարբառի համար:

ՏՆՈՐՈՒԹԻՒՆ, գ. Ցնդածություն: Եթէ ի խելս և ի խորհուրդ ցնորութիւնք և զայրուք ուռուցանիցեն խխաթեալք. բժշկեսցիս հաւատով. ըստ մարգարէին հիացեալ՝ ստուերս և ունայնս դնելով զամենայն անցաւորս: - 770. Որևէ բառարան չի վկայում:

ՓՈՒՆԱԿՑԻՄ, նբ. Համադրել: Երրորդն է նշանական աստուածաբանութիւն. որ ի զգալի կերպարանաց փոխակցիմք յիմանալի տեսութիւնն. թէ զի՞նչ նշանակէ մարդ երևելին. կամ առիծ. գառն. հուր. լոյս. և այլն: - 122. Որևէ բառարան չի վկայում:

ՓՈՒՍԱՆՑԱՊԵՍ, մ. Համենատելու, փոխանցելու միջոցով: Չորրորդ՝ հոգին փոխանցապես իմանայ և յարացուցիւ. իսկ հրեշտակն զնախատիպն առանց յարացուցի: - 141. Զի յայսմ կենցաղոյս զուգաւորին յիշելն երբեմն և մոռանալ զներքոյս և զարտաքոյս. ըստ որում փոխանցապես ունիմք զերից ժամանակաց գիտութիւն: - 774. Որևէ բառարան չի վկայում:

ՓՈՒՍԱՏՐԱՊԵՍ, մ. Փոխադրելու, փոխատեղելու միջոցով: Ո՛չ փոխարկապէս, այլ փոխատրապէս. այսինքն զի ի միաւորութեանն եկաց մնաց որ ինչ էրն, և եղև որ ինչ ո՛չն էր: - 75. Երկրորդ՝ ասել զնոյն աստուածն մարդ. զնոյն մարդն աստուած. ո՛չ փոխարկապէս, այլ փոխատրապէս: - 77. Որևէ բառարան չի վկայում:

ՓՈՒԹԱՆՑԻԿ, ա. Արագ անցնող: Եւ այս ո՛չ միայն փութանցիկ գոլոյ վասն, կամ ներհակաբար հատուցման որպէս սովորութիւն է. այլ զի ո՛չ ինչ կարեն տանիլ ընդ ինքեանս. բայց միայն նշխարիս ինչ յիշատակութեան ուրուական տեսլեան: - 775. Որևէ բառարան չի վկայում: **ՍՄՅԲԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

ՓՈՔՐՈՒՆԵԼՔ, ա. Ոչ խելացի: Ճակատն նեղ՝ շատակո՛ւլ է: Իսկ լայնն՝ փոքրախելք: - 246. Որևէ բառարան չի վկայում: **ՍՄՅԲԲ**-ն բերում է «հազուադէպ բառ կամ նշանակութիւն» նշանի տակ:

***ՓՕՍՏԱԶԻՍ** - Անստույգ բառ, որ բերվում է ուրիշի ուղղակի խոսքում. Եւ այլ՝ «հաւատն է սկիզբն հոգևոր կենաց»: Եւ դամասկացին ասէ՝ «ի փօստագիս իրացն որ ո՛չ երևի յանդիմանութիւն»: - 571.

ՔՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, գ. Քնել սիրելը, ծուլություն: Թէ ի բերան պատերազմի յել անմահին և ի մուտ մահկանացուին. դիցես պահապան բերանոյդ. լար կարմիր շոթանցդ. այսինքն հաւատով սիրով զօրացեալ. և ո՛չ բաժանիլ ի քնասիրութիւն և յարծաթսիրութիւն. յառաքինասիրութիւն. և յախտասիրութիւն. յընկերսիրութիւն և յարատսիրութիւն: - 770-771. Որևէ բառարան չի վկայում:

ՔՈՒԷՆՅԵԱԼ (ՔՈՒԷՆԱՍ), ա. Խորանարդի ձև ստացած, խորանարդածն դարձած: Եւ կամ աննիւթ ինչ և անկերպ՝ ընդ միւսական կերպարանաց ձևացեալ. յորում իւրաքանչիւրոցն էութիւնք անշփոթաբար երևին. որպէս պղինձ զնդացեալ. կամ քուէացեալ: - 476. Որևէ բառարան չի վկայում:

Համառոտագրություններ

1. ԱԶԲ - Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865:
2. ԳԲ - Ռ. Ս. Ղազարյան, Գրաբարի բառարան, Երևան, 2000:
3. ԳՀԲ - Ռ. Ս. Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան, Երևան, 2006:
4. ԳՏԳԶԱ - Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամարան հատոր, Կ. Պոլիս, 1741:
5. ԳՏԳԶԶ - Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Չմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740:
6. ԳՏԳՀ - Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց. Կ. Պոլիս, 1729:
7. ԵՄԲՀ - Ե. Մեղրեցի, Բառգիրք հայոց, Երևան, 1975:
8. ԼՅԳԲ - Լ. Շ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան, Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010:
9. ՀԱԲ - Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1-4, Երևան, 1971 - 79:
10. ՀԳԲ - Հ. Աճառյան, Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913:
11. ՂԱՄՀԲ - Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հ. Ա, Երևան, 1987:
12. ՂԱՄՀԲ - Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հ. Բ, Երևան, 1992:
13. ՂԱՄՀԲ - Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Երևան, 2009:
14. ՆՀԲ - Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 1-2, Երևան, 1979-81:
15. ՍԳՆԲ - Ս. Գրիգորյան, Նորահայտ բառեր 14-15-րդ դարերի մատենագրության մեջ /Գրիգոր Տաթևացի/, Երևան, 2009:
16. ՍՄՀԲԲ - Ս. Սալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 1-4, Երևան, 1944-45:

Այլ

ա. - ածական

արաբ. - արաբերեն

բ. - բայ

գ. - գոյական

թ. - թվական

լատ. - լատիներեն

կբ. - կրավորական սեռի բայ

հուն. - հունարեն

մ. - մակբայ

նբ. - ներգործական սեռի բայ

չբ. - չեզոք սեռի բայ

պբ. - պատճառական սեռի բայ

պրսկ. - պարսկերեն

վրաց. - վրացերեն

Գրականության ցանկ

1. Աճառյան Յ., Հայերեն արձատական բառարան, հ. 1- 4, Երևան, 1971 - 79:
2. Աճառյան Յ., Հայերեն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913:
3. Աճառյան Յ., Հայերեն նոր բառեր հին մատենագրութեան մեջ, հ. Ա, Բ, Վեներտիկ, 1913, 1926:
4. Աճառյան Յ., Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951:
5. Աւգերեան Յ. Ս., Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Վեներտիկ, 1865:
6. Աւետիքեան Յ. Գ., Սիրմէլեան Յ. Խ., Աւգերեան Յ. Ս., Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 1-2, Երևան, 1979-81:
7. Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամարան հատոր, Կ. Պոլիս, 1741:
8. Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Չմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740:
9. Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց. Կ. Պոլիս, 1729:
10. Գրիգոր Տաթևացի, Համաբարբառ «Գիրք հարցմանց»-ի (աշխատասիրությանը Ս. Ս. Գրիգորյանի), հ.հ. Ա, Բ, Գ, Դ, Երևան, 2011-2013:
11. Գրիգորյան Ս. Ս., Նորահայտ բառեր 14-15-րդ դարերի մատենագրության մեջ /Գրիգոր Տաթևացի/, Երևան, 2009:
12. Հովհաննիսյան Լ. Շ., Գրաբարի բառարան, Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Երևան, 2010:
13. Ղազարյան Ռ. Ս., Գրաբարի բառարան, Երևան, 2000:
14. Ղազարյան Ռ. Ս., Գրաբարի հոմանիշների բառարան, Երևան, 2006:
15. Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Յ. Ս., Միջին հայերենի բառարան, հ. Ա, Երևան, 1987:
16. Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Յ. Ս., Միջին հայերենի բառարան, հ. Բ, Երևան, 1992:
17. Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Յ. Ս., Միջին հայերենի բառարան, Երևան, 2009:
18. Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. 1-4, Երևան, 1944-45:
19. Մեղրեցի Ե., Բառգիրք հայոց, Երևան, 1975:

20. Նոր բառգիրք հայկազեան լեզուի սրբագրուած եւ ճոխացուած Ն. Բիւզանդացու ձեռքով. հրատարակութեան պատրաստեց Մարտիրոս Մինասեանը, ժնեւ, 1990:
21. Օրմանեան Ա., Ծիսական բառարան, Երևան, 1992:

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱԿԱՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»-Ի
ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՌԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Համակարգչային ձևավորումը և մակետավորումը
Էմմա Մելքունյանի
Սրբագրիչ՝ **Գայանե Դերձակյան**

Չափսը՝ 60 x 84 ¹/₁₆, 4,75 տպագրական մամուլ:
Հրատ. պատվեր 512, տպ. 400 օրինակ
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: